

ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2017/2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ – 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	5
Կրթական գործունեություն	7
Գիտահետազոտական գործունեություն	36
Գիտական գրադարան	45
Հրատարակչական գործունեություն	47
Միջազգային համագործակցություն	53
Հանրային կապեր և տեղեկատվական համակարգեր	58
Աշխատանք ուսանողների և շրջանավարտների հետ	66
Մոցիալական քաղաքականություն	84
Տնտեսական գործունեություն	88
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ	90
Հավելված	101

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանը շուտով կբոլորի հիմնադրման 100-ամյակը: Պատմական նշանակալից այդ իրադարձության առիթով ԵՊՀ ռեկտորի հրամանով ստեղծվել է հոբելյանին նվիրված միջոցառումները համակարգող հանձնաժողով, հաստատվել է այդ միջոցառումների ծրագիրը, որն անընդհատ հարստացվում ու բազմաբովանդակ է դառնում: Ծրագրի շրջանակներում իրականացվել ու շարունակում են իրականացվել ուսումնական, գիտական, մշակութային ու մարզական բազմաթիվ միջոցառումներ: Մասնավորապես՝ կազմակերպվել են տեղական և միջազգային մակարդակի գիտաժողովներ, կոնֆերանսներ, սեմինարներ, հանդիպումներ, այցելություններ, նաև տնտեսական բնույթի աշխատանքներ և այլն:

2017/2018 ուսումնական տարում համալսարանի գործունեությունը բոլոր բնագավառներում իրականացվել է ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրին (ՌԾ) համապատասխան: Ըստ ժամանակացույց-պլանի՝ ՌԾ-ով նախատեսված բոլոր 9 նպատակների իրագործմանը միտված խնդիրների ուղղությամբ կատարվել են որոշակի աշխատանքներ:

Արդյունավետ աշխատանքներ են իրականացվել ուսումնական գործընթացի բարելավման, ուսուցման տեխնոլոգիական հենքի կատարելագործման, կրթության բովանդակության հարստացման, կրթական ծրագրերի լրամշակման և նորացման, միջազգային չափանիշներին դրանց համապատասխանեցման, դասավանդման որակի բարձրացման և մեթոդների արդիականացման և այլ ուղղություններով:

Կատարվել են գիտահետազոտական բնույթի ծավալուն աշխատանքներ, համալսարանականներն ակտիվորեն մասնակցել են տարբեր նախագծերի, դրամաշնորհային ծրագրերի, իրականացրել արժեքավոր ուսումնասիրություններ: Կազմակերպվել և անցկացվել են ֆակուլտետային, համահամալսարանական և միջազգային գիտաժողովներ, կոնֆերանսներ, գիտագործնական սեմինարներ ու քննարկումներ, որոնց մասնակցել են նաև բազմաթիվ ուսանողներ և ասպիրանտներ:

Զգալի աշխատանք է կատարվել միջազգային կապերի բնագավառում: Ընդլայնվել է ԵՊՀ համագործակցությունը արտերկրի գիտակրթական ու մշակութային կենտրոնների հետ, կնքվել են մի շարք նոր պայմանագրեր, վերակնքվել ու շարունակվել

են նախկինները, համատեղ կազմակերպվել են տարբեր միջոցառումներ, իրականացվել են դասախոսների և ուսանողների փոխանակություններ, փոխայցելություններ և այլն:

Շարունակվել են գործընթացները հրատարակչական ոլորտում. հրատարակվել են տասնյակ գրքեր, ձեռնարկներ, մենագրություններ, ուղեցույցներ, անխախտ պարբերականությամբ լույս են տեսել համալսարանական պարբերականներն ու հանդեսները:

Մայր բուհի գիտաուսումնական գործունեությանը տեղեկատվական և այլ գործառնություններով օժանդակելու իր գործունեությունն է շարունակել գիտական գրադարանը:

Ուշադրության կենտրոնում է եղել համալսարանականների սոցիալական վիճակի բարելավման խնդիրը: Այդ ուղղությամբ իրականացվել են հետևողական աշխատանքներ, կյանքի կոչվել մի շարք ծրագրեր:

Ծավալուն աշխատանքներ են իրականացվել տնտեսական և ենթակառուցվածքների զարգացման ոլորտում: Իրականացվել են բարեկարգման ու վերանորոգման տարաբնույթ աշխատանքներ, բարելավվել է ներքին տեղեկատվական ցանցի գործունեությունը, ձեռք են բերվել ժամանակակից սարքավորումներ և այլն:

Նշված բոլոր գործընթացներին ակտիվորեն մասնակցել են ուսանողական կառույցները:

Հաշվետու ժամանակաշրջանում արդյունավետ գործունեություն է ծավալել նաև ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը:

* * *

Ստորև հանգամանորեն ներկայացվում է Երևանի պետական համալսարանի 2017/2018 ուսումնական տարվա գործունեությունը՝ ըստ ոլորտների:

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2017/2018 ուսումնական տարում համալսարանում կրթական գործընթացը միտված է եղել ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված համապատասխան նպատակների ու խնդիրների իրականացմանը: Ծավալուն աշխատանք է կատարվել ծրագրային բարեփոխումների, ուսումնական գործընթացի կազմակերպման ու պլանավորման կատարելագործման, կրթության որակի ապահովման, այն միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում համալսարանի ուսումնական կրթական գործունեությունը իրականացվել է հետևյալ հիմնական ուղղություններով.

1. Որակի ապահովում

ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի «Որակյալ կրթություն» նպատակով սահմանված է. «Տրամադրել աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ բարձրորակ կրթական ծրագրեր՝ միտված շրջանավարտների աշխատանքային գործունակության բարելավմանը, բարձրացնել ուսանողների բավարարվածության մակարդակը ԵՊՀ-ում ստացած կրթությունից»: Այս նպատակի մի շարք խնդիրների կատարման ուղղությամբ հաշվետու ժամանակահատվածում ձեռնարկվել և իրականացվել են համապատասխան գործողություններ: Մասնավորապես՝ հետևողական աշխատանքներ են տարվել բակալավրի կրթական ծրագրերը որակավորումների ազգային շրջանակին և միջազգային առարկայական հենանիշերին (բենչմարք) համապատասխան վերամշակելու ուղղությամբ: Գործընթացը կազմակերպվել և իրականացվել է համաձայն «ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրերի վերամշակման վերաբերյալ» ԵՊՀ ռեկտորի հրամանի (2017 թ. հոկտեմբերի 4-ի թիվ 172§13) և հաստատված ժամանակացույցի: Համալսարանում բակալավրի կրթական ծրագիր իրականացնող բոլոր ստորաբաժանումների հետ աշխատանքները համակարգել է ԵՊՀ որակի ապահովման կենտրոնը (ՈԱԿ): Սահմանված ժամկետում և համապատասխան չափանիշներով կրթական ծրագրերի մշակմանն ուղղված աշխատանքների արդյունավետության նպատակով ՈԱԿ-ն անհրաժեշտ բոլոր փաստա-

թղթերի փաթեթը էլեկտրոնային փոստով տրամադրել է նշված ստորաբաժանումներին:

Ծրագրերի լրամշակմանն ուղղված աշխատանքներն ընթացել են մի քանի փուլով: Նախ՝ յուրաքանչյուր ծրագրի լրամշակման համար ստեղծվել է աշխատանքային խումբ, որը մշակել է տվյալ կրթական ծրագրի ստեղծման առաջարկի հայտը, որը ֆակուլտետի ԳԽ-ի կողմից հաստատվելուց հետո ներկայացվել է Որակի ապահովման կենտրոն՝ հայտի գնահատման և ծրագրի հետագա մշակումն արտոնելու համար: Այնուհետև՝ աշխատանքային խմբերը, ՈԱ կենտրոնի աշխատակիցների պարբերական խորհրդատվությամբ, սահմանված ժամկետներում իրականացրել են նախատեսված գործընթացները, որոնց արդյունքում ստեղծվել են հստակ ձևաչափերով և գործող պահանջներին համապատասխան կրթական ծրագրերի ամբողջական փաստաթղթային փաթեթները: Գործընթացի հաջորդ փուլում ծրագրերի փաթեթները ՈԱԿ-ի կողմից ստուգվելուց հետո տրամադրվել են փորձաքննական հանձնաժողովներին, որոնք անցկացրել են փորձաքննություն և համապատասխան եզրակացությունը ներկայացրել ՈԱ կենտրոն: Այնուհետև՝ փորձաքննության և ՈԱԿ-ի եզրակացությունները ներկայացվել են ԵՊՀ ԳԽ որակի ապահովման մշտական հանձնաժողով՝ վերջնական եզրակացության համար: Գործընթացի ամփոփիչ փուլում լրամշակված կրթական ծրագրերի վերաբերյալ վերջնական եզրակացությունների հիման վրա ԵՊՀ գիտական խորհուրդը 2018 թ. մայիսի 3-ի նիստի թիվ 6/3 որոշմամբ հաստատել է առկա ուսուցման 53 բակալավրի կրթական ծրագիր: Եվս 17 կրթական ծրագիր հաստատվել է հեռակա ուսուցման համար:

Հաշվետու ուստարում ավարտվել են «Երևանի պետական համալսարանում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգի» մշակմանն ուղղությամբ տարվող աշխատանքները: Կարգի նախագիծը քննարկվել է ֆակուլտետներում, կրթական կենտրոններում և ինստիտուտներում, այնուհետև ստացված առաջարկությունների հիման վրա արված համապատասխան փոփոխություններով ներկայացվել է ԵՊՀ գիտական խորհրդի հաստատմանը (հաստատվել է Գիտխորհրդի 2017 թ. հոկտեմբերի 12-ի նիստում): Կարգում հանգամանորեն ներկայացված են ԵՊՀ առկա և հեռակա ուսուցման համակարգերի բակալավրի ավարտական աշխատանքին ներկայացվող պահանջները, այդ աշխատանքի օրինակելի կառուց-

վածքը, պատրաստման և ձևավորման պահանջները, պատրաստման և պաշտպանության ժամանակացույցը, գնահատման չափանիշները, չափորոշիչները և հատկացվող միավորները, գնահատման արդյունքների բողոքարկման մեխանիզմը և այլ գործընթացների նկարագրությունը: Կարգին կից հավելվածներում ներկայացված են բակալավրի ավարտական աշխատանքի տիտղոսաթերթի և հաջորդող էջի ձևաչափերը, գրախոսի կարծիքի օրինակելի ձևաթերթը:

Անցած ուսումնական տարում ՈԱ կենտրոնը կազմել և հրատարակել է վերջին տարիներին տարբեր աշխատանքային խմբերի կողմից մշակված կամ լրամշակված և ԵՊՀ գիտական խորհրդի կողմից հաստատված ու գործող մի շարք կարգերի՝ «Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացը կարգավորող փաստաթղթեր» փաթեթ-ժողովածուն: Այն նախատեսված է ԵՊՀ վարչական ու դասախոսական կազմերի և ուսանողների համար: Ժողովածուն բաղկացած է չորս բաժնից և հավելվածներից: Առաջին բաժնում գետեղված է ԵՊՀ «Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը», որում սահմանված են Երևանի պետական համալսարանում առկա և հեռակա ուսուցման բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կանոնները: 2-րդ՝ «Բակալավրի կրթական ծրագիր» բաժնում ներառված են «Երևանի պետական համալսարանի բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» և «Երևանի պետական համալսարանում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգը» փաստաթղթերը: Ժողովածուի 3-րդ՝ «Մագիստրոսի կրթական ծրագիր» բաժնում ընդգրկված են «Երևանի պետական համալսարանի մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» և «Երևանի պետական համալսարանում մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգը» փաստաթղթերը: 4-րդ բաժնում ներկայացված է «Երևանի պետական համալսարանի ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգը»: «Հավելվածներ» բաժնում ներկայացված են ԵՊՀ առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերի ուսումնական պլանների օրինակելի ձևաթերթերը: Ժողովածուի ընդարձակ նախաբանում ամփոփ տեղեկացվում է նշված բոլոր փաստաթղթերի կառուցվածքի և բովանդակության մասին:

Լրամշակվել են առկա և հեռակա ուսուցման համակարգերի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով սովորող ուսանողների համար նախատեսված «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք» տեղեկատվական ձեռնարկները, որոնք տեղադրվել են ԵՊՀ կայքէջում:

Տպագրվել են համաեվրոպական ձևաչափի դիպլոմի հավելվածները առկա և հեռակա ուսուցման բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողների համար:

Համալսարանի կրթական գործունեության հիմնական ուղղություններից է դասավանդման և ուսումնառության գործընթացների շարունակական բարելավումը: Այդ նպատակով նախորդ ուսումնական տարում մշակվել և Եվրահանձնաժողովին էր ներկայացվել «Փոփոխություն լսարանում. Նորարարական դասավանդման և ուսումնառության օժանդակում՝ Արևելյան գործընկերության երկրներում ուսանողի ուսումնական փորձառության բարելավման նպատակով» (PRINTeL) նախագիծը, որն արդեն իսկ հաստատվել է և ստացել համապատասխան ֆինանսավորում: ERASMUS+ PRINTeL նախագիծը մեկնարկել է 2018 թ. հունվարից: Նախագծում ներգրավված են եվրոպական և արևելյան գործընկերության մի շարք համալսարաններ: Եվրոպական համալսարաններն են՝ Լյովենի կաթոլիկ համալսարանը, Բարսելոնայի և Պորտոյի համալսարանները, Լինշոպինգի և Գրացի Կիրառական գիտությունների FHJ համալսարանները: Արևելյան գործընկերության երկրներից ներգրավված են՝ Երևանի պետական համալսարանը, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական և Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարանները (Հայաստան), Իլիայի պետական, Վրաստանի տեխնիկական և Թելավիի Յակոբ Գոգեբաշվիլիի պետական համալսարանները (Վրաստան), Բելառուսի պետական, Բրեստի պետական տեխնիկական և Գրոդնոյի Յանկա Կուպալայի պետական համալսարանները (Բելառուս):

Նախագիծը նպատակաուղղված է բարձրագույն կրթության հիմնական մարտահրավերներից մեկի լուծմանը, այն է՝ դասավանդման և ուսումնառության մեթոդների զարգացմանը և նորարարությանը, ինչպես նաև դասավանդման գործընթացում նոր տեխնոլոգիաների ներդրմանը:

Նշված նպատակին հասնելու համար PRINTeL նախագծի աշխատանքային պլանով նախատեսված են մի շարք վերապատրաստումներ եվրոպական գործընկեր

համալսարաններում, որոնք նպատակաուղղված են Հայաստանի, Վրաստանի և Բելառուսի վերոնշյալ գործընկեր բուհերի դասախոսների վերապատրաստման կենտրոնների և, ընդհանուր առմամբ, դասախոսների մասնագիտական և ժամանակակից տեխնոլոգիական միջոցներին տիրապետելու կարողությունների և հմտությունների զարգացմանը, ինչպես նաև նշված կենտրոնների գործունեության վերակազմակերպմանը:

Այս շարքի վերապատրաստումներից առաջինը ճանաչողական այցը և տեղեկատվական սեմինարն էր Բարսելոնայի համալսարանում (հունիսի 11-12, 2018 թ.), որին հաջորդեց աշխատաժողով-վերապատրաստումը Պորտոյի համալսարանում (հունիսի 14-15), որոնց մասնակցում էին արևելյան գործընկեր բուհերի համալսարանների շուրջ 35 ներկայացուցիչներ:

Գործընկեր բուհերի դասախոսների դասավանդման կարիքները վերհանելու նպատակով ԵՊՀ-ի կողմից մշակվեց և համապատասխան համալսարաններին տրամադրվեց «Կարիքների վերլուծության զեկույցի» ձևաչափը: Այս ձևաչափի հիման վրա վերոնշյալ 9 գործընկեր բուհերում իրականացվեցին հարցումներ, որոնց արդյունքների հիման վրա կազմվեցին զեկույցները: Նշված զեկույցները հիմք հանդիսացան 2018 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին նախատեսված դասախոսների վերապատրաստումների համար, որոնք պետք է իրականացվեն եվրոպական հինգ գործընկեր բուհերում: Այս նպատակով ԵՊՀ դասախոսական կազմին հուլիս ամսին ուղարկվել էր հայտարարություն՝ իրազեկելու համար վերապատրաստման ծրագրի մանրամասների և նպատակների մասին: Արձագանքել էր ԵՊՀ 71 դասախոս, որից մրցույթի արդյունքներով ընտրվել է 16 մասնակից: Վերոնշյալ վերապատրաստման նպատակն է պատրաստել վերապատրաստողներ, ովքեր կտիրապետեն դասավանդման և ուսումնառության նորարարական և տեխնոլոգիապես հագեցած ժամանակակից մեթոդներին և ձեռք բերած փորձը հետագայում կտարածեն ԵՊՀ-ում:

Նախագծի շրջանակներում գործընկեր եվրոպական հինգ բուհերը մշակել և ներկայացրել են դասախոսների վերապատրաստման իրենց կենտրոնների «Լավագույն փորձի զեկույցները», որոնց հիման վրա ներկայումս արևելյան գործընկեր բուհերում մշակվում են նմանատիպ կենտրոնների գործառնական (օպերացիոնալ) պլանները: ԵՊՀ-ում նույնպես ստեղծվել է աշխատանքային խումբ՝ ուսումնական

աշխատանքների գծով պրոռեկտորի ղեկավարությամբ, որը մշակում է դասախոսների որակավորման բարձրացման բաժնի վերակառուցման գործառնական (օպերացիոնալ) պլանը:

Երևանի պետական համալսարանում կրթության որակի բարելավմանն ուղղված գործընթացներից են դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների կիսամյակային հարցումները, ինչպես նաև ԵՊՀ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների ամենամյա հարցումները: Թե՛ առկա և թե՛ հեռակա ուսուցման համակարգերի համար այդ հարցումները 2016/2017 ուստարվանից իրականացվում են առցանց եղանակով: Հաշվետու ուստարվա առաջին կիսամյակի հարցումներին մասնակցել են՝ բակալավրիատի առկա ուսուցման 5650 ուսանող (ուսանողական հիմնական համակազմի 52.62 %-ը), հեռակա ուսուցման 1380 ուսանող (ուսանողական հիմնական համակազմի 54.65 %-ը): Մագիստրատուրայի առկա ուսուցման ուսանողներից հարցումներին մասնակցել է 1138 ուսանող (ուսանողական հիմնական համակազմի 55.32 %-ը), հեռակա ուսուցման՝ 252 ուսանող (ուսանողական հիմնական համակազմի 38.36 %-ը): Երկրորդ կիսամյակում հարցումներին մասնակցել են բակալավրիատի առկա ուսուցման 4317 ուսանող (ուսանողական հիմնական համակազմի 41.24 %-ը) և հեռակա ուսուցման 976 ուսանող (ուսանողական հիմնական համակազմի 40.31 %-ը): Մագիստրատուրայի առկա ուսուցման ուսանողներից հարցումներին մասնակցել են 471 ուսանող (ուսանողական հիմնական համակազմի 40.71 %-ը), հեռակա ուսուցման՝ 211 ուսանող (ուսանողական հիմնական համակազմի 43.60 %-ը):

Ըստ «ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումների կազմակերպման կարգի»՝ հարցմանը շրջանավարտի մասնակցությունը պարտադիր է: Հաշվետու ուստարվա գրեթե բոլոր շրջանավարտները մասնակցել են կազմակերպված հարցմանը:

Արտաքին և ներքին շահակիցների հետ համագործակցությունը նպաստում է ԵՊՀ գործունեության արդյունավետությանը: Որակյալ մասնագետների պատրաստման գործընթացում կարևորվում է նաև արտաքին շահակիցների՝ մասնավորապես գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ կրթական ծրագրերի իրականացումը: Այս տեսակետից երկարամյա և կայուն համագործակցություն է ծավալվում

ԵՊՀ-ի և «Սինոփսիս-Արմենիա» կազմակերպության միջև: Փոխշահավետ համագործակցության շրջանակներում իրականացվող կրթական գործընթացներում ընդգրկվել են ԵՊՀ բակալավրիատի, մագիստրատուրայի, ինչպես նաև ասպիրանտուրայի մի քանի տասնյակ սովորողներ: Ծրագրի շրջանավարտները հիմնականում աշխատանքի են անցնում հենց այդ կազմակերպությունում:

Արդյունավետ համագործակցություն է ծավալվում նաև ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի և ՀՀ դեղագործական մի շարք ընկերությունների միջև: Դրանցից են «Լիքվոր», «Արփիմեդ» և «Ֆարմատեկ» դեղագործական ընկերությունները, «Ալֆա-ֆարմ» և «Նատալի-ֆարմ» դեղատների ցանցը, «Աստղիկ» բժշկական կենտրոնը, «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնը», ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնը, ՀՀ ԳԱԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտը և այլն:

2. Ուսումնական գործընթացի ընթացիկ կազմակերպում և բարելավում

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են ուսումնական գործընթացի կազմակերպմանն ու բարելավմանն ուղղված աշխատանքներ: Շարունակվել են գործընթացները ուսանող-դասախոս թվաքանակի հարաբերակցության օպտիմալացման ուղղությամբ: Ուսումնական գործընթացի պլանավորման, կառավարման և կատարողականի վերահսկման աշխատանքները կարևորվելով՝ լրամշակվել և կատարելագործվել է էլեկտրոնային կառավարման «SuperVision YSU» համակարգը: Այդ համակարգի միջոցով յուրաքանչյուր կիսամյակ իրականացվել են աշխատանքներ ամբիոնների կատարողականների վերահսկման ուղղությամբ, որոնց արդյունքները հաշվի են առնվել ամբիոնային բեռնվածությունների հաստատման ժամանակ:

Ավարտվել են «Ֆիզդաստիարակություն» դասընթացին ուսանողների հաճախելիությունը էլեկտրոնային եղանակով «SuperVision YSU» ավտոմատացված համակարգում գրանցելու ուղղությամբ տարվող աշխատանքները, և գործընթացն արդեն իրականացվում է նոր համակարգով: Ավարտվել են նաև ստուգման գրքույկների՝ էլեկտրոնային եղանակով գրանցման գործընթացի կազմակերպման աշխատանքները:

Աշխատանքներ են տարվել էլեկտրոնային կառավարման «SuperVision YSU» համակարգի և ԵՊՀ-ում գործող ուսանողական էլեկտրոնային փոստերի միջոցով ուսանողների ուսումնառությանը վերաբերող անհատական տեղեկատվություններն ավտոմատ նրանց փոխանցելու ուղղությամբ:

Կրթության որակի բարելավման և ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով միջոցներ են ձեռնարկվել պրոֆեսորադասախոսական կազմի աշխատածավալների օպտիմալացման ուղղությամբ:

2017/2018 ուստարում աշխատանքներ են տարվել 2 նոր մագիստրոսական կրթական ծրագրերի արտոնման, փորձաքննության և հաստատման գործընթացների ուղղությամբ, որի արդյունքում հաստատվել են «Կիրառական վիճակագրություն և սվյալների գիտություն» և «Կիրառական մանրէաբանություն» կրթական ծրագրերը: Այդ ծրագրերը արտոնվել են ՀՀ ԿԳ նախարարության կողմից և գործարկվում են ընթացիկ՝ 2018/2019 ուստարվանից:

Ֆակուլտետների հետ շարունակվել են աշխատանքները քննաշրջանների ու փոխատեղման արդյունքները ուսանողների համար առավել հասանելի ու թափանցիկ դարձնելու ուղղությամբ:

Ֆակուլտետներում, ինստիտուտներում և կենտրոններում գործավարական գործառույթների օպտիմալացման, ինչպես նաև գործավարությունը հստակեցնելու, վերահսկելի դարձնելու նպատակով շարունակվել են ուսանողների անձնական գործերի՝ էլեկտրոնային եղանակով վարման գործընթացները:

Հաշվետու ուսումնական տարում ևս կատարվել են լսարանային ֆոնդի արդյունավետ օգտագործման ուղղությամբ աշխատանքներ: Շարունակվել են ուսանողական շարժի հաշվարկման և վերահսկման գործընթացները: Աշխատանքներ են տարվել սովորողների՝ ՀՀ զինված ուժերում ծառայելու, ազատման, տեղափոխման, վերականգնման, արտերկիր գործուղման, հիվանդությունների պատճառով տարկետման, ինչպես նաև ուսումնական գործընթացին առնչվող այլ հրամանների ուղղությամբ:

Միջոցներ են ձեռնարկվել ուսումնական գործընթացին վերաբերող ավտոմատացված գործառույթները կատարելագործելու համար, օրինակ՝ ընթացիկ հրամանների, ինչպես նաև քննաշրջանից ու լուծարքային շրջանից հետո առարկայական

պարտք ունեցող ուսանողների անվանական ցուցակների ամփոփման գործընթացների ուղղությամբ:

«SuperVision YSU» ծրագրի միջոցով ավտոմատացված եղանակով շարունակվել է անվանական ցուցակների ամփոփումը մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի վերահանձնման գործընթացի դեպքում:

Իրականացվել են իրենց ուսանողական իրավունքները վերականգնող սովորողների առարկայական տարբերությունների հաշվարկի ձևաթուղթը «SuperVision YSU» ծրագրի միջոցով ավտոմատացնելու ուղղությամբ աշխատանքներ:

Հաշվետու ժամանակաշրջանում ևս կազմակերպվել և իրականացվել են մանկավարժի որակավորման համար լրացուցիչ դասընթացներ՝ 10 կրթական ծրագրերի գծով, որոնց մասնակցելու համար դիմում-հայտ է ներկայացրել առկա և հեռակա համակարգերում սովորող ԵՊՀ մոտ 480 ուսանող:

Հաշվետու ուստարվա արդյունքներով իրականացվել է ԵՊՀ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման գործընթացը՝ ելնելով կրթության որակի ապահովման պահանջներից և առաջնորդվելով գործող կանոնակարգով: Ուսանողական նպաստների հատկացումն իրականացվել է ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցների և ԵՊՀ ֆինանսական միջոցների հաշվին: Ըստ առաջադիմության արդյունքների՝ նպաստ է տրվել բակալավրիատի և մագիստրատուրայի 1615 ուսանողի, որոնցից 413-ը բակալավրիատի 1-ին, 419-ը 2-րդ, 406-ը 3-րդ կուրսերից են, իսկ 377-ը մագիստրատուրայի 1-ին կուրսից են: Համակարգի փոփոխման են ենթարկվել բակալավրիատի 1-ին կուրսի 110 (26,6 %), 2-րդ կուրսի 64 (15,3 %), 3-րդ կուրսի 58 (14,3 %) և մագիստրատուրայի 1-ին կուրսի 68 (18,0 %) ուսանողներ:

Բարձր առաջադիմությամբ սովորողներին, ովքեր ցուցաբերել են նաև հասարակական ակտիվություն, հատկացվել է կրթաթոշակ: 2017/2018 ուսումնական տարում ևս, պետական կրթաթոշակից բացի, հատկացվել է նաև ԵՊՀ-ի և այլ կազմակերպությունների կողմից սահմանված 51 անվանական կրթաթոշակ, որոնք տրվել են 64 ուսանողի: «Կրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ բուհի վճարովի համակարգում սովորող ուսանողներին հատկացվել են ուսման վարձի զեղչեր: Ուստարվա 1-ին կիսամյակում ուսման վարձի զեղչ հատկացվել է 2222 ուսանողի, 2-րդ կիսամյակում՝

2568-ի: 1-ին կիսամյակում նրանցից 1844-ը եղել են բակալավրիատի, 224-ը՝ մագիստրատուրայի ուսանողներ, 154-ը՝ աշխատողների երեխաներ, իսկ 2-րդ կիսամյակում 2050-ը եղել են բակալավրիատի, 366-ը՝ մագիստրատուրայի ուսանողներ, 152-ը՝ աշխատողների երեխաներ: Երկու կիսամյակներում կիրառված գեղչերի գումարը կազմում է ավելի քան 429 մլն ՀՀ դրամ: Իրականացված գործընթացն ըստ ուսուցման ձևի, ֆակուլտետների, մասնագիտությունների, կուրսերի, զեղչված տոկոսի չափի, կարգավիճակի և գումարների՝ մանրամասն ամփոփվել է առանձին գրքի տեսքով, որը ներկայացվել է նաև ԿԳՆ:

Զեղչերի կիրառման և նպաստների հատկացման գործընթացն առավել հստակ և անթերի կազմակերպելու նպատակով շարունակվել են առաջադիմության վերահսկման աշխատանքները: Շարունակվել են նաև քննությունների արդյունքների մշակման ավտոմատացման խնդիրների վերաբերյալ ուսուցողական աշխատանքները ֆակուլտետների դեկանատների և կենտրոնների աշխատողների հետ՝ միտված համակարգչային այդ ծրագրից օգտվելու նրանց հմտությունների զարգացմանը:

Ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկության և հրապարակայնության ապահովման նպատակով բոլոր գործողություններն իրականացվել են ՀՀ կառավարության, ԿԳ նախարարության պահանջների և ԵՊՀ կանոնակարգերի համաձայն:

Ամփոփիչ ատեստավորման ընթացքը տեսագրելու և արդյունքների բողոքարկման գործընթացն անխափան իրականացնելու նպատակով շարունակվել են լսարաններում տեսախցիկների տեղադրման աշխատանքները՝ դրանց թիվը հասցնելով 67-ի:

Ուսումնամեթոդական վարչության կողմից կազմակերպվել և իրականացվել է ելքային արդյունքների վերահսկման գործընթացը: Ամփոփվել, այնուհետև ԿԳՆ են ներկայացվել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները:

2017/2018 ուստարում լրացվել և շրջանավարտներին է հանձնվել 4561 դիպլոմ, որից 2772-ը՝ առկա ուսուցման համակարգի բակալավրիատում, 1047-ը՝ մագիստրատուրայում, 515-ը՝ հեռակա ուսուցման համակարգի բակալավրիատում, 174-ը՝ մագիստրատուրայում: Վերականգնվել և տրվել է 53 դիպլոմի կրկնօրինակ:

Հաշվետու ուստարում ևս ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն և ՀՀ ԿԳՆ են ներկայացվել 1-ԳՄ և 3-ԳՄ ձևաչափերով վիճակագրական հաշվետվությունները, որոնք ներառում են քննությունների արդյունքները, ուսանողների և շրջանավարտների վերաբերյալ տվյալներ, ինչպես նաև ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմին առնչվող տեղեկատվություն: Մշակվել են ամբիոնային բեռնվածությունների, զեղչերի և տեղափոխությունների վերաբերյալ տվյալները, որոնք ամփոփվել են առանձին գրքույկի ձևով:

ՀՀ բուհերի վարկանշավորման ամենամյա գործընթացի համար, որն իրականացնում է ԿԳՆ կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը (ԿՏԱԿ), հաշվետու ուստարում ևս հավաքագրվել են ԵՊՀ վարկանշավորման ցուցանիշների հաշվարկման համար անհրաժեշտ տվյալները, որոնք ամփոփվել և ներկայացվել են ԿՏԱԿ: Ինչպես նախորդ տարիներին, 2017 թ-ին ևս բուհերի վարկանշավորման արդյունքում ԵՊՀ-ն իր ցուցանիշներով առաջինն էր:

Ուսման վարձի վճարման համար ուսանողներին բանկերի կողմից վարկի տրամադրման գործընթացն ավելի հստակ կազմակերպելու նպատակով ԵՊՀ-ն 2017/2018 ուսումնական տարում ևս ՀՀ բանկերի միություն է ուղարկել ուսումն ընդհատած ուսանողների տվյալները՝ նրանց վարկեր չտրամադրելու համար:

Հաշվետու ուստարում շարունակվել է Հայաստանի ճարտարապետության և շինարարության ազգային համալսարանի հետ համագործակցությունը, որի շրջանակներում ԵՊՀ մի շարք դասախոսներ այդ բուհում վարել են տարբեր դասընթացներ:

Համագործակցությունը շարունակվել է նաև ՀՀ պաշտպանության նախարարության բարձրագույն կրթական հաստատությունների հետ, որոնց ԵՊՀ-ն ցուցաբերել է մեթոդական աջակցություն ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի կազմման ու իրականացման ուղղությամբ: Իրականացվել են նաև աշխատանքներ ԵՊՀ անվճար համակարգի արական սեռի ուսանողների՝ ՊՆ համապատասխան ինստիտուտներում կազմակերպվող դասընթացներին կամավորության սկզբունքով մասնակցելու ուղղությամբ:

ՀՀ պաշտպանության նախարարության հետ համագործակցության շրջանակներում 2018/2019 ուստարում ԵՊՀ առկա ուսուցման բակալավրիատի մի շարք կրթական ծրագրերով դիմորդները և ուսանողներն առանձին հայտ են ներկայացրել

«Պատիվ ունեմ» ծրագրից օգտվելու համար: Արդյունքում՝ ԵՊՀ ընդունված դիմորդներից 35-ը, իսկ ուսանողներից 21-ը սովորում են «Պատիվ ունեմ» ծրագրի շրջանակում: Նրանք մինչև ուսումնառության ավարտը կօգտվեն տարկետման իրավունքից և համալսարանն ավարտելուց հետո պայմանագրային աշխատանքի կանցնեն ՀՀ զինված ուժերում:

Նպատակային ընդունելություն է կատարվել նաև մագիստրատուրայում՝ «Արևելագիտություն» մասնագիտությամբ. 2 անվճար տեղ հատկացվել է «Իրանական պատմաբանասիրություն» և 2 անվճար տեղ՝ «Թյուրքական պատմաբանասիրություն» կրթական ծրագրերով: Մագիստրատուրայի շրջանավարտները նույնպես պայմանագրային աշխատանքի կանցնեն ՀՀ զինված ուժերում:

Համալսարանում ուսումնական գործընթացի կարևոր բաղադրիչներից է պրակտիկան, որի արդյունավետ իրականացման համար ավելին քան 100 պայմանագիր է կնքված պետական և ոչ պետական տարբեր կազմակերպությունների, հիմնարկ-ձեռնարկությունների և նրանց ստորաբաժանումների հետ (ՀՀ Կառավարության աշխատակազմ, ՀՀ Ազգային ժողով, ՀՀ Սահմանադրական դատարան, դատարաններ, նախարարություններ, ՀՀ կենտրոնական բանկ, առևտրային բանկեր, ապահովագրական ընկերություններ, գիտահետազոտական ինստիտուտներ, մասնավոր ընկերություններ, թանգարաններ, արխիվներ, ԶԼՄ խմբագրություններ, դպրոցներ, միջազգային կազմակերպությունների երևանյան ներկայացուցչություններ, հասարակական կազմակերպություններ): 2018 թ. մայիսի 3-ին ԵՊՀ գիտական խորհուրդը հաստատել է «Երևանի պետական համալսարանի ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգը»: Կարգում հստակ սահմանված են պրակտիկայի դերն ու նշանակությունը ուսանողի՝ մասնագիտական հմտությունների և փորձառությունների ձեռքբերման գործում, ներկայացված են պրակտիկայի տեսակները և դրանց կազմակերպման մեխանիզմները, արդյունքների գնահատման մեթոդաբանությունը և այլն:

Համալսարանականների պրակտիկայի անցկացման վայրերն ընտրվում են հաշվի առնելով աշխատաշուկայի և գործատուների պահանջները: Դրանք դիտարկվում են նաև որպես պոտենցիալ աշխատատեղեր: Որոշ շրջանավարտներ պրակտիկայի ընթացքում ցուցաբերած հմտությունների ու կարողությունների

շնորհիվ հետագայում աշխատանքի են ընդունվում պրակտիկայի վայր հանդիսացող կազմակերպություններում: Առանձին դեպքերում անհատական կարգով պրակտիկաներ են կազմակերպվել ԵՊՀ-ի հետ համագործակցության պայմանագիր ունեցող այլ պետությունների առաջատար բուհերում և գիտահետազոտական կենտրոններում: Կարևորելով պրակտիկայի դերը՝ նոր կրթական ծրագրերում մեծ ուշադրություն է դարձվել պրակտիկաների ծրագրերի կազմմանը: Մասնագիտական պրակտիկայի վայրն ընտրելիս հաշվի են առնվել աշխատաշուկայի պահանջները, ուսանողների նախասիրությունները, ինչպես նաև անցած տարիների ընթացքում ֆակուլտետների կողմից ներկայացված առաջարկությունները: Նոր կրթական ծրագրերին համապատասխան ընդլայնվել է պրակտիկայի անցկացման աշխարհագրությունը:

Հաշվետու ուստարում մասնագիտական պրակտիկան կազմակերպվել է ԵՊՀ բոլոր ֆակուլտետների ավարտական կուրսերում: Այն անցկացվել է համապատասխան մասնագիտական ուղղվածություն ունեցող կազմակերպություններում՝ Երևանում և մարզերում: Ելնելով մասնագիտության առանձնահատկություններից՝ «Սերվիս» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողների համար կազմակերպվել է եռօրյա այց Սյունիքի մարզ: Մասնագիտական (այդ թվում՝ մանկավարժական) պրակտիկա է անցել 5267 ուսանող (բակալավր և մագիստրոս): Մանկավարժական պրակտիկան կազմակերպվել է ԵՊՀ 11 ֆակուլտետի ավարտական կուրսերի 1162 ուսանողի համար: Այն անցկացվել է Երևանի դպրոցներում:

Ուսումնական պրակտիկան կազմակերպվել է Աշխարհագրության և երկրաբանության, Աստվածաբանության, Պատմության, Սոցիոլոգիայի, Կենսաբանության, Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետների, Ֆարմացիայի ինստիտուտի 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողների համար: Պրակտիկան անցել է 1119 ուսանող: Այն իրականացվել է երթուղիների ձևով, ինչպես նաև եղել են այցելություններ տարբեր թանգարաններ, պատմամշակութային հուշարձաններ, առևտրի կենտրոններ, ծառայություններ մատուցող և սպասարկման օբյեկտներ: Պրակտիկայի ավարտական փուլն անցկացվել է ԵՊՀ համապատասխան ֆակուլտետներում և լաբորատորիաներում, կազմակերպվել են քննարկումներ, ներկայացվել՝ հաշվետվությունները:

Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ուսանողների համար կազմակերպվել է 14 մեկօրյա երթուղի: «Աշխարհագրություն» մասնագիտության 1-ին կուրսի ուսանողները 10-օրյա ուսումնական պրակտիկա են անցկացրել Բյուրականի հանգրվանում: «Աշխարհագրություն» և «Երկրաբանություն» մասնագիտությունների 2-րդ կուրսի ուսանողներն ուսումնական 14-օրյա պրակտիկան անցկացրել են Ծաղկաձորում:

Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողների համար կազմակերպվել է 2 մեկօրյա երթուղի՝ Երևան-Հանքավան-Երևան և Երևան-Դիլիջան-Երևան ուղղություններով: Կենսաբանության ֆակուլտետի ուսանողները 14-օրյա պրակտիկա են անցկացրել Ծաղկաձորում:

Միաժամանակ պետք է նշել, որ պրակտիկաների կազմակերպման և անցկացման ընթացքում ի հայտ են գալիս մի շարք խնդիրներ, որոնք էապես ազդում են պրակտիկայի որակի վրա: Պրակտիկայի ավարտից հետո լսելով ուսանողների կարծիքները, առաջարկությունները և բողոքները՝ իրականացվում է որոշակի աշխատանք դրանց ուղղությամբ, ինչը ոչ բոլոր դեպքերում է ունենում դրական արդյունք: Ուսանողների բողոքների մեծ մասը հասցեագրված է ընդունող կողմին: Մինչ օրս պետական մակարդակով պրակտիկաների կազմակերպման և անցկացման ընդհանուր կարգ գոյություն չունի, ինչի պատճառով էլ պետական կառավարման համակարգի որոշ օղակներում ուսանողների մասնագիտական պրակտիկայի նկատմամբ վերաբերմունքը ձևական բնույթ է կրում:

3. Ընդունելության նախապատրաստում

Հաշվի առնելով ՀՀ դպրոցներում 2017/2018 ուստարվա շրջանավարտների թվի կտրուկ նվազումը և մրցակցային միջավայրի ուժեղացող ազդեցությունը՝ ԵՊՀ մինչ-համալսարանական կրթության վարչությունը շարունակել է հետևողական աշխատանք տանել դպրոցների ավարտական դասարանների աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը նպաստելու, իրազեկության մակարդակը բարձրացնելու և դեպի ԵՊՀ ուղղորդելու ուղղությամբ: Վարչության առջև գերակա խնդիր էր դրված ստեղծել բոլոր անհրաժեշտ նախադրյալները դիմորդների կայուն հոսքը ապահովելու

համար՝ հնարավորինս գնահատելով ժողովրդագրական բացասական միտումները և միջավայրային այլ գործոնների ազդեցությունը: Այդ գործոններից են՝

- ԵՊՀ կազմում ավագ դպրոցի և քոլեջի բացակայությունը,

- Հայաստանում Ամերիկյան, Հայ-ռուսական (Սլավոնական), Ֆրանսիական համալսարանների և Մոսկվայի պետական համալսարանի Երևանյան մասնաճյուղի հետ բակալավրիատի ընդունելության մրցակցային անհավասար պայմանները:

Ստեղծված դժվարությունները հաղթահարելու նպատակով համալսարանը բարձրացրել է մի քանի հարց, որոնք, սակայն, դեռ իրենց լուծումը չեն ստացել: Առաջին՝ ԵՊՀ կազմում հենակետային վարժարան ստեղծելու նպատակով վերջին տարիներին բազմիցս դիմել ենք Երանի քաղաքապետին, ՀՀ ԿԳ նախարարին և նրա միջոցով ՀՀ կառավարությանը՝ ԵՊՀ անմիջական հարևանությամբ գտնվող Լ. Շանթի անվան թիվ 4 հիմնական դպրոցը հանձնելու համալսարանին: Մենք այսօր էլ համոզված ենք, որ օգտագործելով մեր լաբորատոր բազան, մարզահամալիրը և ապահովելով պրոֆեսորադասախոսական կազմի ակտիվ մասնակցությունը ուսումնական գործընթացին՝ վարժարանը կդարձնենք հանրապետությունում լավագույններից մեկը՝ դրանով իսկ առավելագույնս նպաստելով նաև ավագ դպրոցի կայացման կարևոր գործին: Վերոնշյալ դպրոցը համալսարանի կազմում ընդգրկելու վերաբերյալ ԿԳ նախարարին ուղղված ԵՊՀ-ի 2016 թ. գրությունը նախարարությունը վերահասցեագրել է Երևանի քաղաքապետարանին՝ քննարկման, բայց քաղաքապետարանը մերժել է Լ. Շանթի անվան թիվ 4 հիմնական դպրոցի կարգավիճակի փոփոխության վերաբերյալ առաջարկը: 2018 թ. հոկտեմբերին այս հարցով դիմել ենք նաև ԿԳ նախարար պարոն Ա. Հարությունյանին:

Երկրորդ՝ կրթական համակարգի զարգացումների համատեքստում ԵՊՀ-ն խիստ կարևորում է պետական մասնագիտական քոլեջների սովորողներին որակյալ կրթություն տալու և կրթության շարունակականության լուրջ խնդիրների լուծմանն աջակցելը, որն ուղղված է նաև նրանց կրթամակարդակի բարձրացմանը: Համալսարանն այսօր համագործակցության պայմանագրեր ունի Երևան քաղաքի և ՀՀ մարզերի շուրջ երկու տասնյակ քոլեջների հետ:

Անհերքելի փաստ է, որ արդի գիտության, տեխնիկայի և պաշտպանության ոլորտներին առնչվող ցանկացած արմատական խնդիր անհնար է լուծել առանց հա-

մակարգչային մեթոդների լայն օգտագործման: Գործընթացները կառավարելու, տվյալները գրանցելու, համակարգելու ու մշակելու եղանակները, ինչպես նաև մոդելավորման օգնությամբ ստացված արդյունքների հավաստիությունը բացահայտելու համակարգչային հնարավորությունները անփոխարինելի են: Դա պահանջում է բարձր մակարդակի մասնագիտական հմտություններ, և պատահական չէ գիտատեխնիկական ոլորտում համապատասխան մասնագետների մեծ պահանջարկը: Ոլորտի զարգացումը խթանելու նպատակով Երևանի պետական համալսարանում, բացի ավանդական դարձած ծրագրավորողի մասնագիտությունից, վերջին տարիներին հարակից ուղղություններով ձևավորվել են նոր մասնագիտություններ, որոնք շրջանավարտին հնարավորություն կտան համատեղել տեխնիկական և ակադեմիական գիտելիքները: Այդ մասնագիտությունների թվում են հեռահաղորդակցությունը, ազդանշանների թվային մշակումը, պրոցեսների ավտոմատացումն ու մոդելավորումը:

Գտնում ենք, որ նշված ուղղություններով մասնագիտացած երիտասարդ կադրերի որակավորման բարձրացմանը էապես կնպաստեր Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի ներառումը ԵՊՀ կազմում՝ ընդլայնելով ուսուցանվող մասնագիտությունների ցանկը և վերանվանելով այն «Տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության քոլեջ»: Ի դեպ, այդ քոլեջը համալսարանի կազմում ներառելու առաջարկը ԵՊՀ-ի կողմից ներկայացվել էր դեռևս 2016 թ., սակայն ԿԳ նախարարի կողմից 12.12.2017 թ. ԵՊՀ ռեկտորին ուղղված N 2.1/17659-17 գրությամբ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջը ԵՊՀ-ի կազմում ներառելը համարվեց ոչ նպատակահարմար: 2018 թ. հոկտեմբերին նույն առաջարկով դիմել ենք նաև ԿԳ նախարար պարոն Ա. Հարությունյանին: Նա ևս մերժել է մեր դիմումը:

Երբորդ՝ 1995 թ-ից մինչև 2008 թ. ԵՊՀ ֆիզիկայի, մաթեմատիկայի և մեխանիկայի, ռադիոֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության ֆակուլտետները համալրվում էին նաև ֆիզիկամաթեմատիկական թեքումով, բարձր վարկանիշ ունեցող վարժարաններից և դպրոցներից հարցազրույցով ընդունելությամբ, ինչը ապահովում էր անհրաժեշտ թվով դիմորդներով: Վերջին տարիներին վերոնշյալ ֆակուլտետներում ընդունելությունն իրականացվում է միայն միասնական քննություններով: Այդ

տարիներին դիմորդների թվի անընդհատ նվազումը առաջին հերթին իր բացասական ազդեցությունն ունեցավ վերոնշյալ ֆակուլտետների վրա:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հիմնարար գիտությունների զարգացումը և դրա արդյունքների կիրառումը կյաթանի ՀՀ տնտեսությունը, առանց որի անհնար է մեր երկրի հետագա առաջընթացը, նախորդ 2 տարիների ընթացքում մենք մի քանի անգամ դիմել ենք ԿԳ նախարարին և նրա միջոցով ՀՀ կառավարությանը՝ որպես այդ գիտությունների զարգացման համար պետության կողմից հստակ հոգացողության նշան՝ թույլատրել ԵՊՀ վերոնշյալ ֆակուլտետների ընդունելությունը կատարել Արարատյան բակալավրիատի ընդունելության օրինակով՝ ՀՀ ֆիզիկամաթեմատիկական թեքումով բարձր վարկանիշ ունեցող վարժարաններից և դպրոցներից: Մենք նաև ցանկություն ենք հայտնել, որ ԿԳՆ-ի կողմից հաստատված դպրոցների ցանկում լինեն այն հինգ վարժարանները և դպրոցները, որտեղ իրականացվում է ուսումնական ծրագրերի հոսքային խորացված ուսուցում «Տեղեկատվական տեխնոլոգիաներ», «Հեռահաղորդակցման և կապի միջոցներ» և «Միկրոէլեկտրոնիկա» առարկաներից: Սակայն այս խնդիրը այդպես էլ լուծում չստացավ: 2018 թ. հոկտեմբերին նույն հարցով դիմել ենք նաև ԿԳ նախարար պարոն Ա. Հարությունյանին և սպասում ենք նախարարության արձագանքին:

Առկա դժվարությունները հաշվի առնելով՝ ԵՊՀ մինչհամալսարանական կրթության վարչությունը հաշվետու ուստարում զգալի աշխատանք է կատարել ընդունելության գովազդային մարքեթինգային գործընթացները զարգացնելու ուղղությամբ՝ հնարավորինս ներգրավելով համալսարանի ֆակուլտետները և մյուս կառուցվածքային ստորաբաժանումները:

Հաշվետու ժամանակաշրջանում դպրոցներում և քոլեջներում պարբերաբար կազմակերպվել են հանդիպում-զրույցներ և քննարկումներ աշակերտների, սովորողների ուսուցիչների, նաև ծնողների հետ, որոնց ընթացքում նրանց ներկայացվել է ԵՊՀ-ի կողմից մատուցվող կրթական ծառայությունների վերաբերյալ մատչելի և ամբողջական տեղեկատվություն, մանրամասն պարզաբանվել են բակալավրի ծրագրով բուհ ընդունվելու և շարունակական կրթության կարգերը: Այս գործընթացին վարչության աշխատակիցների հետ մեկտեղ ակտիվորեն մասնակցել են նաև շատ ֆակուլտետների ղեկաններ և տասնյակ հեղինակավոր ու փորձառու դասախոսներ:

2017/2018 ուստարում ևս հրատարակվել են բակալավրիատի կրթական ծրագրերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն պարունակող սեփական գովազդային նյութեր՝ «Դիմորդի ուղեցույց-2018» ձեռնարկը (500 տպաքանակով), ԵՊՀ-ն և ֆակուլտետները ներկայացնող գունավոր բուկլետները (10000 տպաքանակով): Դրանք անվճար բաժանվել են հանրապետության հանրակրթական բոլոր հաստատություններին:

Կատարելագործվել է դիմորդների հետ տարվող աշխատանքների լուսաբանումը ԵՊՀ պաշտոնական կայքում՝ ինչպես հարց ու պատասխանի, այնպես էլ բակալավրիատի ընդունելության կարգը և «Դիմորդի ուղեցույց-2018»-ը կայքում տեղադրելու միջոցով:

Հանրակրթության համակարգում առկա հիմնախնդիրների լուծման նպատակով մեր ռեսուրսներն ավելի նպատակային օգտագործելու համար հաշվետու ժամանակաշրջանում համալսարանի հետ պայմանագրային հիմունքով համագործակցող մայրաքաղաքի ավագ դպրոցներում ԵՊՀ 92 փորձառու դասախոս 29 լրացուցիչ կրթական ծրագրերով հատուկ դասընթացներ են վարել: Իսկ ՀՀ մարզերի շուրջ երկու տասնյակ դպրոցներում համալսարանի դասախոսների կողմից իրականացվել են 146 բովանդակային դասախոսություններ՝ հանրակրթական տարբեր առարկաներից:

Դրա հետ մեկտեղ որոշակի աշխատանք է կատարվել նաև հանրապետության 28 հիմնական և ավագ դպրոցներում ու վարժարաններում, որոնց հետ ԵՊՀ-ն ունի համագործակցության երկարաժամկետ համաձայնագրեր:

Ընդհանուր առմամբ, 2017/2018 ուստարում վարչությունը ֆակուլտետների դեկանների աջակցությամբ և դասախոսական կազմի մի քանի տասնյակ ակտիվ և նվիրված ներկայացուցիչների ուժերով Երևանի և մարզերի շուրջ 76 դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար կազմակերպել է 280 ակնարկային և բովանդակային դասախոսություն:

Մեր գիտակրթական օջախի առաքելության, նպատակների, գործունեության արդյունքների, ուսանողական կյանքի և ուսումնառության առկա հնարավորությունների մասին լիարժեք պատկերացում կազմելու համար և խիստ կարևորելով դպրոցների բարձր դասարանների աշակերտների մասնագիտական կողմնորոշումը դեպի համալսարան՝ հաշվետու ժամանակաշրջանում Երևանի և մարզերի 100-ից ավելի

դպրոցների շուրջ 4700 աշակերտի համար կազմակերպվել են «Բաց դռների օր» և նպատակային ճանաչողական այցեր ԵՊՀ:

Վարչությունը դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար 10-րդ տարին անընդմեջ կազմակերպել և անցկացրել է օլիմպիադա՝ հանրակրթական տարբեր առարկաների գծով: Արդեն երրորդ տարին՝ օլիմպիադան անցկացվել է 2 փուլով՝ ԵՊՀ-ում և ՀՀ բոլոր մարզերում: Մասնակիցների թիվը 1-ին փուլում 2186 էր, 2-րդ փուլում՝ 402: Օլիմպիադայի անցկացման գործում մեծ աշխատանք են կատարել համապատասխան ֆակուլտետների օլիմպիական հանձնաժողովները՝ դեկանների գլխավորությամբ: ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ 2018 թ. օլիմպիադայի 2-րդ փուլում հաղթած և 1-ին, 2-րդ, 3-րդ կարգի դիպլոմների արժանացած 87 աշակերտներից 19-ը, որոնք ընդունվել են ԵՊՀ վճարովի համակարգ, առաջին կուրսում կստանան համապատասխանաբար 50, 40 և 30 % ուսման վարձի զեղչ: Օլիմպիադան հրաշալի խթան է առավել ինտելեկտի երեխաներին հայտնաբերելու և դեպի ԵՊՀ ուղղորդելու: Միաժամանակ դա ապագա դիմորդների համար յուրատեսակ քննություն է մինչև ընդունելության քննությունները: Օլիմպիադան կազմակերպված անցկացնելու, ինչպես նաև մարզերում դիմորդների հավաքագրելու գործում իրենց լուսման ունեն նաև այնտեղ գործող ԵՊՀ ներկայացուցչությունները:

Հաշվի առնելով «ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի» պահանջը՝ վարչությունը ԵՊՀ 15 պայմանագրային դպրոցների 10-11-րդ դասարանների 44 աշակերտի համար «Հայոց լեզու և գրականություն» և «Պատմություն» առարկաներից 2018 թ. հուլիսին Ծաղկաձորի «Համալսարանական» բազայում կազմակերպել է «Ամառային դպրոց»: Դասընթացները բարձր մակարդակով վարեցին վերոհիշյալ ֆակուլտետների 10 փորձառու դասախոսներ: Անհրաժեշտ ծախսերի 80 %-ը կամ 4 մլն ՀՀ դրամը տրամադրել է ԵՊՀ-ն:

Հաշվետու ժամանակաշրջանում վարչությունը ձգտել է կատարելագործելու նաև նախապատրաստական դասընթացների գործող համակարգը և ձևավորելու դասընթացների լայն ընտրանի հանրակրթական բոլոր առարկաներից՝ ՀՀ բուհերի ընդունելության պահանջներին նախապես համապատասխանեցված ծրագրերով՝ ապահովելով դրանց իրականացման ճկուն ժամանակացույց:

Արդեն երկրորդ տարին Մինչհամալսարանական կրթության վարչությունը Միջազգային համագործակցության վարչության հետ համատեղ կազմակերպել է նաև օտարերկրյա քաղաքացիների համար նախապատրաստական դասընթացներ բոլոր հանրակրթական առարկաներից: Առանձին խմբերում են ընդգրկվել հայերենին տիրապետող, մասամբ տիրապետող և հայերեն չիմացող ունկնդիրները, որոնք դասընթացների սկզբում՝ ավելի քան երկու ամիս, մասնակցել են միմիայն հայոց լեզվի խորացված ուսուցման դասընթացների, որից հետո միայն, հայերենին զուգահեռ, մասնակցել են նաև ընդունելության համար անհրաժեշտ մյուս առարկաների դասընթացներին: Ուսումնական գործընթացի նման ձևով կազմակերպումը հնարավորություն է տվել Չինաստանից, Վրաստանից, Սերբիայից, Սիրիայից, Իրանից և մյուս երկրներից դիմած ունկնդիրների համար ուսուցումն անցկացնել հնարավորինս արդյունավետ, ինչի շնորհիվ ուսումնական տարվա ավարտին վերը հիշատակված երկրների 22 քաղաքացիներ ընդունվել են ԵՊՀ տարբեր ֆակուլտետներ:

Բացի նշված ունկնդիրներից՝ հաշվետու ուստարվա ընթացքում ազատ ունկնդրի կարգավիճակով դասերին մասնակցել են նաև Իտալիայի և Չինաստանի քաղաքացիներ:

Հարկ է նշել, որ նախապատրաստական դասընթացների ՀՀ քաղաքացի ունկնդիրների ավելի քան 90 %-ը վերջին տարիներին ընդունվել է ԵՊՀ և այլ բուհերի առկա և հեռակա ուսուցման բաժիններ:

4. Ընդունելություն

2018/2019 ուսումնական տարում բակալավրիատում և մագիստրատուրայում ընդունելությունը կատարվել է համաձայն ՀՀ կառավարության կողմից հաստատված բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների կրթական ծրագրերի ցանկի:

2018/2019 ուստարվա ԵՊՀ դիմորդների թիվը առկա ուսուցման համակարգի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում կազմել է համապատասխանաբար 1659 և 1318: Բակալավրիատ ընդունվել է 1510 հոգի (անվճար՝ 330, վճարովի՝ 1180), իսկ մագիստրատուրա՝ 1040 (անվճար՝ 359, վճարովի՝ 681):

ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրի ընդունելության բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի ընդհանուր ծավալում կազմել է 32,7 %: ԵՊՀ դիմորդների և ընդունվածների ընդհանուր հոսքերում իգական սեռի հաշվեկշիռը կազմել է համապատասխանաբար՝ 60 % և 59,7 %:

2018/2019 ուստարում ԵՊՀ բակալավրիատ դիմել է 43, իսկ մագիստրատուրա՝ 23 օտարերկրյա քաղաքացի: Նրանցից ընդունվել են համապատասխանաբար 39-ը և 20-ը:

Հեռակա ուսուցման համակարգում դիմորդների թիվը բակալավրիատում կազմել է 260, որից ընդունվել է 177-ը, իսկ մագիստրատուրայում՝ 265, որից ընդունվել է 210-ը:

5. Հիմնական ուսանողական համակազմ և շրջանավարտներ

2017/2018 ուստարում ԵՊՀ առկա ուսուցման համակարգի ուսանողների թիվը եղել է 13002, որից 10897-ը՝ բակալավրիատում (այդ թվում՝ 9328-ը վճարովի), 2105-ը՝ մագիստրատուրայում (այդ թվում՝ 1240-ը վճարովի):

Հեռակա ուսուցման համակարգում սովորել է 3193 ուսանող, որից 2537-ը՝ բակալավրիատում, իսկ 656-ը՝ մագիստրատուրայում:

Հաշվետու ուստարում ԵՊՀ բակալավրիատի օտարերկրյա սովորողների թիվը եղել է 192 (առկա ուսուցմամբ՝ 176, հեռակա ուսուցմամբ՝ 16), մագիստրատուրայինը՝ 46 (առկա ուսուցմամբ՝ 36, հեռակա ուսուցմամբ՝ 10), իսկ ասպիրանտուրայինը՝ 21: Ընդհանուր թիվը կազմել է 259:

ԵՊՀ հիմնական ուսանողական թվակազմում (16195՝ առանց Իջևանի մասնաճյուղի) մագիստրոսական համակազմի հաշվեկշիռը 17 % է, իսկ օտարերկրյա և հեռակա ուսուցման ուսանողներինը՝ համապատասխանաբար 1,6 % և 19,7 %:

2017/2018 ուստարում համալսարանը տվել է առկա ուսուցմամբ 3844 շրջանավարտ, որից 2773-ը՝ բակալավրի կրթական ծրագրով, 1071-ը՝ մագիստրոսի, իսկ հեռակա ուսուցմամբ՝ 681 շրջանավարտ, որից 513-ը՝ բակալավրի կրթական ծրագրով, 168-ը՝ մագիստրոսի: Առկա ուսուցման բակալավրիատը գերազանցության դիպլոմով ավարտել է 429 (15,5 %) շրջանավարտ, մագիստրատուրան՝ 620 (57,9 %): Հեռակա

ուսուցման բակալավրիատը գերազանցության դիպլոմով ավարտել է 14 (2,7 %) շրջանավարտ, իսկ մագիստրատուրան՝ 20 (11,9 %):

Համաձայն ՀՀ կառավարության որոշման՝ ընդունելություն է իրականացվել նաև միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություններից (ՄՄՊՈՒՀ) համալսարանի առկա և հեռակա համակարգերի 2-րդ կուրս: 2017/2018 ուստարում ՄՄՊՈՒՀ-ներից ԵՊՀ առկա համակարգ է ընդունվել 34 ուսանող, հեռակա՝ 95 ուսանող:

Համալսարանի տարբեր ֆակուլտետներում ընդունելություն է իրականացվել նաև 2-րդ մասնագիտության դիմողների համար: 2017/2018 ուստարում առկա համակարգ ընդունված ուսանող չի եղել, իսկ հեռակա համակարգ ընդունվել է 8 հոգի:

6. Դասախոսական կազմ և ուսումնական բեռնվածություն

2017/2018 ուսումնական տարում համալսարանի հիմնական դասախոսական կազմում եղել է 1192 դասախոս, որից պրոֆեսոր՝ 178 (14,8 %), դոցենտ՝ 496 (41,5 %), ասիստենտ և դասախոս՝ 518 (43,2 %): Այդ կազմից 849 հոգին (71,2 %) ունի գիտական աստիճան: Իզական սեռի հիմնական դասախոսների թիվը եղել է 687 (57,6 %):

Շարունակվել է աշխատանքը ԵՊՀ դասախոսական կազմի երիտասարդացման ուղղությամբ՝ մասնավորապես բարձր տարիքի դասախոսների ուսումնական բեռնվածության նվազեցման և դասավանդման գործընթացում երիտասարդ դասախոսների ներգրավման միջոցով: Հաշվետու ուստարում դասախոսական կազմը համալրվել է 30 նոր դասախոսով, որոնցից 5-ը՝ ԵՊՀ ասպիրանտուրայից: Հիմնական դասախոսական կազմում մինչև 35 տարեկան դասախոսների թիվը կազմել է 166, 35-65 տարեկաններինը՝ 767, իսկ 65-ից բարձր՝ 228:

2017/2018 ուստարում լրիվ հաստիքային համարժեքով ուսանող/դասախոս հարաբերակցությունը կազմել է 14,3:

7. Դասախոսների որակավորման բարձրացում և մասնագետների վերապատրաստում

Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ-ում հետբուհական լրացուցիչ կրթությունը զարգացել է համալսարանի ռազմավարական նպատակներին համահունչ: Աշխա-

տանքներն ընթացել են երկու ուղղությամբ՝ կազմակերպվել են դասընթացներ երկու հիմնական կրթական ծրագրերով՝ դասախոսների որակավորման բարձրացում և մասնագիտական վերապատրաստում, միաժամանակ կատարվել են ուսումնասիրություններ լրացուցիչ կրթական ծրագրերի հետագա զարգացման և հանրային իրազեկման ուղղությամբ, ինչպես նաև նախապատրաստվել են փոփոխություններ գործող ծրագրերում:

Լրացուցիչ կրթության առաջին հիմնական ծրագիրը դասախոսական կազմի որակավորման բարձրացումն է: ԵՊՀ ղեկավարությունը, ինչպես միշտ, հատուկ ուշադրություն է դարձնում համալսարանական կրթության որակն ապահովող դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական կոմպետենցիաների զարգացմանը: Ծրագիրն իրականացման երկրորդ փուլում է. գործող կանոնակարգի համաձայն՝ 2017/2018 ուստարում նորացվել է դասընթացների ցանկը, մշակվել են դրանց ուսումնական ծրագրերը: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել է 24 դասընթաց, որոնց մասնակցել է 927 ունկնդիր: Սկսնակ դասախոսների համար կազմակերպվել է երեք դասընթաց՝ «Դասավանդման, ուսումնառության և գնահատման հիմունքները», «Առցանց ուսուցման տեխնոլոգիաներ» և «Google Classroom-ը հեռավար կրթության համատեքստում»: Մշտադիտարկումը ցույց է տալիս, որ հիմնական դասախոսական կազմը ակտիվորեն է մասնակցել ընդհանուր և անձնային զարգացում ապահովող դասընթացներին: Առավել պահանջված են եղել «Մարդու իրավունքների պաշտպանություն», «Կրթական օրենսդրություն», «Արդյունավետ հաղորդակցման հմտություններ», «Որոշումների կայացումը բանակցություններում» և նման դասընթացներ: Միաժամանակ մտահոգիչ է դասախոսների պասիվ մասնակցությունը պարտադիր դասընթացներին, որոնք ծրագրում ներառված են որոշակի նպատակադրումով: Իսկ դրանք ընդամենը երկուսն են՝ «Անգլերենը ակադեմիական միջավայրում» և «Մասնագիտության արդի հիմնախնդիրները»: Անգլերենի դասընթացին մասնակցել և քննություն է հանձնել ընդամենը 37 դասախոս, իսկ պարտադիր մասնագիտական դասընթաց կազմակերպվել է երկու մասնագիտությամբ՝ անգլերեն և հոգեբանություն: Նշենք՝ որակավորման բարձրացման ծրագրի երկրորդ փուլում այս դասընթացին ներկայացված են հստակ չափանիշներ՝ կազմել մասնագիտության հիմնախնդիրներն ամփոփող ծրագիր՝ այն ապահովելով համապատասխան դասա-

վանդողներով: Բայց ֆակուլտետները խույս են տալիս դասընթացն սկսելուց. խմբա-
յին աշխատանք մեզ մոտ դժվար է ստացվում:

Լրացուցիչ կրթության երկրորդ ծրագրին՝ մասնագիտական վերապատրաստ-
մանը, մասնակցել է 305 ունկնդիր: ԵՊՀ-ում իրականացվող այս ծրագրի հիմնական
մասնակիցները հանրային ծառայողներն են: Սակայն հաշվետու ուստարում նրանց
թիվը զգալիորեն պակասել է՝ կապված ՀՀ քաղաքացիական ծառայության համակար-
գի վերակազմակերպման հետ: Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման
ծրագրերին մասնակցել է ընդամենը 157 մարդ: Ակնկալում ենք, որ համակարգի նո-
րացումը կխթանի ԵՊՀ-ում բավական արդյունավետ գործառած այդ ծրագրի վեր-
սկսումը:

Վերապատրաստման ոլորտում ԵՊՀ երկրորդ գործընկերը ՀՀ պաշտպանության
նախարարությունն է, որի հետ շարունակվել է բազմակողմ համագործակցությունը:
«Ռեզմական հոգեբանություն», «ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական ուղ-
ղությունները» և «Գործավարություն» թեմաներով կազմակերպված դասընթացներն
ավարտել է 84 ունկնդիր: ԵՊՀ հետբուհական լրացուցիչ կրթության վարչությունը ՀՀ
ՊՆ աշխատակիցների համար իրականացնում է ոչ միայն վերապատրաստում, այլև
կրթական կարիքների ուսումնասիրում և խորհրդատվություն, մասնակցում ՀՀ-ում
ռազմական կրթության համակարգի զարգացմանը նվիրված քննարկումներին և աշ-
խատաժողովներին: Երևանի պետական համալսարանը, ակտիվորեն ներգրավված
լինելով բարձրագույն կրթության ոլորտում իրականացվող ծրագրերում, իր փորձն է
հաղորդում ՀՀ ռազմական բուհերին նաև որակավորման բարձրացման և վերապատ-
րաստման ձևաչափով:

2017/2018 ուստարում վերապատրաստում է իրականացվել նաև ԵՊՀ վարչական
աշխատողների համար: Ուսումնամեթոդական վարչության և Հայագիտական հետա-
զոտությունների ինստիտուտի 62 աշխատակիցներ մասնակցել են անգլերենի, տեղե-
կատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների և մասնագիտական դասընթաց-
ների:

Հաշվետու ժամանակաշրջանում լրացուցիչ կրթության ոլորտում ներդրվել է նոր
ծրագիր: Վարչությունն առաջին անգամ դասընթացի ծրագիր է մշակել և իրականաց-
րել «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի աշխատակիցների վերա-

պատրաստում՝ «Ընդհանուր քիմիա» մասնագիտությամբ (240 ժամ ծավալով): Ծրագիրը կարող է լինել շարունակական և արդյունավետ՝ Քիմիայի ֆակուլտետի մարդկային, հետազոտական և լաբորատոր ռեսուրսների օգտագործման տեսանկյունից:

Հետբուհական լրացուցիչ կրթության վարչությունը ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի շրջանակներում ուսումնասիրել է լրացուցիչ կրթության հանրային պահանջարկը, ինչպես նաև իրականացրել կրթական ծրագրերի մշտադիտարկում: Աշխատաշուկայում մասնագետներին ներկայացվող պահանջների փոփոխությունները, լրացուցիչ կրթական ծրագրերի որակի ապահովումը և վերապատրաստող հաստատությունների մրցակցությունը անհրաժեշտ են դարձնում ԵՊՀ-ում գործող լրացուցիչ կրթական ծրագրերի պարբերական նորացում: Իրականացված մշտադիտարկման արդյունքում ամբողջությամբ կամ մասնակիորեն լրամշակվել են վարչության լրացուցիչ կրթական ծրագրերը՝ և՛ բովանդակային, և՛ կադրային ապահովման առումով:

8. Տեղեկատվական ռեսուրսների զարգացում

2017/2018 ուսումնական տարում Երևանի պետական համալսարանում շարունակվել են աշխատանքները տեղեկատվական արդի տեխնոլոգիաների մշակման, ներդրման և գործարկման ուղղությամբ: Այս առումով ԵՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնը (ՏՏԿՀԿ) իրականացրել է ծավալուն գործունեություն կրթական նոր տեխնոլոգիաների օգտագործման և մշակման, ՏՏ բնագավառում մագիստրոսական կրթական ծրագրերի և առանձին դասընթացների իրականացման, գիտահետազոտական աշխատանքների կատարման, համալսարանական կրթության կառավարման և որակի ապահովման, տեղեկատվական համակարգերի մշակման և ներդրման ուղղությամբ:

Կենտրոնի աշխատակիցները ստացել են հերթական ԱՄՆ արտոնագիրը, ինչպես նաև էլեկտրոնային սարքերի ու համակարգերի թեստավորման բնագավառում երկու ԱՄՆ արտոնագրի հայտեր ներկայացվել են տպագրության:

2018 թ. ԱՄՆ Սան Խոսեի պետական համալսարանի հետ ստորագրվել է հուշագիր՝ ՏՏ ասպարեզում համատեղ մագիստրոսական ծրագրեր իրականացնելու համար՝ մասնավորապես մեծ ծավալի տվյալների վերլուծության ուղղությամբ:

2015 թ. Եվրամիության «ERASMUS+» ծրագրի շրջանակում ստացված «Երկու փուլ պարունակող նորարարական ուսումնական ծրագիր միկրոէլեկտրոնային ճարտարագիտության բնագավառում» (“Development of two cycle innovative curricula in microelectronic engineering” - DOCMEN) դրամաշնորհի կատարման ժամկետը, որն ավարտվելու էր 2018 թ., երկարացվել է մեկ տարով, և շարունակվել են աշխատանքները այդ ուղղությամբ: Դրամաշնորհի շրջանակներում ՏՏԿՀԿ գիտական ղեկավար Սամվել Շուքուրյանը 2018 թ. ապրիլին այցելել է Իսրայելի Բար-Իլլան համալսարան ու Հոլոնի տեխնոլոգիական ինստիտուտ, անցկացրել է վարպետության դասեր, որոնք մեծ հետաքրքրություն են առաջացրել ուսանողների, դասախոսների և հետազոտողների շրջանում: Շուքուրյանը ստացել է հրավեր՝ զեկուցված ուղղությամբ ղեկավարելու ասպիրանտական աշխատանքներ Բար-Իլլան համալսարանում: Այցելության ժամանակ նաև անցկացվել են բանակցություններ համատեղ հետազոտական աշխատանքների և կրթական ծրագրերի մեկնարկի վերաբերյալ: Ներկայումս համապատասխան առաջարկները քննարկման փուլում են:

ՏՏԿՀ կենտրոնի աշխատակիցների կողմից ղեկավարվում են «Փոփոխություն լսարանում. Նորարարական դասավանդման և ուսումնառության օժանդակում՝ Արևելյան գործընկերության երկրներում ուսանողի ուսումնական փորձառության բարելավման նպատակով» նախագծի շրջանակներում նորարարական դասավանդման և ուսումնառության վիրտուալ հարթակի (VATL) ստեղծման աշխատանքները: Այդ աշխատանքային փաթեթի նպատակն է բաց կրթական ռեսուրսների օգտագործմամբ ստեղծել վիրտուալ հարթակ դասավանդման և ուսումնառության նորարար տեխնոլոգիաների խթանման և տարածման համար: VATL հարթակը հնարավորություն կտա ներմուծել և դիտարկել դասավանդման և ուսումնառության բաց օնլայն նյութերը, ինչպես նաև կմատուցի ուսուցիչների զարգացման ծառայություններ: VATL հարթակը կօգտագործվի Արևելյան գործընկերության տարածաշրջանի ակադեմիական համայնքի կողմից:

2017/2018 ուստարում ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի «Որակյալ կրթություն» նպատակի խնդրիներից մեկի շրջանակներում մեկնարկվել են աշխատանքները «Հետազոտության պլանավորում և մեթոդներ» համընդ-

հանուր համալսարանական ինտերակտիվ դասընթացի իրականացման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում SS կրթական և հետազոտական կենտրոնում կազմակերպվել և իրականացվել է ԵՊՀ 60 դասախոսի վերապատրաստում ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և առցանց դասընթացների մատուցման համար:

Շարունակվում են ծրագրային գործիքների մշակման աշխատանքները շարժական սարքերի միջոցով դասընթացների հասանելիության համար: Հաշվետու ժամանակահատվածում հեռակա ուսուցման բակալավրիատի բոլոր հոսքերում, իսկ առկա ուսուցման քսան հոսքում հեռահար ուսուցման եղանակով դասավանդվել են «Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ» և վեց հոսքում՝ «Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ» դասընթացները: Նորացվել են ուսուցանվող ռեսուրսները և ծրագրային գործիքները: Մասնավորապես՝ վերամշակվել է «Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ» դասընթացի 400 և «Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ» դասընթացի 350 հարց:

Վերամշակվել է «Համակարգչից օգտվելու հմտություններ» համահամալսարանական դասընթացի կառուցվածքը: Ստեղծվել են դասընթացի բոլոր թեմաների տեսանյութերը և դրանք ներառող մոտ 800 հարցից բաղկացած շտեմարան:

Հաշվետու ժամանակաշրջանում SSԿՀ կենտրոնի աշխատակիցները զեկույցներով հանդես են եկել բազմաթիվ հեղինակավոր միջազգային գիտաժողովներում, որոնք ընդգրկված են Scopus և Web of Science համակարգերում, այդ թվում՝ International Test Conference, IEEE VLSI Test Symposium, IEEE European Test Symposium, IEEE On-line Test Symposium, IEEE East-West Design and Test Symposium:

9. Պլանավորում և կառավարում

ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ընթացքը պարբերաբար ենթարկվում է մշտադիտարկման, որի արդյունքների հիման վրա կատարվում է տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունների իրականացման գնահատում: 2017/2018 ուստարվա համար նախատեսված աշխատանքների կատարումը ևս մշտադիտարկվել է, կազմվել և հրատարակվել է

համապատասխան գեկույց: Ձեկույցում ներկայացված են ՌԾ ժամանակացույց-պլանով հաշվետու ուստարվա համար սահմանված խնդիրներն ու գործողությունները, հանգամանորեն նկարագրված են դրանց արդյունքները կամ չկատարման պատճառները: ՌԾ կատարողականի վերլուծությունը հնարավորություն է տալիս արձանագրել համալսարանի գործունեության տարբեր ոլորտների հաջողությունները և բացահայտել թերացումները:

* * *

2017/2018 ուստարում ԵՊՀ կրթական գործունեության ընդհանուր ասպարեզում արձանագրվել են որոշակի ձեռքբերումներ նախատեսված գործընթացների մեծամասնության հաջող իրականացման շնորհիվ: Այդուհանդերձ, առկա են նաև մի շարք բացթողումներ ու թերացումներ, որոնցից պետք է նշել հետևյալները.

- Բարելավման և ակտիվացման կարիք ունեն ԵՊՀ կարևորագույն արտաքին շահակիցներին՝ շրջանավարտներին, հիմնական գործատու կազմակերպություններին և աշխատաշուկայի ներկայացուցիչներին կրթական ծրագրերի մասնագիտական փորձաքննության գործընթացներում ներգրավելու ուղղությամբ ձեռնարկվող քայլերը:
- Դասավանդման նորարարական և տեխնոլոգիապես հզորացված մեթոդների ներդրումը համալսարանի պրակտիկայում դեռևս մնում է կարևորագույն խնդիրներից մեկը:
- ԵՊՀ դասախոսական կազմի վերապատրաստման (որակավորման բարձրացման) խնդիրը համալսարանի կարևորագույն մարտահրավերներից է և պահանջում է համապատասխան ռեսուրսների ու խրախուսման մեխանիզմների ներդրում:
- Համալսարանում դեռևս չի ձևավորվել որակի ներքին մշակույթ՝ պայմանավորված ՈԱ գործընթացներում ֆակուլտետների և ամբիոնների ներգրավվածության ցածր մակարդակով:
- Կրթական ծրագրերի իրականացման ասպարեզում դեռևս ամբողջովին չի գործում որակի կառավարման պլանավորում-իրագործում-գնահատում-բարելավում շրջափուլը:

- Որակի ապահովման ոչ բոլոր ընթացակարգերն են գործադրված, օրինակ՝ ուսումնառության ռեսուրսների և օժանդակ ծառայությունների գնահատման ասպարեզում:
- Դեռևս չեն գործում կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի և պարբերական գնահատման գործընթացները:
- Օրակարգային խնդիր է մնում ուսանողներին մատուցվող կրթական, խորհրդատվական և այլ օժանդակ ծառայությունների արդյունավետության գնահատման համակարգի ներդրումը:

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ-ն արդյունավետ գիտահետազոտական գործունեություն է ծավալել հիմնականում հետևյալ ուղղություններով՝ պետական բազային («Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում»), թեմատիկ և դրամաշնորհային ծրագրեր: Բազային ծրագրերի ոլորտում ԵՊՀ-ում 2 նոր գիտահետազոտական լաբորատորիա է ֆինանսավորվել՝ սկսած 2018 թվականից: Մի շարք համալսարանականներ ընդգրկվել են գիտական նոր ծրագրերում և դրամաշնորհներում: Գիտահետազոտական գործունեություն է իրականացվել Հայագիտական հետազոտությունների ինստիտուտում, Կենսաբանության, Ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտներում, 30 գիտահետազոտական կենտրոններում և լաբորատորիաներում:

2017/2018 ուստարում ԵՊՀ-ում իրականացված գիտական գործունեության արդյունքներն ու ձեռքբերումները ներկայացված են 1456 հոդվածներում և 58 մենագրություններում: Համալսարանականների կողմից ավելի քան 236 թեզիս է ներկայացվել տեղական և միջազգային գիտաժողովներին: Հաշվետու ուստարում գիտության բնագավառում ակնառու ձեռքբերումների համար որոշ համալսարանականներ արժանացել են պարգևների և մեդալների: ԵՊՀ գիտական քաղաքականության գծով պրոռեկտոր, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գեղամ Գևորգյանը և Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի ասիստենտ, ֆիզմաթ գիտությունների դոկտոր Կարեն Քեոյանը «Որոշ օրթոգոնալ շարքերի զուգամիտության և միակության հարցեր» գիտական հոդվածների շարքի համար արժանացել են ՀՀ նախագահի մրցանակի: Երկարամյա բարեխիղճ և արդյունավետ աշխատանքի համար ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի ֆիզիկական և կոլոիդների քիմիայի ամբիոնի վարիչ, քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Շիրազ Մարգարյանը պարգևատրվել է Անանիա Շիրակացու մեդալով, իսկ Պատմության ֆակուլտետի համաշխարհային պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալբերտ Ստեփանյանը պարգևատրվել է Մովսես Խորենացու մեդալով:

ԵՊՀ-ում 2017/2018 ուստարում իրականացված բազմաթիվ միջազգային գիտական ծրագրերից կարելի է առանձնացնել հետևյալները.

- Խմբակային գրգռումները հեռանկարային նանոկառուցվածքներում (նախագիծն իրականացվում է «Հորիզոն 2020»-ի շրջանակներում): Ղեկավար՝ Սարգսյան Հ. Ա. (Ֆիզիկայի ֆակուլտետ)
- Հիմնարար և կիրառական միկրոկենսաբանության մեջ հետազոտության վրա հիմնված բարձրագույն կրթության բարելավման ցանց (ծրագիրը ֆինանսավորվում է Նորվեգական SIU կենտրոնի կողմից): Ղեկավար՝ Փանոսյան Հ. Հ. (Կենսաբանության ֆակուլտետ)
- Դեղանյութերի առաքման հիբրիդային համակարգեր՝ հիմնված մեզոպորային նյութերի, վիրոսոմների վրա (նախագիծն իրականացվում է «Հորիզոն 2020»-ի շրջանակներում): Ղեկավար՝ Առաքելյան Վ. Բ. (Ֆիզիկայի ֆակուլտետ)
- Պինդմարմնային գազային սենսորներ անվտանգության համար և ռազմական սպառնալիքների դեմ (ՆԱՏՕ-ի կողմից ֆինանսավորված ծրագիր): Ղեկավար՝ Հարությունյան Վ. Մ. (Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ)
- Անհատական սնունդը ծերացող հասարակությունում. տարիքի հետ կապված հիմնական հիվանդությունների օքսիդավերականգման ռեակցիաների վերահսկում: (Եվրոպական COST ծրագիր, որը ֆինանսավորվում է «Հորիզոն 2020»-ի շրջանակներում): Ղեկավար՝ Թոչունյան Ա. Հ. (Կենսաբանության ֆակուլտետ)

Աշխատանքը բնականոն ընթացքով շարունակել է ԵՊՀ-ում նախորդ ուստարվանից գործող Ֆիզիկատեխնիկական հետազոտությունների կենտրոնը՝ իր 3 լաբորատորիաներով, որոնց նպատակն է հնարավորություն տալ և ուղղորդել ուսանողների ինքնուրույն հետազոտական աշխատանքները: Հաշվետու ուստարվանից բարեհաջող գործարկվել է նաև Համաշխարհային բանկի ֆինանսական աջակցությամբ ստեղծված Մանրեաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոնը:

Դրամաշնորհային (թեմատիկ, հայ-բելառուսական, հայ-ռուսական և երիտասարդ գիտնականների) ծրագրերի շրջանակներում ստացված արդյունքների գիտական ու գիտատեխնիկական նորույթը և արդիականությունը գնահատելու համար գիտական փորձաքննության են ներկայացվել վերջիններիս հաշվետվությունները:

ԵՊՀ-ում 2017/2018 ուսումնական տարում ամփոփվել է 48 թեմատիկ դրամաշնորհային ծրագիր, շարունակվել են 1 նպատակային, 9 ասպիրանտների և երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության, 5 հայ-բելառուսական, 11 հայ-ռուսական դրամաշնորհային ծրագրեր, որոնցից 10-ը բարեհաջող ավարտվել են: Նշված ծրագրերին 2018 թվականից ավելացել է նաև 10 հայ-ռուսական դրամաշնորհային ծրագիր: Ընդհանուր առմամբ, վերջին 3 տարվա կտրվածքով, ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի կողմից հայտարարված դրամաշնորհային ծրագրերի մրցութային շեմը հաղթահարած ծրագրերի մոտ 30 %-ը բաժին է ընկնում Երևանի պետական համալսարանին, իսկ բուհերի կողմից մրցութային շեմը հաղթահարած ծրագրերում այդ մասնաբաժինը կազմում է ավելի քան 50 %: Ներկայումս ԵՊՀ գիտական ենթակառուցվածքներում աշխատողների թիվը 454 է, որից 344-ը գիտաշխատողներ են: Նրանցից 151-ը ընդգրկված են նաև պետական դրամաշնորհային ծրագրերում: Համալսարանականներից ևս 152-ը նույնպես ընդգրկված են պետական դրամաշնորհային ծրագրերում: ԵՊՀ գիտական քաղաքականության վարչության կողմից շարունակաբար կազմակերպվում են «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրերի» թափուր պաշտոնների համար մրցույթներ: Հաշվետու ժամանակաշրջանում վարչության աջակցությամբ ձևակերպվել և պետական գրանցում է ստացել 10 արտոնագիր, որից 3-ը՝ ռադիոֆիզիկայի բնագավառում, 7-ը՝ քիմիայի: Աշխատանքներ են տարվել «Եվրասիական արտոնագրային տեղեկատվական բազայից» ԵՊՀ գիտահետազոտական ստորաբաժանումների ազատ օգտվելու ուղղությամբ:

Գիտական քաղաքականության վարչության կողմից մշակվել է ԵՊՀ միասնական հաշվետվողական համակարգի գիտությանն առնչվող հատվածը, որը գործում է www.intranet.yasu.am հաշվետվողականության ընդհանուր համակարգում: Համակարգը միտված է դյուրացնելու բոլոր այն գործընթացները, որոնք առնչվում են ԵՊՀ աշխատողի գիտակրթական գործունեության հաշվետվությանը, և արդյունավետ համակարգելու այդ հաշվետվության վրա հիմնված այլ գործառույթներ: Համակարգի շրջանակներում վարչության աշխատակիցները ստուգում են ԵՊՀ աշխատողների կողմից համակարգ ներբեռնված գիտական գործունեությանն առնչվող աշխատությունների մասին համապատասխան տեղեկատվությունը: Վարչության կողմից իրականաց-

վում է համակարգ մուտքագրված գիտական պարբերականների և ժողովածուների դասակարգում՝ ըստ ազդեցության գործակցով ամսագրերի, համաձայն Clarivate Analytics գործակալության ամենամյա Journal Citation Reports (JCR) զեկուցման մեջ ամփոփված ազդեցության գործակցով պարբերականների ցանկի, և ըստ «Web of Science» ու «Scopus» միջազգային գիտական շտեմարանների: www.intranet.yasu.am հաշվետվողականության համակարգը անընդհատ վերանայվում և վերամշակվում է՝ ապահովելով համակարգի ճկուն աշխատանքը:

Համաձայն ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի 4.3 կետի 1-ին և 2-րդ ենթակետերի՝ մշակվել և ԵՊՀ գիտխորհրդի կողմից ընդունվել է «Երևանի պետական համալսարանի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը», որը կիրառվում է 2016 թ. սեպտեմբերի 1-ից: Կարգը միտված է խթանելու ԵՊՀ աշխատողների ինչպես գիտահետազոտական, այնպես կրթական ակտիվ և արդյունավետ գործունեությունը: Մասնավորապես, ըստ նշված կարգի՝ խրախուսվում է միջազգային հեղինակավոր գիտական պարբերականներում (որոնք ընդգրկված են Web of Science և Scopus շտեմարաններում) ԵՊՀ աշխատողների կողմից հոդվածների հրապարակումը: Միջազգային համագործակցությունը խթանելու համար հատուկ ուշադրություն է դարձվում նաև արտասահմանյան գիտակրթական կազմակերպությունների աշխատակիցների հետ համատեղ տպագրություններին: Կարգի շրջանակներում ԵՊՀ աշխատողների գիտամանկավարժական առաջընթացը գնահատելու համար լրավճար է սահմանված գիտական աստիճան և կոչում ստանալու համար:

Համաձայն վերոնշյալ կարգի՝ ԵՊՀ աշխատողները Ինտրանետ (www.intranet.yasu.am) հաշվետվողականության ընդհանուր համակարգում մուտքագրում են իրենց գիտակրթական գործունեությանն առնչվող հրապարակումները, ինչի հիման վրա էլ հաշվարկվում է լրավճարը:

2017 թ. դեկտեմբեր ամսվա ընթացքում առաջին անգամ, համաձայն լրավճարների մասին կարգի, Ինտրանետ համակարգում մուտքագրված աշխատությունների հիման վրա ԵՊՀ աշխատողներին հատկացվել են լրավճարներ: Մասնավորապես՝ միջազգային հեղինակավոր գիտական պարբերականներում հոդված հրապարակելու համար ԵՊՀ շուրջ 220 աշխատողի հատկացվել է մոտ 21 մլն ՀՀ դրամ, կարգին համա-

պատասխան մենագրություն հրապարակելու համար՝ 50 աշխատողի՝ մոտ 7.5 մլն ՀՀ դրամ, գիտական աստիճան/կոչում ստանալու համար՝ 52 աշխատողի՝ 7.2 մլն ՀՀ դրամ: Առհասարակ գիտահետազոտական գործունեության համար ԵՊՀ ավելի քան 700 աշխատողի հատկացվել է շուրջ 65 մլն ՀՀ դրամ:

ԵՊՀ աշխատողներին լրավճարներ հատկացվել են նաև իրականացված ուսումնամեթոդական գործունեության համար: Մասնավորապես՝ ԵՊՀ աշակերտական, ուսանողական և հանրապետական օլիմպիադաներ կազմակերպելու, միջազգային առարկայական ուսանողական օլիմպիադաներին ԵՊՀ ուսանողներին նախապատրաստելու, ՈՒԳԸ գիտական ղեկավարման (16 դասախոս) և ՈՒԳԸ տարեկան գիտաժողովի նյութերի ժողովածուում ուսանողի կողմից հրապարակված աշխատանքի ղեկավարման (109 ուսանող, 71 դասախոս) համար շուրջ 190 աշխատողի հատկացվել է ավելի քան 8 մլն ՀՀ դրամ, իսկ դասավանդման գործընթացում ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների կիրառման և ՀՀ ԿԳՆ-ի կողմից երաշխավորված բուհական դասագրքերի ներդրման համար՝ ավելի քան 50 դասախոսի՝ շուրջ 4 մլն ՀՀ դրամ:

Լրավճար հատկացվել է նաև այն դասախոսներին (բացառությամբ ժամավճարային հիմունքներով աշխատողների), ովքեր ընդգրկվել են ուսանողների հարցման արդյունքներով անցկացվող մրցութային ցուցակներում: Արդյունքում, 157 դասախոս ստացել է լրավճար, որի գումարը կազմել է ավելի քան 17 մլն ՀՀ դրամ:

ԵՊՀ գիտական քաղաքականության վարչության կողմից իրականացվում է նաև որոշ գիտաժողովների մշտադիտարկում՝ համաձայն ԵՊՀ կողմից կազմակերպվող գիտաժողովներին դրամական աջակցություն տրամադրելու կարգի: Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպված և իրականացված գիտական միջոցառումներից կարելի է առանձնացնել հետևյալները՝ «Կոմպակտ աստղերի և ռելատիվիստական գրավիտացիայի արդիական ֆիզիկա» (25-30 սեպտեմբերի, 2017 թ.), ԵՊՀ ՈՒԳԸ միջազգային 4-րդ գիտական նստաշրջան, (2-6 հոկտեմբերի, 2017 թ.), «Էներգաարդյունավետության ապահովման հիմնախնդիրները ՀՀ-ում» (30-31 հոկտեմբերի, 2017 թ.), «Կրթության հիմնահարցերը 21-րդ դարում» (19-20 հոկտեմբերի, 2017 թ.), «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» VI միջազգային գիտաժողով (13-15 հոկտեմբերի, 2017 թ.), ԵՊՀ ՈՒԳԸ միջազգային 5-րդ գիտական նստաշրջան,

(16-20 ապրիլի, 2018 թ.), «Հայոց լեզու. Մաշտոցից մինչև մեր օրերը» (17 հունիսի, 2018 թ.):

Միջազգային օլիմպիադաներին, ծրագրերին և մրցույթներին ակտիվորեն մասնակցում են նաև շատ ուսանողներ: Ուրախալի է, որ աճում է նրանց հետաքրքրությունը գիտահետազոտական աշխատանքի նկատմամբ: Հաշվետու ժամանակաշրջանում ևս նրանցից շատերը լուրջ հաջողություններ են գրանցել՝ միջազգային հարթակներում բարձր պահելով ԵՊՀ վարկանիշը: Մասնավորապես՝ 2018 թվականի հուլիսի 22-28-ը Բուդապեշտի Բլագոնգրադ քաղաքում տեղի ունեցած 25-րդ մաթեմատիկական միջազգային ուսանողական օլիմպիադայում (International Mathematics Competition), որին մասնակցել են աշխարհի 70 համալսարանների թիմեր (351 մասնակից), Հայաստանը ներկայացրել է Երևանի պետական համալսարանի թիմը՝ 4 մասնակիցներով: Նրանցից երեքը՝ Գևորգ Մնացականյանը, Ալբերտ Գևորգյանը (Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ) և Արսեն Համբարձումյանը (Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ), արժանացել են ոսկե, իսկ Վահագն Ալթունյանը (Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ)՝ արծաթե մեդալների: Թիմային առաջնությունում ԵՊՀ թիմը գրանցել է աննախադեպ արդյունք՝ 2 տարվա ընթացքում 15-րդ տեղից բարձրանալով մինչև 4-րդ տեղը (նախորդ տարի 7-րդ տեղում էր): Ուսանողական միջազգային օլիմպիադայի ԵՊՀ թիմը ղեկավարել է ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի ասիստենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Կարեն Քեոյանը, ով թիմի ղեկավարներից արդյունավետությամբ 3-րդն էր:

2017/2018 ուստարում գիտական քաղաքականության վարչության կողմից շարունակվել են աշխատանքները ԵՊՀ ողջ գիտական և վերջինիս օժանդակ աշխատակազմի կադրային գործերի վարման թվայնացման ուղղությամբ:

* * *

ԵՊՀ հայազիտական հետազոտությունների ինստիտուտը (ՀՀԻ) հաշվետու ժամանակահատվածում շարունակել է ակտիվ գործունեությունը գիտակրթական ոլորտում:

Ինստիտուտը 2018 թ. ընթացքում հրատարակել է 4 մենագրություն, 39 գիտական հոդված, 4 զեկուցումների թեզիս, 8 գրախոսություն, 20 քարտեզ, 1 փաստաթղթերի մատենագիտական ժողովածու: Ինստիտուտի գիտաշխատողները մասնակցել են հանրապետական և միջազգային բազմաթիվ գիտաժողովների, կյոք սեղանների: ՀՀԻ գիտաշխատողները Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի պահոցներում գտնվող մեծաքանակ արխիվային ֆոնդերի համակարգման կարևոր աշխատանքներ են իրականացրել, որի արդյունքում Հայոց ցեղասպանության թեմային առնչվող շուրջ 1800 փաստաթուղթ է ցուցակավորվել: Այս աշխատանքները Պատրիարքարանի հետ գործակցաբար շարունակական բնույթ են կրելու:

Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը համալսարանական և արտահամալսարանական կամավորների հետ վիրտուալ հայագիտության և տեղեկատվության բաժնին կից շարունակում է իրականացնել «Հայ ազգ» էլեկտրոնային հանրագիտարանի հայերեն (<http://am.hayazg.info>) և անգլերեն տարբերակների խմբագրությունը (<http://en.hayazg.info>): Հայերեն կայքում հոդվածների թիվը արդեն գերազանցում է 3880-ը: 2017 թվականի մարտի սկզբից գործարկված հանրագիտարանի անգլերեն կայքի հոդվածների թիվը հասել է 541-ի:

2013 թվականից հաջողությամբ իրականացվող «Ցեղասպանագիտություն» մագիստրոսական ծրագիրը շարունակում է համալրվել նոր ուսանողներով: Ծրագիրն ունի 8 ուսանող և արդեն տվել է 25 շրջանավարտ, որից 5-ը՝ ասպիրանտ և հայցորդ, իսկ 4-ը աշխատում են ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտում: Ինստիտուտը ԵՊՀ պատմության ֆակուլտետի սփյուռքագիտության ամբիոնի հետ համատեղ շարունակում է իրականացնել «Հայագիտություն» մագիստրոսական ծրագիրը, որում ներգրավված ուսանողների ուսման վարձը տրվում է Համազգային հայ կրթական և մշակութային միության կողմից: Ծրագրի նպատակն է Սփյուռքի հայկական կրթօջախների համար պատրաստել հայոց լեզվի և գրականության, հայոց պատմության ուսուցիչներ: Կրթական դաշտում հետզհետե տարածում գտնող հեռաուսուցման համակարգը ևս ինստիտուտի ուշադրության կենտրոնում է: Հաշվետու ժամանակահատվածում ՀՀԻ «Հայոց պատմության հիմնահարցեր» հեռաուսուցման եռամսյա ծրագրին ավելացավ «Ցեղասպանագիտությունը»: Ավելին, տարիների ընթացքում ինստիտուտում թափ առած հայագիտական գրականության թվայնացումն ու զե-

տեղումն ինստիտուտի հայագիտական 8 կայքերում այսօր մեկ քայլ առաջ է տանում ՀՀԻ հեռաուսուցման համակարգը՝ վերջինիս ապահովելով հարուստ մասնագիտական տեղեկատվական պաշարով: Որպես հիմնական լսարան դիտարկելով Սփյուռքը՝ շարունակվում են աշխատանքները ուսանողների թվի ու աշխարհագրության ընդլայնման առումով, ինչպես նաև նոր ծրագրեր մշակելու և գոյություն ունեցող ծրագիրը հայերենից մի շարք օտար լեզուների վերածելու ուղղությամբ: Մշակման փուլում է «Հայոց լեզու» հեռաուսուցման վեց ուսուցման մակարդակներից բաղկացած ծրագիրը, որը նախատեսված է ռուսախոս լսարանի համար:

* * *

ԵՊՀ գիտական գործունեության կարևոր բաղադրիչներից է բարձր որակավորման գիտական կադրերի պատրաստումը: Այս տեսակետից կարևորվում է ասպիրանտական ուսումնառությունը: Առանձնակի ուշադրություն է դարձվում ինչպես գիտական երիտասարդ ներուժի արդյունավետ օգտագործմանը, գիտական աշխատանքներում ասպիրանտների, հայցորդների և մագիստրոսների ակտիվ ներգրավմանը, այնպես էլ ուսումնական գործընթացներում (դասախոսական աշխատանքում) ասպիրանտների հավուր պատշաճի ընդգրկվածությունը: Վերջինս հատկապես կարևոր է սահուն սերնդափոխությունն ապահովելու առումով:

2017-2018 թթ. հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ ասպիրանտուրայի առկա ուսուցման համակարգ ընդունվել է 37 հոգի՝ 31 մասնագիտություններով, հեռակա ուսուցման համակարգ՝ 66-ը՝ 42 մասնագիտություններով:

Հաշվետու ուստարում առկա ուսուցմամբ ասպիրանտուրան ավարտել է 36 ասպիրանտ, հեռակա ուսուցմամբ՝ 69:

Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպվել են որակավորման քննությունների գարնանային և աշնանային քննաշրջանները: Քննություններ են հանձնել 140 ասպիրանտ և հայցորդ: Ուսումնական երկու կիսամյակում կրեդիտային համակարգով կազմակերպվել են դասընթացներ՝ 10 առարկայից:

Տարվա ընթացքում ստեղծվել է ասպիրանտական բազա: Այժմ արդեն ԵՊՀ աշխատողների համացանցային ներքին տիրույթում (intranet.yasu.am) ընդգրկված են նաև առկա ուսուցման ասպիրանտները:

Ներկայումս ԵՊՀ ասպիրանտների ընդհանուր թիվը 367 է (95-ը՝ առկա ուսուցմամբ, 272-ը՝ հեռակա):

* * *

ԵՊՀ գիտահետազոտական գործունեության ոլորտում նշված ձեռքբերումների և հաջողությունների հետ միասին անցած ուստարում եղել են նաև որոշակի բացթողումներ: Մասնավորապես՝

- Բազային, թեմատիկ և ԵՊՀ-ի կողմից հատկացվող ֆինանսների սղության պատճառով շարունակում է ցածր մնալ գիտահետազոտական լաբորատորիաների վերազինման տեմպը:
- Շարունակում է նվազել գիտական գործունեությամբ զբաղվող գիտաշխատողների մեջ 35-55 տարեկանների թիվը:
- Կիրառական նշանակություն ունեցող գիտահետազոտական արդյունքները հիմնականում չեն վերածվում ներդրման պատրաստ տեխնոլոգիաների:
- Գիտահետազոտական ծրագրերի և առհասարակ գիտության ֆինանսավորման էլ ավելի պակասեցումը, մասնավորապես աշխատավարձերի ցածր մակարդակը, վտանգի տակ է դնում համալսարանը հեռանկարային երիտասարդ մասնագետներով համալրելը:
- Շարունակում է ցածր մնալ գիտական ծրագրերում ասպիրանտների և մագիստրոսների ընդգրկվածությունը:
- Չափազանց բարձր է առաջատար և ավագ գիտաշխատողների միջին տարիքը:

**ՄԱՐԳԻՍ ԵՎ ՄԱՐԻ ԻԶՄԻՐԼՅԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ**

Հաշվետու ուստարում համալսարանի գրադարանն իր բազմաշերտ տեղեկատվական գործառնություններով շարունակել է օժանդակել մայր բուհի գիտաուսումնական գործունեությանը:

Գրադարանի հաշվետու շրջանի գործունեության մասին հստակ պատկերացում կազմելու համար, այնուամենայնիվ, անհրաժեշտ է դիմել հաշվետվության ավանդական եղանակին, այսինքն՝ կատարված աշխատանքների թվային ցուցանիշներին: Գրադարանի զարգացումը պետք է դիտարկել 3 մասով՝ գրականության համալրում, ծառայություններ և գրադարանային պայմաններ: Հաշվետու շրջանում գրադարանի գրապաշարը դարձել է 2.160.026 միավոր: Համալրված գրականության ցուցանիշը, գերազանցելով անցած տարվանը 141 անուն 208 միավորով, կազմել է 725 անուն 12.778 միավոր, որից 10.801-ը գիրք է, 1.819-ը՝ ամսագիր, 113-ը՝ ատենախոսություն, 45-ը՝ տեղեկատվական այլ կրիչներ: Նշված նյութերից 7.970-ը գիտական է, 48 անուն 4.427 միավորը՝ ուսումնական, 381-ը՝ գեղարվեստական: Ինչպես երևում է վերոնշյալ թվերից՝ անցած ուստարվա համեմատ ուսումնական գրականության համալրման ցուցանիշն աճել է 254 միավորով, որը բուհական գրապաշարի համալրման գործընթացում կարելի է արձանագրել որպես դրական տեղաշարժ: Այնուհանդերձ, հարկ է նշել նաև ուսումնական գրականության պակասուրդը, ինչը փորձ է արվում համալրել ոչ միայն թղթային, այլ նաև էլեկտրոնային տարբերակներով: Սովորողին առավել հասանելի դարձնելու նպատակով ուսումնական ձեռնարկներն ու դասագրքերը դրված են թվայնացվող գրքերի առաջին պլանում: Չնայած դրան՝ շատ ընթերցողներ դեռևս նախընտրում են գրականության տպագիր տարբերակը:

Ծառայությունների մատուցումը գրադարանի կարևորագույն ցուցանիշներից է: Նախորդ ուստարում համալսարանականներին սպասարկվել է ավելի քան 3500 էլեկտրոնային հոդված:

Շարունակվել է նաև գրականության մուտքագրման գործընթացը: «Կոհա» էլեկտրոնային գրացուցակ են մուտքագրվել անցած ուստարվա ցուցանիշները 5.908-ով գերազանցող 49.658 միավոր գրականության տվյալներ: Կատարվել են նաև

Ֆոնդերի ստուգման, շուրջ 3.800 միավոր ռուսալեզու հնատիպների տվյալների ճշտման, մատենագիտական խմբագրման և քարտագրման աշխատանքներ:

Հաշվետու ուստարում հրատարակվել է գրադարանի կողմից կազմված «Լյուդ-միլա Հարությունյանի կենսամատենագիտությունը»:

Գրադարանից օգտվողների համար գրադարանային պայմաններն ունեն առաջնային նշանակություն: Հաշվի առնելով վերոնշյալը՝ «Իզմիրյան» հիմնադրամի կողմից գրադարանում կատարվել են մեծածավալ աշխատանքներ. մասնավորապես՝ վերանորոգվել են գրադարանի մասնաշենքի պատշգամբները, միջանցքները և ճեմասրահը, տանիքին տեղադրվել են ձյան/սառույցի հալեցման սարքեր՝ կաթոցներից խուսափելու համար, միջանցքների և պատշգամբների դռները փոխարինվել են նորերով, պատշգամբներում և Չարենցի փողոցի կողմից ճեմասրահում կարգավորվել է լուսավորությունը, վերանորոգվել է գրադարանի դրսի պատշգամբը: ԵՊՀ-ն ևս իրականացրել է մի շարք աշխատանքներ, ինչի արդյունքում տեղադրվել է տեսանկարահանման համակարգ, ձեռք է բերվել գրադարանային կահույք (Չարենցի փողոցի կողմից ճեմասրահում, ինչպես նաև ընթերցասրահների մի մասում տեղադրվել են նոր սեղաններ և աթոռներ), պատշգամբներում տեղադրվել են վարդակներ ուսանողների համար: Չնայած այս ամենին՝ դեռևս առաջնային է մնում գրադարանի օդափոխության, հովացման և ջեռուցման միասնական համակարգի ներդրումը, ինչի արդյունքում գրադարանը կկարողանա ավելի ժամանակակից ներկայանալ իր ընթերցողին:

ԵՊՀ գրադարանը շարունակել է համագործակցել հայրենական և արտերկրյա գրադարանների ու կազմակերպությունների հետ, որի շրջանակում ՀՀ-ում գործող մի քանի օտարերկրյա դեսպանատների հետ համատեղ գրադարանի ճեմասրահում կազմակերպվել են ցուցահանդեսներ, փոխայցելություններ, ապահովվել է գրադարանի աշխատողների մասնակցությունը գրադարանային գործին նվիրված միջոցառումներին, Հայաստանի և օտարերկրյա կազմակերպություններին նվիրատրվել է շուրջ 1272 անուն 3982 միավոր գրականություն:

ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ հրատարակչություն

ԵՊՀ հրատարակչությունը հաշվետու ժամանակաշրջանում հրատարակել է գիտակրթական լայն ընդգրկում ունեցող 77 անուն գիրք և 50 համար պարբերական:

Հրատարակվել են մի շարք բուհական դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, բառարաններ, մենագրություններ և այլ ակադեմիական գրականություն: Հատկանշական են Հայոց ցեղասպանությանը նվիրված գրքերը, որոնցից կարելի է առանձնացնել Սոնա Հարությունյանի «Հայոց ցեղասպանության արձագանքներն Իտալիայում. 1915» գիրքը: Հետազոտությունը կատարվել է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» ծրագրի շրջանակում ՀՀ սփյուռքի նախարարության տրամադրած դրամաշնորհով: Այն վերջին տարիներին Հայոց ցեղասպանության թեմատիկայով Ս. Հարությունյանի թվով երկրորդ գիրքն է: Առաջինը 2015 թ. լույս տեսած «Հայոց ցեղասպանության թեման իտալական գրականության մեջ. Անտոնիա Արսլան» գիրքն է:

Լույս է տեսել նաև պետական, հասարակական գործիչ, հայոց նորագույն պետականության հիմնադիր Արամ Մանուկյանի «Նամականին»: Նամակների ժողովածուն կազմել է անվանի հայ պատմաբան Երվանդ Փամբուկյանը՝ Բոսթոնի ՀՅԴ արխիվից հավաքելով Արամ Մանուկյանի և նրան ուղղված մեծամասամբ անհայտ նամակները՝ գրված 1904-1915 թթ.: ԵՊՀ հրատարակչության ջանքերով հրատարակված նամականին նաև լույս է սփռում Արամ Մանուկյանի՝ ազգային-ազատագրական պայքարի մի մասը կազմող Վան-Վասպուրականի հայության ինքնապաշտպանության գործընթացում ունեցած գործունեության վրա:

Կարևոր է նաև Էդիկ Մինասյանի «Հայոց նորագույն պետականության քառորդ դարը (1991-2017)» գիրքը: Գրքում քննարկվում են Հայաստանում անկախ պետականության հաստատման և ամրապնդման քառորդդարյա ուղին, ՀՀ միջազգային դրության, արտաքին քաղաքականության, սոցիալ-տնտեսական վերափոխումների, հասարակական-քաղաքական, գիտակրթական և մշակութային կյանքի 2,5 տասնամյակի ամբողջական համառոտ պատմությունը: Արխիվային փաստերի և վիճակագրական տվյալների հիման վրա իրականացվել է պատմաքննական վերլուծություն: Առա-

ջին անգամ փորձ է արվել ընթերցող հասարակությանը գիտականորեն ներկայացնել հայկական երկու անկախ հանրապետությունների՝ Հայաստանի երրորդ հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտաքին քաղաքականության, հասարակական-քաղաքական ու սոցիալ-տնտեսական և մշակութային ոլորտի 25-ամյա ձեռքբերումները, բացթողումներն ու թերությունները: Աշխատությունը նախատեսված է Հայաստանի նորագույն պատմության, մասնավորապես Հայաստանի անկախ պետականության ու Արցախի ազատագրական պայքարի հարցերով զբաղվող մասնագետների, միջազգայնագետների, ուսանողների և ընթերցող լայն հանրության համար:

Հաշվետու ժամանակահատվածում հրատարակվել են ռուսաց լեզվի մի շարք ձեռնարկներ և դասագրքեր, որոնցից են Ս. Լալայանի, Մ. Այվազյանի, Ա. Բաղդասարյանի, Մ. Դպիրյանի, Ս. Մկրտչյան-Լալայանի «Русский язык» դասագիրքը, որը նախատեսված է հայկական բուհերում ռուսաց լեզու ուսումնասիրելու համար: Ն. Մարտիրյանի, Մ. Շատվերյանի «Русский язык», Լ. Հարությունյանի, Թ. Առուշանովայի, Ա. Գասպարյանի «Пособие по русскому языку», Գ. Օրկուսյանի, Ն. Շաքարյանի «Учебное пособие по русскому языку для студентов физического и радиотехнического факультетов» ուսումնական ձեռնարկները նախատեսված են տարբեր մասնագիտություններում ռուսաց լեզու ուսումնասիրող ուսանողների համար:

Պետք է առանձնացնել նաև Արման Եղիազարյանի «Բազրատունիների վրացական թագավորության ձևավորման գործընթացը» գիրքը՝ նվիրված Հայաստանի և Այսրկովկասի պատմության միջնադարյան շրջանի հենքային հիմնահարցերից մեկին՝ Բազրատունիների վրացական թագավորության ձևավորմանը: Առանձնացնենք նաև Ռաֆիկ Նահապետյանի «Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին» մենագրությունը, որտեղ առաջին անգամ ի մի են բերվում անտիկ դարաշրջանի հունական և հռոմեական սկզբնաղբյուրների՝ Հերոդոտոսի, Քսենոփոնի, Դիոդորոս Սիկիլիացու, Ստրաբոնի, Պլուտարքոսի, Գայոս Պլինիոս (Ավագ) Սեկունդոսի, Ապպիանոսի, Դիոն Կասսիոսի, Գայոս Կոռնելիոս Տակիտոսի երկերի վկայությունները Հայաստանի և հայերի պատմամշակութային կյանքի, հայոց ազգագրական երևույթների վերաբերյալ:

Մեծ աշխատանք է իրականացվել նոր դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, ժողովածուների ստեղծման, ինչպես նաև մի շարք արժեքավոր գրքերի վերահրատարակման ուղղությամբ, օրինակ՝ Վազգեն Գաբրիելյանի «Դիտարկումներ գրականության ճանապարհին» ժողովածուն, Աշոտ Սուքիասյանի, Քնարիկ Սուքիասյանի, Մանուկ Ֆելեքյանի «Ժամանակակից հայոց լեզու (հնչյունաբանություն, բառագիտություն)» դասագիրքը, Վազգեն Սաֆարյանի «Գրականության պատմության դրվագներ» ժողովածուն: Հատկանշական է Լիլիթ Պիպոյանի «Ճարտարապետության հիմունքներ» դասագիրքը, որում ներկայացված են ճարտարապետության հիմնական հասկացություններն ու կատեգորիաները, նրա լեզուն կազմող արտահայտչամիջոցները, հորինվածքը, տեկտոնիկ համակարգերը, ճարտարապետական մասնագիտությունները, տեսական և պատմական հետազոտություն կատարելու հիմնական կանոնները: Տեքստը ներկայացված է հարուստ պատկերաշարով, հավելված է ճարտարապետական եզրույթների հայ-ռուսերեն բացատրական բառարանով և գրականության սովոր ցանկով:

2018 թ. լույս է տեսել Հայկ Համբարձումյանի «Սասնա ծռեր. պատում, մոտիվ, գրքային ավանդույթ» մենագրությունը՝ նվիրված «Սասնա ծռեր» ազգային դյուցազներգության բանավոր տարբերակների համեմատական քննությանն ու հայ միջնադարյան գրականության և Աստվածաշնչի հետ կապերի ուսումնասիրությանը: Առաջին անգամ հայ էպոսագիտության մեջ կատարվել է էպոսի բոլոր հրատարակված տարբերակների մանրագնին համեմատություն, դասակարգում՝ ըստ երեք տիպաբանական խմբերի (Մուշ, Մոկս, Սասուն): Բոլորովին նոր մեթոդաբանությամբ առանձնացվել են միջազգային բանագիտության մեջ ընդունված էպիկական հիպերմոտիվներն ու մոտիվները, ցույց են տրվել էպոսի դիպաշարի կառուցման մեխանիզմները, կերպարակերտման սկզբունքները, առանձնացվել են գեղարվեստական առանձնահատկությունները: Մենագրությունն անհրաժեշտ և օգտակար կարող է լինել ինչպես հայ ժողովրդական բանահյուսության, էպիկական ավանդույթի, հայ միջնադարյան գրականության ուսումնասիրությամբ զբաղվող հայագետների, այնպես էլ հայկական էպոսով ու միջնադարյան մշակույթով հետաքրքրվող ընթերցողական լայն շրջանակների համար:

2017 թ. նոյեմբերի 24-26-ը տեղի ունեցավ Գրքի երևանյան առաջին փառատոնը, որին մասնակցեց ԵՊՀ հրատարակչությունը՝ ներկայացնելով վերջին տարիներին հրատարակված գրքերը: 2018 թ. հունիսի 5-6-ը Լատվիայի մայրաքաղաք Ռիգայում մեկնարկեց Եվրոպական համալսարանների հրատարակչությունների ասոցիացիայի «Հետևելով հրատարակչական ստանդարտներին» խորագրով կոնֆերանս-աշխատաժողովը, որին մասնակցում էր նաև ԵՊՀ հրատարակչությունը:

ԵՊՀ հրատարակչությունը պարբերաբար թարմացնում է <http://publishing.y-su.am/> կայքը, որտեղ տեղադրվում են ինչպես նոր լույս տեսած, այնպես էլ նախկին տարիներին հրատարակված գրքերը:

Հաշվետու ուստարում ԵՊՀ հրատարակչությունը, շարունակելով համագործակցությունը ԵՊՀ գրադարանի հետ, իրականացրել է հրատարակված գրքերի թվանշանացման աշխատանքներ:

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍՆԵՐ

«Բանբեր Երևանի համալսարանի»

«Բանբեր Երևանի համալսարանի» գիտական հանդեսը 2017-18 թթ. հաշվետու ժամանակաշրջանում շարունակել է լույս ընծայվել քառամսյա պարբերականությամբ: Այդ ընթացքում լույս են տեսել՝

«Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն»,

«Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն»,

«Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն»,

«Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, հոգեբանություն»,

«Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, տնտեսագիտություն»,

«Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն»,

«Բանբեր Երևանի համալսարանի. Ռուս բանասիրություն»

հանդեսների երեքական համարներ:

2017 թ. սեպտեմբերից մինչև դեկտեմբեր լույս են տեսել հանդեսների երրորդ համարները: 2018 թ. հունվարից մինչև սեպտեմբեր հրատարակվել են առաջին և երկրորդ համարները:

Հանդեսների յուրաքանչյուր համար լույս է տեսել 5 մամուլ ծավալով, 100 օրինակ տպաքանակով: Բացառություն է «Բանբեր Երեւանի համալսարանի. Բանասիրություն» հանդեսը, որը լույս է տեսնում 120 օրինակով:

«Բանբերում» տպագրվում են հոդվածներ երեք լեզվով՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն, սովյալ լեզվով հրատարակվող յուրաքանչյուր հոդված ունենում է մյուս երկու լեզվով ամփոփում:

Շարունակվել են «Բանբերի» թվայնացման և ԵՊՀ կայքում էլեկտրոնային տարբերակի զետեղման աշխատանքները: Ներկա պահին կայքում տեղադրված են 1982-2018 թթ. լույս տեսած բոլոր համարները:

«Բանբերը» շարունակում է համագործակցել ռուսաստանյան «Էլեկտրոնային գիտական գրադարան» ՍՊԸ-ի հետ՝ փոխանակելով տեղեկատվություն:

«Գիտական տեղեկագիր»

«Գիտական տեղեկագիր» հանդեսի «Բնական գիտություններ» սերիան հրատարակվում է 1967 թ-ից: ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ տեղեկագիրը 2009 թ-ից տրոհվել է 3 հանդեսների:

2017 թ. երրորդ քառամսյակում լույս է տեսել «Գիտական տեղեկագրի» (Proceedings of YSU) «Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ», «Քիմիա, կենսաբանություն» (անգլերեն) և «Երկրաբանություն, աշխարհագրություն» հանդեսների 51-րդ հատորի 3-րդ համարները:

Խմբագրությունը «Բնական գիտություններ» սերիայի 50-ամյակի կապակցությամբ պատրաստել և հատուկ թողարկումով հրատարակել է հանդեսի «Մատենագիտություն» հատորը, որը զետեղված է նաև հանդեսի կայքէջում:

2018 թ-ին արդեն լույս են տեսել բոլոր սերիաների 52-րդ հատորի 1-ին և 2-րդ համարները:

Եվս մեկական համար լույս կտեսնի մինչև տարեվերջ:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են հանդեսի թվայնացման և համացանցում տեղակայման աշխատանքները: Բացի այդ, հանդեսի «Ֆիզիկամաթեմատիկական» սերիայի համար ԵՊՀ կայքէջի հարթակում ստեղծվել է նոր, առանձին երկլեզու կայք (physmath-journal.yasu.am), որը գործում 2018 թ. ապրիլի 1-ից:

2014 թ. մայիսից «Գիտական տեղեկագրի» «Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ» հանդեսը ներկայացված է Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում հրատարակվող հնագույն՝ zbMATH Journal ռեֆերատային հանդեսում:

2015 թ-ից հանդեսը ներկայացվում է ՌԴ ԳԱ Ստեկլովի անվան մաթեմատիկայի ինստիտուտի “Mathnet.ru” մաթեմատիկական ռեֆերատիվ կայքէջում: Այստեղ թվայնացված և ներկայացված են արդեն 2005–2017 թթ. մաթեմատիկայի, մեխանիկայի, ինֆորմատիկայի և ֆիզիկայի ուղղությամբ բոլոր հոդվածները: Հանդեսը 2017 թվականի կտրվածքով ունի 0.268 հղման գործակից (հրապարակված 71 հոդվածների վրա եղած հղումների քանակով):

Հանդեսն ամբողջովին ներկայացված է Google Scholar գիտական հոդվածների որոնման մասնագիտացված կայքէջում, ինչն էլ ավելի է ընդլայնում հրապարակված գիտական աշխատանքների հասանելիությունը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանը միջազգային համագործակցության պայմանագրեր և համաձայնագրեր ունի աշխարհի շուրջ 50 երկրների 249 համալսարանների, հաստատությունների և միջազգային կազմակերպությունների հետ:

Հաշվետու ուսումնական տարում առավել ակտիվ շարունակվել է համագործակցությունը Կոննեկտիկուտի համալսարանի (ԱՄՆ), Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի (Ռուսաստան), Քուվեյթի համալսարանի (Քուվեյթ), Կահիրեի համալսարանի (Եգիպտոս), Մոնպելյե-1 և 3 համալսարանների, Էքս Մարսել համալսարանի (Ֆրանսիա), Հալլե-Վիտենբերգի Մ. Լյութերի անվան համալսարանի (Գերմանիա), Կարլի համալսարանի (Չեխիա), Թբիլիսիի Ի. Ջավախիշվիլիի անվան պետական համալսարանի (Վրաստան), Չինաստանի Հասարակական գիտությունների ակադեմիայի (Չինաստան) հետ:

Հաջողությամբ իրականացվել են կրկնակի դիպլոմով ծրագրեր ԱՊՀ երկրների Ցանցային համալսարանի կոնսորցիումի շրջանակում (շարունակվել են ծրագրերը միջազգային հարաբերությունների, իրավագիտության, ռուս բանասիրության, ինֆորմատիկայի, տնտեսագիտության, կառավարման, զբոսաշրջության, ֆարմացիայի բնագավառներում): Կրկնակի դիպլոմով ծրագիր մեկնարկել է Բելգորոդի համալսարանի հետ՝ կենսաբանության բնագավառում:

2018 թ. ապրիլի 29-ից մայիսի 3-ը ԵՊՀ-ն հյուրընկալել է Հալլե-Վիտենբերգի համալսարանից ժամանած պատվիրակությանը՝ ռեկտորի գլխավորությամբ: Այցի շրջանակում կազմակերպվել են հանդիպումներ ԵՊՀ իրավագիտության, արևելագիտության, միջազգային հարաբերությունների, աստվածաբանության ֆակուլտետներում՝ քննարկելու առկա համագործակցությունները և դրանց զարգացման հեռանկարները:

Հաշվետու ուսումնական տարվա ընթացքում ստորագրվել է 26 պայմանագիր արտասահմանյան բուհերի հետ, որոնց թվում են՝ Տրոմսոյի համալսարանը (Նորվեգիա), Կուբանի պետական համալսարանը, Կուբանի պետական տեխնոլոգիական համալսարանը, Օռլովի Ի. Ս. Տուրգենևի անվան պետական համալսարանը, Կուբանի Ի. Թ. Տրուբիլայի անվան պետական ագրարային համալսարանը (ՌԴ), Դալյանի օտար լեզուների համալսարանը, Չինաստանի Հասարակական գիտությունների

ակադեմիան, Պեկինի տեխնիկական համալսարանը (Չինաստան), Գյոթեի համալսարանի փիլիսոփայության և պատմության ֆակուլտետը (Գերմանիա), Կատովիցեի Սիլեզիայի և Ռժեշովի համալսարանները, (Լեհաստան), Կիրառական գիտությունների Հանգեի համալսարանը (Նիդերլանդներ), Կ. Դ. Ուշինսկու անվան Հարավուկրաինական ազգային մանկավարժական համալսարանը (Ուկրաինա), Ռոսարիոյի ազգային համալսարանը (Արգենտինա), Հրադեց Կրալովի համալսարանը (Չեխիա), Ուրմիայի, Մազանդարանի, Նեյշաբուրի համալսարանները, Իմամ Խոմեյնի միջազգային համալսարանը (Իրան), Աբդուլազիզ Սաուլ ալ-Բաբթեյն մշակութային հիմնադրամը (Քուվեյթ), Գրոդնոյի Յանկա Կուպալա պետական համալսարանը (Բելառուս), Մուդովայի պետական համալսարանը (Մոլդովա), Բուրգունդիայի Ֆրանշ-Կոնտե համալսարանը (Ֆրանսիա):

Վերակնքվել են Աթենքի Կապոդիստրիան (Հունաստան), Ռուսեի (Բուլղարիա), Ֆլորենցիայի (Իտալիա), Սամցխե Ջավախեթի պետական (Վրաստան), Ֆրեզնոյի (ԱՄՆ) համալսարանների հետ կնքված պայմանագրերը:

ԵՊՀ կայքում միջազգայնացմանն առնչվող բաժիններն ավելի տեսանելի են դարձել: Վերջինիս առանձին բաժին է հատկացված, որտեղ պարբերաբար թարմացվում է միջազգայնացմանն առնչվող տարբեր ուղղությունների, հետազոտության, միջազգային փոխանակումների, այդ թվում՝ Էրազմուս+ ծրագրի և միջբուհական համագործակցության շրջանակում իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը: Կայքում հասանելի է նաև ֆակուլտետներում կազմակերպվող օտարալեզու դասընթացների ցանկը: Կազմակերպվել են ռուսերեն և անգլերեն լեզուներով դասընթացներ օտարերկրյա քաղաքացիների համար: Մշակվել է 29 օտարալեզու ծրագիր, որոնցից 20-ը՝ մագիստրատուրայի, 9-ը՝ բակալավրիատի: Կազմակերպվել են օտարալեզու դասընթացներ Ռուսաստանից, Ղազախստանից, Գերմանիայից, Իտալիայից ժամանած ուսանողների համար:

Ինչպես և նախորդ տարիներին, 2017/2018 ուստարում Երևանի պետական համալսարանն ակտիվորեն մասնակցել է տարբեր միջազգային գիտաժողովների, սեմինարների և քննարկումների կազմակերպմանը: Մինևույն ժամանակ, ԵՊՀ միջազգային համագործակցության վարչությունը աջակցել է ՀՀ-ում գործող միջազգային կազմակերպությունների և ՀՀ-ում հավատարմագրված դեսպանությունների կողմից

տարբեր գիտակրթական միջոցառումների, սեմինարների, կրթական ծրագրերի և տեղեկատվական ցուցահանդեսների կազմակերպմանը:

2017/2018 ուսումնական տարում կազմակերպված միջազգային բնույթի միջոցառումներից առավել ուշագրավ է 2017 թ. դեկտեմբերի 18-ին ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի տեղակալի հետ հանդիպումը: Հիշարժան են նաև 2017 թ. նոյեմբերի 16-26-ը «Վացլավ Հավել. Քաղաքականությունն ու խիղճը» թեմայով ցուցահանդեսը, 2018 թ. հունիսի 4-ին ՀՀ-ում Իրանի դեսպանատան հետ համատեղ կազմակերպված գիտական հանդիպումը, որի ընթացքում քննարկվել են ԻԻՀ հիմնադիր Իմամ Խոմեյնու կերպարը, գաղափարն ու տեսակետները:

Հաշվետու ուստարում Էրազմուս+ դրամաշնորհային ծրագրի շրջանակում շարունակվել է համագործակցությունը Լիլի, Մոնպելյե 3, Էքս Մարսելի, Լե Մանի (Ֆրանսիա), Մասառիկի (Չեխիա), Կա Ֆոսկարի, Բոլոնիայի, Ֆլորենցիայի (Իտալիա), Գրանադայի, Կադիսի, Մադրիդի Կոմպլուտենս, Վալենսիայի, Վալլադոլիդի, Ալմերիայի (Իսպանիա), Լյովենի Կաթոլիկ (Բելգիա), Սաարլանդի, Նյուրեմբերգի, Հումբոլդի (Գերմանիա), Յասիի (Ռումինիա), Տեխնոլոգիայի Սիլեսյան, Կրակովի Յագելլոնյան, Կատովիցեի Սիլեսյան, Ռժեշովի (Լեհաստան), Զալցբուրգի (Ավստրիա), Վառնայի մենեջմենթի (Բուլղարիա), Մինհոյի, Ավերոյի (Պորտուգալիա), Միջինարևելյան տեխնիկական (Թուրքիա), Տամպերեի (Ֆինլանդիա), Օսիյեկի (Խորվաթիա), Ռոտերդամի Էրազմուս (Նիդերլանդներ), Տամպերեի (Ֆինլանդիա) համալսարանների հետ: Համագործակցության շրջանակներում ընդհանուր առմամբ իրականացվել է 47 ուսանողի, 25 դասախոսի և 17 վարչական աշխատողի փոխանակում:

2017/2018 ուստարում ԵՊՀ դասախոսները, ինչպես նաև բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի սովորողները մասնակցել են տարբեր գիտական միջոցառումների, սեմինարների, արտասահմանյան գիտակրթական ծրագրերի: Իրականացվել են նաև միջբուհական փոխանակման ծրագրեր: Միջազգային համագործակցության վարչությունն ապահովել է համալսարանականների արտասահման գործուղվելն ու գիտաուսումնական փոխանակումները: Հաշվետու շրջանում համալսարանականներն առավել հաճախ գործուղվել են Գերմանիա, Ռուսաստան, Վրաստան, Ֆրանսիա:

2017 թ. սեպտեմբերի 22-ից 26-ը Կոննեկտիկուտի համալսարանի հետ միջբուհական համագործակցության շրջանակում ԵՊՀ պատվիրակությունը՝ ռեկտորի գլխավորությամբ, մեկնել է Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Այցի ընթացքում կազմակերպվել են հանդիպումներ Կոննեկտիկուտի համալսարանի սոցիալական աշխատանքի, հնագիտության, կենսաբանության և գենետիկայի ֆակուլտետների ղեկավարների, համալսարանի փոխնախագահի հետ, քննարկվել են երկկողմ համագործակցության ընդլայնման հնարավորությունները: 2018 թ. փետրվարի 6-ից 10-ը ԵՊՀ պատվիրակությունը՝ ռեկտորի գլխավորությամբ, մասնակցել է Թբիլիսիի (Վրաստան) Ի. Ջավախիշվիլիի անվան պետական համալսարանի հիմնադրման 100-ամյակին նվիրված միջոցառումներին: Այցի շրջանակում կազմակերպվել են հանդիպումներ վերոհիշյալ համալսարանի ռեկտորի հետ, քննարկվել են երկու բուհերի միջև հետագա համագործակցության հեռանկարները: Չինաստանի Հասարակական գիտությունների ակադեմիայի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել ԵՊՀ-ում չինագիտական կենտրոն հիմնադրելու վերաբերյալ:

2017/2018 ուսումնական տարում իրականացվել է 616 անձ/գործուղում. գործուղվել են 202 մասնագետ, 203 ուսանող և ասպիրանտ: Համալսարանի վարչական կազմից արտասահման է գործուղվել 211 անձ:

Հաշվետու ուստարում ԵՊՀ ֆակուլտետներում սովորել են 422 օտարերկրացի ուսանող, ասպիրանտ և ստաժոր: Նրանցից 24-ը սովորել է ԵՊՀ նախապատրաստական դասընթացներում, 176-ը՝ առկա ուսուցման բակալավրիատում (162-ը՝ վճարովի, 14-ը՝ անվճար հիմունքներով), 16-ը՝ հեռակա ուսուցման բակալավրիատում (16-ն էլ վճարովի հիմունքներով), 36-ը՝ առկա ուսուցման մագիստրատուրայում (23-ը՝ վճարովի, 13-ը՝ անվճար հիմունքներով), 10-ը՝ հեռակա ուսուցման մագիստրատուրայում (9-ը՝ վճարովի, 1-ը՝ անվճար հիմունքներով), 21-ը՝ ասպիրանտուրայում (19-ը՝ վճարովի, 2-ը՝ անվճար հիմունքներով), և 139-ը եղել է ստաժոր:

2017/2018 ուստարվա ընթացքում «Գալուստ Գյուլբենկյան» հաստատության կողմից հատուցվել են համալսարանի երիտասարդ գիտնականների արտասահմանյան կարճաժամկետ գործուղումների (գիտական կոնֆերանսներ, սեմինարներ, դասընթացներ և այլն) ծախսերը:

«Գ. Գյուլբենկյան» հիմնադրամի և ՀԲԸՄ-ի կողմից փոխհատուցվել է համալսարանում սովորող 34 սիրիահայ ուսանողի և մագիստրանտի ուսման վարձի 60 %-ը:

«Վարդանանց ասպետներ» միության (ԱՄՆ) կողմից 12 ուսանողի տրամադրվել է միանվագ անվանական կրթաթոշակ 3000 ԱՄՆ դոլարի չափով:

Կազմակերպվել է նոր լույս տեսած և նախկինում հրատարակված գրականության առաքումը Լիբանանի, Սիրիայի և Իրանի հայկական համայնքների մշակութային, ուսումնական կենտրոններ, ինչպես նաև Ֆրանսիա՝ Եվրոպայի հայկական համայնքներում դրանք տարածելու նպատակով: 2017/2018 ուսումնական տարում այդ նպատակով առաքվել է շուրջ 80 կտոր գրականություն:

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

1. Հասարակայնության հետ տարվող աշխատանքներ

ԵՊՀ հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչությունը հաշվետու ուստարում իր աշխատանքներն իրականացրել է Երևանի պետական համալսարանի և հասարակության հետ կապերի ամրապնդման գործընթացի, ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրով նախանշված խնդիրների և գործողությունների համատեքստում:

Հաշվետու ժամանակահատվածում առանձնահատուկ ուշադրության են արժանացել ԵՊՀ 100-ամյակին նվիրված միջոցառումները և նախապատրաստական ծրագրերը: Ավարտվել է ԵՊՀ 100-ամյակին ընդառաջ հայտարարված ԵՊՀ դրոշմանիշի էսքիզի մրցույթը, ընտրվել է մրցույթի հաղթողը: Նշված համատեքստում թվայնացվել են ԵՊՀ-ում պահվող բոլոր կինոժապավենները (1000 րոպե), ինչպես նաև 83 աուդիո ժապավեն, տրվել են դրանց նկարագրությունները: Նկարահանվել են համալսարանի մասին պատմող 5 տեսանյութ/ֆիլմ («ԵՊՀ-ն՝ վերջին 10 տարում», «Արի Ռադիոֆիզիկա», «Արի Բանասիրական», «Արտասահմանյան գրականության ամբիոնի մասին», «ԵՊՀ ֆիզիկատեխնիկական հետազոտությունների կենտրոնի մասին»), ապահովվել է դրանց տարածումը: ԵՊՀ-ում ստեղծվել է նաև Մամուլի ակումբ, որի նպատակն է ընդլայնել գործնական կապերը համալսարանի և ԶԼՄ ներկայացուցիչների միջև, ներկայացնել համալսարանական մասնագետների փորձագիտական դիրքորոշումները՝ ձևավորելով հանրային կարծիք:

Հատուկ ուշադրություն է դարձվել ԵՊՀ-ում գործող կենտրոնների, լաբորատորիաների աշխատանքի լուսաբանմանը, գիտական ձեռքբերումների մասին նյութերի պատրաստմանը:

Տպագրվել է «Երևանի համալսարան» պաշտոնաթերթը, որն անվճար բաժանվել է ԵՊՀ աշխատողներին, ուսանողներին և բուհի հետ համագործակցող կազմակերպություններին, Հայաստանում գործող այլ բուհերի: Առավել ակտիվ աշխատանքներ են ընթացել համացանցային տիրույթում ԵՊՀ-ի վերաբերյալ տեղեկատվության և տեսանյութերի տարածման ուղղությամբ, ամրապնդվել են զանգվածային լրատվության

միջոցների հետ նախկին կապերը, բոլոր հարցումներին տրվել են սպառիչ պատասխաններ:

Վարչությունը ԵՊՀ համապատասխան ստորաբաժանումներին տրամադրել է մասնագիտական խորհրդատվություն ու աջակցություն համալսարանին վերաբերող, հանրային նշանակություն ունեցող, լայն տարածման ենթակա նյութերի (գրքույկներ, բուկլետներ, ուղեցույցներ, տեղեկատվական թերթիկներ, օրացույցներ և այլն), ինչպես նաև էլեկտրոնային նյութերի պատրաստման հարցում: Ամփոփվել է ԵՊՀ հակակոռուպցիոն միջոցառումների համառոտ հաշվետվությունը, հրատարակման է պատրաստվել «2016/2017 ուստարվա գործունեություն» հաշվետվությունը: Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են ԵՊՀ տարբեր ստորաբաժանումների հանրային կապերի պատասխանատուների հետ տարվող աշխատանքները, նոր բացված (վերանվանված) ստորաբաժանումների համար մշակվել և շրջանառության մեջ են դրվել համապատասխան ձևաթղթեր:

ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված՝ ներքին կորպորատիվ հաղորդակցության արդյունավետությունն ապահովելու համար պատրաստվել են ֆակուլտետների դեկանների, ԵՊՀ մի շարք աշխատակիցների մասին նյութեր և տեղադրվել ԵՊՀ պորտալում:

Հաշվետու ուստարում ԵՊՀ-ն շարունակել է փոխգործակցությունը տարբեր հասարակական կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների հետ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով կազմակերպություններին և քաղաքացիներին տրամադրել է տեղեկատվություն, օպերատիվ արձագանքել է նրանց նախաձեռնություններին:

* * *

Հայաստանյան տպագիր և էլեկտրոնային ՁԼՄ-ներով հրապարակվել և լուսաբանվել են ԵՊՀ-ում կազմակերպվող իրադարձային միջոցառումները, տարբեր հեռուստաընկերություններում պարբերաբար հյուրընկալվել են ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ, որոնք, որպես փորձագետներ, ներկայացրել են իրենց, առանձին դեպքում նաև ԵՊՀ տեսակետները և դիրքորոշումները քննարկվող հարցերի շուրջ: Այս աշխատանքներն իրականացվել են «ԵՊՀ-ում հանրային

նշանակություն ունեցող միջոցառումների կազմակերպման, իրազեկման և հասարակայնության հետ տարվող աշխատանքների ուղեցույց»-ի դրույթներին համապատասխան: Հետևողական աշխատանք է տարվել նաև ուղեցույցի դրույթների կիրառման ուղղությամբ: Հաշվետու ուստարվա ընթացքում վարչությունը ստացել է հանրային նշանակության միջոցառման 240 հայտ: 85 մամուլի հաղորդագրություն է ուղարկվել ՁԼՄ-ներին, որոնց շնորհիվ էապես ավելացել է ԵՊՀ գործունեության լուսաբանումը:

Իրականացվել է տպագիր ՁԼՄ-ներում, ինտերնետային կայքերում և հեռուստաընկերություններում ԵՊՀ-ի մասին հրապարակված նյութերի մոնիթորինգ: Հաշվետու ժամանակահատվածում տպագիր լրատվամիջոցներում ԵՊՀ-ի մասին հրապարակվել է 620 նյութ, իսկ ինտերնետային կայքերում ԵՊՀ-ին անդրադարձած նյութերի թիվը նախորդ տարվա համեմատ կրկնակի աճել է՝ հասնելով 4735-ի: Հայաստանյան հեռուստաընկերություններով ԵՊՀ-ի վերաբերյալ հեռարձակվել է 230 տեսանյութ: Համապատասխան նյութերը յուրաքանչյուր օր՝ առավոտյան, ներկայացվել են ԵՊՀ ռեկտորատին: ՁԼՄ-ներում և սոցիալական ցանցերում ԵՊՀ-ի վերաբերյալ բացասական բովանդակության անդրադարձները ստացել են պատասխաններ՝ հիմնականում հայտարարությունների տեսքով:

ԵՊՀ կենտրոնական և մյուս մասնաշենքերի նախասրահներում տեղադրված հեռուստացույցներով ներկայացվել են համալսարանի մասին պատմող ֆիլմեր, ինչպես նաև տեղեկատվություն և հայտարարություններ կայանալիք միջոցառումների վերաբերյալ: Դրանց ընդհանուր թիվը 75 է:

* * *

ԵՊՀ ինտերնետային ռեսուրսների զարգացման գործողությունների պլանի համաձայն՝ շարունակվել են ԵՊՀ ինտերնետային պորտալի զարգացման աշխատանքները: Պորտալում ընդգրկված են ավելի քան 99 կայք ու ենթակայք: Կայքի «Նորություններ» բաժնում հրապարակվել է հայերեն, ռուսերեն, անգլերեն 1680 նյութ, իսկ «Հայտարարություն» բաժնում՝ 135 հայտարարություն:

Մշակվել և վերլուծվել են էլեկտրոնային փոստով ու «Facebook» սոցիալական կայքի միջոցով ստացված նամակները: ԵՊՀ պորտալում գործող «Հարց-պատասխան» բաժնի միջոցով ստացվել են բազմաբնույթ նամակներ (1578՝ հայերեն, անգլերեն, ռու-

սերեն), որոնց, ԵՊՀ տարբեր ստորաբաժանումների մասնագիտական պարզաբանումներից հետո, հնարավորինս սեղմ ժամկետներում տրվել են սպառիչ պատասխաններ:

Ամենօրյա օպերատիվ աշխատանքի շնորհիվ և կայքի այցելուների հետ ինտերակտիվ կապ ապահովելու արդյունքում կայքի այցելուների թիվը նախորդ ուստարվա համեմատ աճել է՝ հասնելով օրական միջինը 15.228-ի:

Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետների կայքերում շարունակվել են թարմացվել ու տեղադրվել դասախոսների տվյալները (հայերեն ու անգլերեն), լուսանկարները, խմբագրվել և ավելացել են մոտ 2112 գիտական հրապարակումների մասին տվյալներ: Կայքում առկա է շուրջ 26770 հրապարակում:

Հաշվետու ուստարում շահագործման են հանձնվել ԵՊՀ պորտալում տեղակայված հետևյալ կայքերը և նոր դիզայնով ու հավելումներով համալրված բաժինները.

- Ֆարմացիայի ինստիտուտի կայք (<http://www.yasu.am/pharmacy>),
- «Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի կայք <http://www.yasu.am/pedagogy>),
- ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի էլեկտրոնային գրադարանի կայք (<http://ijevanlib.yasu.am/>),
- «Իրանական լեզվաբանության 8-րդ միջազգային գիտաժողով» (ICIL 8) կայք (<http://icil8.yasu.am/>):

Ամբողջությամբ փոխվել է «Առաջին կուրսեցու ուղեցույց» կայքի բովանդակությունը: Թարմացվել են «ԵՊՀ կառուցվածք», «Դիմորդ», «Մասնագիտական խորհուրդներ» և այլ կայքերը: Անընդհատ աշխատանք է տարվում «Փաստաթղթեր» կայքում. ավելացվում են նոր փաստաթղթեր: Փոփոխվել և խմբագրվել են նաև «Ֆակուլտետներ» կայքում մուտքագրված պրոֆեսորադասախոսական կազմի անհատական էջերը և լուսանկարները:

Սոցիալական ցանցերում ակտիվորեն գործարկվել են ԵՊՀ էջերը, մասնավորապես՝ «Facebook»-ի (<http://www.facebook.com/ysu.am>) տիրույթում բազմաթիվ այցելուներ բուռն քննարկումներ են ծավալել, ԵՊՀ «Facebook»-ի էջի հետևորդների թիվը հասել է 43.077-ին:

2016 թ. հունվարից սկսվել է «twitter.com/YSU_official» սոցիալական կայքի վարումը: Մուտքագրվել է շուրջ 1334 նորություն (եռալեզու):

«issuu.com/ysu.am» կայքում 2018 թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ մուտքագրված է 121 էլեկտրոնային հրապարակում (ԵՊՀ պաշտոնաթերթը, Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի հրապարակումները, տարբեր տարեթվերի ԵՊՀ բուկլետները, ԵՊՀ 90-ամյակի ֆոտոալբոմը, 1925 թվականի ԵՊՀ կանոնադրությունը և այլն): Այս տիրույթում ԵՊՀ հրապարակումներին հետևում են Հայաստանից, Ավստրալիայից, Գերմանիայից, Հունաստանից, Հոլանդիայից և այլն:

2017 թ. մայիսից սկսել ենք վարել նաև ԵՊՀ «Ինստագրամի» պաշտոնական էջը՝ https://www.instagram.com/ysu_yerevan_state_university/, որի հետևորդների թիվը 2018 թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ հասնում է 906-ի:

ԵՊՀ «Youtube» տիրույթում հաշվետու ուստարում մուտքագրվել է 15 տեսանյութ: Ընդհանուր մուտքագրված տեսանյութերի թիվը 199-ն է:

Առկա և հեռակա ուսուցման համակարգերի դիմորդների համար ԵՊՀ ինտերնետային կայքի «Դիմորդ» բաժնում տեղադրվել է համապատասխան տեղեկատվություն, իսկ հեռակա ուսուցման ընդունելության քննությունների պատասխանների 24 ձևաթուղթ տեղադրվել է օրական երկու անգամ օպերատիվ կերպով: Տեղադրվել են նաև 2018 թ. առկա ուսուցման համակարգով ԵՊՀ ընդունվածների ցուցակները: Էլեկտրոնային տարբերակով տեղադրվել է 2017/2018 ուստարվա առկա ուսուցման համակարգ ընդունված դիմորդների շարժը՝ ըստ օրերի: Իրականացված աշխատանքների շնորհիվ էապես ավելացել է այցելուների թիվը ինչպես ԵՊՀ պորտալում, այնպես էլ ԵՊՀ ֆեյսբուքյան էջում:

«Վեբոմետրիքս» (Webometrics Ranking of World Unisvesuties) կայքի՝ բուհերի վարկանշավորման սանդղակում 2018 թվականի հուլիսի դրությամբ ԵՊՀ-ն 2745-րդ տեղում է: Մայր բուհը միաժամանակ շարունակում է գլխավորել ՀՀ բուհերի ցանկը:

2017/2018 ուստարվա ընթացքում լույս է տեսել «Երևանի համալսարան» թերթի 8 համար՝ միջինը 32 էջ ծավալով, յուրաքանչյուր համարում՝ 47-52 նյութ (ուստարվա կտրվածքով՝ 304 նյութ, այդ թվում՝ վերլուծություններ, հարցազրույցներ, կայացած միջոցառումների լուսաբանում և այլն): ԵՊՀ պաշտոնաթերթը հանդես է եկել հստակ խորագրերով՝ «Կրթություն», «Գիտություն», «Մշակույթ», «Հասարակություն», «Քաղա-

քականություն», «Մարգական», «Միջազգային», «Ուսումնագիտական խճանկար»:
Օպերատիվ թարմացվել է նաև «Երևանի համալսարան» պաշտոնաթերթի կայքը:
Պաշտոնաթերթի հրատարակմանը զուգընթաց տպագրվել են ուղեցույցներ, բուկլետ
(անզլերեն) ու տեղեկատվական գրքույկներ:

Կատարվել է 498 լուսանկարահանում (միջոցառումներ, թերթի համար ֆոտոսե-
սիաներ և այլն), ընդհանուր թվով՝ 36.625 լուսանկար և շուրջ 32 տեսանկարահանում:
Շարունակվել են տեսանյութերի և լուսանկարների թվայնացման և արխիվացման
աշխատանքները: Վարչության համապատասխան բաժնի աշխատողները ԵՊՀ-ում
կայացած միջոցառումների լուսանկարներով ապահովել են ինչպես համալսարանա-
կան, այնպես էլ հանրապետական մամուլը:

Երկարաժամկետ ծրագրով նախատեսվում է ամբողջությամբ վերափոխել ԵՊՀ
պորտալը, այն արտաքին լսարանի օգտագործման համար դարձնել պարզ, ինչպես
նաև արդիականացնել որոշ գործիքներ՝ հեշտացնելով տարբեր ստորաբաժանում-
ների աշխատողների աշխատանքը:

2. Տեղեկատվական համակարգերի սպասարկում և զարգացում

ԵՊՀ տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչու-
թյունը 2017/2018 ուսումնական տարում շարունակել է իր աշխատանքները հետևյալ
հիմնական ուղղություններով՝

- Տեղեկատվական համակարգերի, համակարգչային տեխնիկայի զարգացման
և արդիականացման ուղղությամբ համապատասխան վարչական գոր-
ծառույթների իրականացում,
- Համալսարանում առկա համակարգչային տեխնիկայի սպասարկում և ար-
դիականացում,
- Ներքին համակարգչային և հեռախոսային ցանցի սպասարկում,
- Համալսարանական տեղեկատվական համակարգերի սպասարկում և զար-
գացում:

Տեղեկատվական համակարգերի և համակարգչային տեխնիկայի ոլորտում աշ-
խատանքներ են տարվել ԵՊՀ ՌԾ-ի համապատասխան դրույթներով նախատեսված
խնդիրների իրագործման, վարչության ամենօրյա աշխատանքների ապահովման

հարցերի ուղղությամբ: Մասնավորապես՝ սկսվել են էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության Mulberry համակարգի ներդրման աշխատանքները:

Հաշվետու ուսումնական տարվա ընթացքում վերանորոգվել է (այդ թվում՝ տեխնիկական սպասարկում և կարգաբերում) շուրջ 280 համակարգիչ: Վարչությունը համակարգչային տեխնիկայի սպասարկման աշխատանքների շրջանակներում արձագանքել է շուրջ 1750 կանչի՝ առաջացած ծրագրային և տեխնիկական խնդիրները տեղում լուծելու համար:

Շարունակվել են աշխատանքները ներհամալսարանական ցանցի ընդլայնման ուղղությամբ. ԵՊՀ ցանցին են միացվել ինչպես նոր ձեռք բերված, այնպես էլ նախկինում ձեռք բերված համակարգիչները (շուրջ 130 համակարգիչ): Կատարվել են անլար ինտերնետ ցանցի արդիականացման աշխատանքներ. ձեռք են բերվել թվով 17 գերհզոր անլար ինտերնետ ցրիչ սարքեր՝ մասնաշենքերում ուսանողների համար WiFi գոտիներ ստեղծելու նպատակով, որոնց տեղադրման աշխատանքները ընթացքի մեջ են: Սկսվել են ինտերնետի չկառավարվող բաժանիչ սարքերի փոխարինման աշխատանքները՝ կառավարվող և 1 Գբ/վ թողունակություն ապահովող սարքերով: Մի շարք լսարաններում և սենյակներում վերանորոգումից հետո կատարվել են ներքին համակարգչային ցանցի միացման և բարելավման աշխատանքներ: Իրականացվել են հեռախոսային ներքին ցանցի ընթացիկ սպասարկման և վերանորոգման աշխատանքներ: ԵՊՀ-ում ինտերնետային կապի կայուն թողունակությունը հայկական տիրույթում հասցվել է 100 Մբ/վ-ի, իսկ ոչ հայկական տիրույթում՝ 80 Մբ/վ-ի:

2017/2018 ուսումնական տարվա ընթացքում ապահովվել են առանձին սերվերով ԵՊՀ-ի www.yasu.am պորտալի և բոլոր կայքերի անխափան աշխատանքն ու անվտանգության բարձր մակարդակը: ԵՊՀ աշխատողներին տրամադրվել է շուրջ 87 նոր էլեկտրոնային փոստի հասցե ysu.am դոմեյնում (աշխատողների էլեկտրոնային փոստի հասցեների ընդհանուր թիվը 3653 է): Շարունակվել է ԵՊՀ ուսանողների (շրջանավարտների) էլեկտրոնային փոստի հասցեների տրամադրման գործընթացը, և հաշվետու ժամանակաշրջանում ուսանողական էլփոստի հասցեների թիվը կազմել է 32875: Ձեռք է բերվել և տեղադրվել 50 տերաբայթ ծավալով սերվերային ցանցային պահոց, որը հնարավորություն է ընձեռել գործող սերվերների պահուստային պատճենները իրականացնել ավելի ճկուն մեխանիզմներով:

* * *

Վերոհիշյալով հանդերձ՝ հանրային կապերի և տեղեկատվական համակարգերի աշխատանքներում առկա են նաև թերացումներ ու բացթողումներ: Մասնավորապես՝

- ԵՊՀ հանրային կապերի աշխատանքների և գործունեության արդյունքների տարածման համատեքստում աշխատողներն ու ուսանողները հաճախ ունեն պասիվ դերակատարություն:
- ԵՊՀ կառավարման մեկ միասնական տեղեկատվական համակարգը դեռևս ձևավորված չէ:
- ԵՊՀ համակարգչային ցանցի ինտերնետ մուտքային և մասնաշենքերում տեղակայված բաժանիչ սարքերը հին սերնդի են, անհրաժեշտություն է զգացվում դրանք փոխարինելու ավելի բարձր թողունակությամբ սարքերով:
- Առկա են համակարգչային լսարաններում տեխնիկայի արդիականացման խնդիրներ:

ԱՇԽԱՏԱՆՔ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԵՏ

1. Ուսանողական կազմակերպություններ և ուսանողների հետ տարվող աշխատանքներ

ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնը, ինչպես միշտ, հաշվետու ուստարում ևս ԵՊՀ ուսանողական կազմակերպությունների (ուսանողական խորհուրդ և ուսանողական գիտական ընկերություն) աշխատանքներին ցուցաբերել է կազմակերպչական և մեթոդական աջակցություն, ինչպես նաև իրականացրել ծրագրեր՝ նպատակ ունենալով նպաստելու ուսանողական կառույցների կարողությունների զարգացմանը: Ուսանողների հետ տարվող աշխատանքներում ներառված են նաև մշտական խորհրդատվության տրամադրումը ուսանողներին և ուսանողական կառույցներին, ուսանողական միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության ապահովումը, ուսանողների տարբեր խնդիրների քննարկումներն ու ներկայացումը ռեկտորատ:

Կենտրոնի և համապատասխան կառույցների համատեղ իրականացրած աշխատանքների մեջ առանձին խումբ են կազմում Արցախի Հանրապետությունում իրականացված ծրագրերը՝

- ԵՊՀ ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի եռօրյա այց Արցախի Հանրապետություն,
- Քարվաճառում Հայոց բանակի կազմավորման 25-ամյակին նվիրված պուրակի հիմնում, այց Քարվաճառի դպրոց, գրքերի տրամադրում դպրոցի գրադարանին,
- Մարտակերտի շրջանի ազատագրման 25-ամյակին նվիրված միջոցառում:

Հաշվետու ժամանակաշրջանում Լ. Ազգալոյանի անվան մարտական պատրաստության ակումբի կողմից անցկացվել են մարտավարական, ռազմագիտական պարապմունքներ Լաստիվերում, Սևանում, կրակային պատրաստության դաս՝ Նուբարաշենում: Ակումբը կազմակերպել է Լ. Ազգալոյանի 75-ամյակին նվիրված միջոցառում ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի մեծ դահլիճում: Ակումբի անդամ ուսանողների համար կազմակերպվել են «Հայոց պատմության», «Տարածաշրջանային անվտան-

գության», «Ցեղասպանության», «Արցախյան հիմնախնդրի» և այլ թեմաներով դասախոսությունների շարք:

Կազմակերպվել է նաև տեղեկատվական հանդիպում ՀՀ ՊՆ ներկայացուցիչների հետ ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանում և մարշալ Ա. Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարանում կազմակերպվող մեկամյա սպայական դասընթացների մասին իրազեկելու նպատակով:

Ուշագրավ ծրագրերից են «Ուսանողական ռազմական բանակումը», որն այս անգամ կազմակերպվել էր Շուշիում շուրջ 100 ուսանողի մասնակցությամբ, ինչպես նաև ԵՊՀ Ծաղկաձորի ուսումնասարտադրական բազայում անցկացված «ԵՊՀ ուսանողների զարգացման ծրագիրը»:

Կենտրոնի կողմից կազմակերպվել են հանդիպում-դասախոսություններ Թուրքիայի խորհրդարանի հայազգի պատգամավոր Կարո Փայլանի, ամերիկահայ գրող, հասարակական գործիչ, ակտիվիստ Աննա Աստվածատուրյան Թերթոթի հետ, որի ժամանակ ներկայացվել է վերջինիս «Ոչ մի տեղ. Արտաքսման մի պատմություն» հեղինակային գիրքը:

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ բնապահպանական ակումբի կողմից կազմակերպվել է «Ճանաչենք բնությունը» խորագրով դասընթաց, Ծաղկաձորում անցկացվել է «Համալսարանները հանուն բնության» խորագրով եռօրյա ծրագիր:

Կենտրոնն աջակցել է նաև «Ուսանողական ինքնակառավարում» 4-րդ ամենամյա ուսանողական միջազգային համաժողովի կազմակերպմանը Ադվերանում, ՀՀ կրթության և գիտության, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունների նախաձեռնությամբ հունիսի 19-ից օգոստոսի 15-ը Ծաղկաձոր և Հանքավան քաղաքների ճամբարներում դպրոցականների ամառային հանգստի կազմակերպման համար ջոկատավարների հավաքագրման գործընթացին, ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության միջազգային 4-րդ և 5-րդ գիտական նստաշրջանների կազմակերպման աշխատանքներին:

* * *

ԵՊՀ ուսանողական խորհուրդը (ՈւԽ) հաշվետու ուսումնական տարվա ընթացքում շարունակել է իր գործունեությունն ու ծրագրերի իրականացումը՝ ՈւԽ կանոնա-

դրության համաձայն պաշտպանելով ուսանողների շահերն ու իրավունքները: Ուսանողական խորհուրդն ակտիվ մասնակցություն է ունեցել ԵՊՀ կառավարմանը տարբեր հարթակներում (ԵՊՀ խորհուրդ, գիտական խորհուրդ, ֆակուլտետների գիտական խորհուրդներ)՝ բարձրաձայնելով ուսանողությանը հուզող խնդիրները և դրանց լուծման մեխանիզմները: Ուսանողները մասնակցել են ուսումնական գործընթացի կազմակերպմանը, համագործակցել համալսարանի ղեկավարման տարբեր օղակների և ստորաբաժանումների հետ: ՈւՄ-ն իրականացրել է ուսանողների իրավունքների և պարտականությունների իրազեկման դասընթացներ, սեմինարներ և միավորել է համալսարանի ուսանողական կառույցների ջանքերը՝ նպաստելով ուսանողության համար արդյունավետ աշխատանքային մթնոլորտի ձևավորմանը:

ԵՊՀ ուսանողական խորհուրդը ֆակուլտետային ուսանողական խորհուրդների և հանձնաժողովների համակարգված և հստակորեն ուղղորդված աշխատանքով նպաստել է ուսանողների գիտական, կրթական, հոգևոր, մշակութային, ռազմահայրենասիրական դաստիարակության, ստեղծագործական և ֆիզիկական զարգացմանը, կազմակերպել է ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը, ինչպես նաև զբաղվել է ուսանողներին հուզող բազմաթիվ այլ խնդիրների բարձրաձայնմամբ և լուծմամբ: 2017/2018 ուստարվա ընթացքում ԵՊՀ ՈւՄ-ն կազմակերպել է շուրջ 600 միջոցառում:

ԵՊՀ ՈւՄ նախագահությունը, ֆակուլտետային ուսանողական խորհուրդները և հանձնաժողովներն ապահովել են ուսխորհրդի բնականոն գործունեությունը, սահմանել համընդհանուր ռազմավարական նպատակներ և խնդիրներ, ինչպես նաև ներդրել նոր մոտեցումներ և մեխանիզմներ արդյունավետ գործունեություն իրականացնելու համար:

ՈւՄ աշխատանքներում առաջնային նշանակություն ունի ուսանողներին գործող կրթական համակարգի, իրենց իրավունքների և պարտականությունների և ներհամալսարանական կյանքի մասին իրազեկելու խնդիրը: Կազմակերպվել են քննարկումներ, բանավեճեր, սեմինարներ, մասնավորապես՝ 1-ին կուրսեցիներին իրենց իրավունքներին և պարտականություններին ծանոթացնելու, ինչպես նաև գործող կրթական համակարգը ուսանողների համար ավելի մատչելի դարձնելու նպատակով: Առաջին կուրսեցիների համար անցկացվել է ամենամյա «Ուսանողական հիմնախնդիրները ԵՊՀ-ում» երկփուլ սեմինար-դասընթացը, որի նպատակը ուսանողներին

րին ուսանողական ինքնակառավարման գործընթացի մանրամասների և իրավական նորմերի մասին համընդհանուր գիտելիքներ տալն էր: Ծրագրին մասնակցել է շուրջ 360 առաջին կուրսեցի, որոնց մեծ մասը հետագայում համալրել է ՈւԽ անդամների շարքերը:

ՈւԽ կայքը և ֆեյսբուքյան էջը գործել են բավականին ակտիվ և ունեցել զգալի որակական տեղաշարժեր: Հաշվետու ժամանակաշրջանում շարունակել է լույս տեսնել նաև «Ալեք Մանուկյան 1» թերթը (հրատարակվել է երկու համար):

Ուսանողական խորհրդի գործունեության առաջնայնությունների շարքում են եղել ռազմահայրենասիրական բնույթի միջոցառումները, որոնց թվում՝ հանդիպումներ, քննարկումներ, կլոր սեղաններ, գիտաժողովներ համալսարանում, ինչպես նաև այցելություններ գորամասեր, սահմանամերձ գյուղեր պատմամշակութային վայրեր, թանգարաններ և այլն:

Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ ուսանողներն ու պրոֆեսորադասախոսական կազմի անդամները չորս տարբեր մեծ ծրագրերով այցելել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (ԼՂՀ): ԼՂՀ պաշտպանական բոլոր շրջաններում կազմակերպվել են մշակութային միջոցառումներ՝ նվիրված մայիսյան տոներին: ՈւԽ-ն նաև ակտիվ մասնակցություն է ունեցել Շուշիում 2018 թ. հուլիսին 11-17-ը կազմակերպված «Համահայկական ռազմական բանակում» ծրագրի կազմակերպչական և իրագեկման աշխատանքներում:

ԵՊՀ ՈւԽ-ն հետևողական աշխատանքներ է իրականացրել ուսանողների սոցիալական վիճակը բարելավելու ուղղությամբ: Կազմակերպվել է նաև ուսանողների ձմեռային հանգիստը Ծաղկաձորի համալսարանական բազայում:

Հայրենաճանաչողական ծրագրերի շրջանակներում շուրջ 2000 ուսանող մասնակցել է ՈւԽ-ի կողմից կազմակերպված էքսկուրսիաներին դեպի ՀՀ պատմամշակութային վայրեր և թանգարաններ:

Ուսանողների ազատ ժամանցը կազմակերպելու ուղղությամբ անցկացվել են «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ»-ի, «Գուշակիր մեղեդին»-ի և այլ ինտելեկտուալ մրցույթ-առաջնություններ: Ուսանողության միջազգային օրվա առթիվ կազմակերպվել է ամենամյա «Ուսանողական ռեկտորատ» միջոցառումը, երբ ուսանողները մեկ օրով ստանձնում են «Համալսարանը ղեկավարելու» պարտականությունները:

Իրականացվել է մարզական միջոցառումների շարք, որի շրջանակում տեղի են ունեցել ֆուտբոլի, սեղանի թենիսի, շախմատի, բասկետբոլի, վոլեյբոլի ներֆակուլտետային և միջֆակուլտետային մրցումներ: Կազմակերպվել են ավանդական «Երգող համալսարանական», «Պարող համալսարանական», «Ասմունքող համալսարանական» մրցույթները: ՈւԽ-ի կողմից իրագործվել է նաև «Հաջողության նախագիծ» ծրագիրը, որի շրջանակներում իրենց հաջողակ պատմություններն են ներկայացրել արվեստի և գիտության ոլորտում փորձառու մարդիկ, ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի անդամներ, քաղաքական և պետական գործիչներ և այլք:

ԵՊՀ ուսանողական խորհուրդը հաշվետու ուստարում ևս ակտիվորեն համագործակցել է ՀՀ կրթության և գիտության, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի, ՀՀ սփյուռքի նախարարությունների, ՀՀ Ազգային ժողովի կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի հանձնաժողովի հետ:

Այդուհանդերձ, հարկ է նշել, որ հաշվետու ժամանակահատվածը բարդ է եղել ՈւԽ գործունեության համար: Առաջին կիսամյակում տեղի են ունեցել բուռն քննարկումներ և ուսանողական բողոքի ակցիաներ պարտադիր ժամկետային ծառայության տարկետման օրենսդրական փոփոխությունների առնչությամբ, ՈւԽ անդամները ունեցել են տարբեր դիրքորոշումներ, և տևական ժամանակ այս կարևորագույն խնդիրը, լինելով առաջնային օրակարգային հարց, ազդել է տարբեր ծրագրերի և աշխատանքների արդյունավետության վրա: Երկրորդ կիսամյակում երկրի ներքաղաքական բուռն զարգացումները, դրա հետևանքով կազմակերպված դասադուլները և այլ իրադարձություններ նույնպես ազդել են ներհամալսարանական բնականոն աշխատանքների ընթացքի վրա: Արդյունքում՝ ուշացումով է հրավիրվել ՈւԽ հերթական համագումարը, չեն իրականացվել կամ մասամբ են իրականացվել մի շարք ծրագրեր ու միջոցառումներ: Հաշվետու ժամանակաշրջանում տեղի է ունեցել նաև ՈւԽ նախագահի փոփոխություն. նոր նախագահ է ընտրվել Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող Դավիթ Ափոյանը:

* * *

2017/2018 ուսումնական տարվա ընթացքում ԵՊՀ ուսանողական գիտական ընկերությունը (ՈԻԳԸ) իրականացրել է իր կանոնադրային պահանջներից բխող միջոցառումներ, նպաստել է ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ գիտնականների գիտական, կրթական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը, ինչի նպատակով կազմակերպել է 495 միջոցառում, այդ թվում՝ միջազգային գիտաժողովներ, աշխատաժողովներ, սեմինար-քննարկումներ, հանդիպում-դասախոսություններ, մասնագիտական կինոդիտումներ, օլիմպիադաներ, ինտելեկտուալ խաղեր, դասախաղեր, բանավեճեր, գիտաճանաչողական էքսկուրսիաներ և այլն:

Հաշվետու ուստարում առանձնակի կարևորություն ունեին ԵՊՀ ՈԻԳԸ հիմնադրման 70-րդ տարեդարձին նվիրված միջազգային տարեկան 4-րդ (2-6 հոկտեմբերի, 2017 թ.) և Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրման 100-ամյակին նվիրված միջազգային տարեկան 5-րդ (16-20 ապրիլի, 2018 թ.) գիտական նստաշրջանները: 4-րդ գիտական նստաշրջանի ժամանակ ներկայացվել է 345 զեկուցում, որից 201-ը՝ ԵՊՀ (ներառյալ Իջևանի մասնաճյուղը), 108-ը՝ ՀՀ այլ բուհերի և 36-ը՝ արտասահմանյան համալսարանների և գիտահետազոտական կենտրոնների ուսանողների և երիտասարդ գիտնականների կողմից: 5-րդ գիտական նստաշրջանի զեկուցումների թիվը շեշտակի աճել է. ներկայացվել է 532 զեկուցում (377-ը՝ ԵՊՀ (ներառյալ Իջևանի մասնաճյուղը), 106-ը՝ ՀՀ այլ բուհերի և 49-ը՝ արտասահմանյան բուհերի ուսանողների և ասպիրանտների կողմից):

ՈԻԳԸ միջոցառումներից կարևոր նշանակություն ունի գիտական աշխատանքներ կատարելու հմտությունների ուսուցման ամենամյա ծրագիրը, որի շրջանակներում ուսանողները ծանոթանում են գիտական հոդված գրելու, դաշտային հետազոտություն իրականացնելու և մեթոդաբանական տեսական ուսումնասիրություններ կատարելու հմտություններին: Ուստարվա ընթացքում Ռոմանագերմանական բանասիրության և Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետների համագործակցության արդյունքում կազմակերպվել է «Ընդհանուր մասնագիտական անգլերեն» դասընթացը (փետրվար-մայիս, 2018 թ.), Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի և «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամի համագործակցության արդյունքում կազմակերպվել է «Զբոսավարների հմտություններ» խորագրով եռամսյա դասընթացը

(մարտ-մայիս, 2018 թ.), Իրավագիտության ֆակուլտետի ՈԻԳԸ-ի կողմից՝ «Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն» խորագրով բուհական դատախազը, Սոցիոլոգիայի ֆակուլտետի ՈԻԳԸ նախաձեռնությամբ՝ «Սոցքեմփ» սոցիալական ամենամյա ոչ ֆորմալ աշխատաժողովը (19 հունիսի, 2018 թ.), Միջազգային հարաբերությունների ՈԻԳԸ ջանքերով՝ պաղեստինա-իսրայելական հակամարտությանը նվիրված «ՄԱԿ մոդել» համաժողովը և այլն:

2017/2018 ուստարում ՈԻԳԸ անդամներից շատերն արժանացել են տարաբնույթ մրցանակների: Մասնավորապես՝ 2018 թ. փետրվարի 13-ին Վ. Շերենցը, Տ. Դադունցը և Մ. Մարտիրոսյանը ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հայտարարված հանրապետական մրցույթի շրջանակներում ճանաչվել են հումանիտար և հասարակագիտան ոլորտներում ՀՀ տարվա լավագույն ուսանողներ:

Անցած ուստարվա ընթացքում ՈԻԳԸ մեծ թվով անդամներ մասնակցել են միջազգային գիտաժողովների ու համաժողովների Մոսկվայում, Սանկտ-Պետերբուրգում և Եկատերինբուրգում (ՌԴ), Փարիզում (Ֆրանսիա), Մյունխենում (ԳԴՀ), Վիեննայում (Ավստրիա), Ռժեշովում (Լեհաստան) և այլուր:

ՈԻԳԸ գործուն աջակցությամբ ապահովվել է ԵՊՀ ուսանողների մասնակցությունը ՀՀ պետական բուհերի կողմից կազմակերպված գիտաժողովներին և տարաբնույթ միջոցառումներին: Մինևույն ժամանակ ապահովվել է այլ բուհերի ուսանողների մասնակցությունը ԵՊՀ ՈԻԳԸ-ի կողմից կազմակերպված գիտաժողովներին:

ՈԻԳԸ-ն հաշվետու շրջանում հրատարակել է ՀՀ ԿԳՆ ԲՈԿ-ի պահանջներին համապատասխանող ՈԻԳԸ գիտական հոդվածների 2017 թ. ժողովածուն (194 գիտական հոդված):

ՈԻԳԸ աշխատանքներին մասնակցում է մոտ 1000 ուսանող, որից ՈԻԳԸ կառուցվածքային ստորաբաժանումների անդամ է շուրջ 400-ը: Այլ բուհերից ու գիտահետազոտական կենտրոններից ԵՊՀ ՈԻԳԸ աշխատանքներում ներգրավված է շուրջ 300 սովորող: Հետաքրքրական է, որ ՈԻԳԸ աշխատանքներին անմիջականորեն աջակցող (գիտական հոդվածների ղեկավարում կամ գրախոսում, գիտաժողովների նիստերի նախագահում, սեմինարավարություն, լրացուցիչ դասախոսությունների անցկացում և այլն) դասախոսների թիվը կանոնապես ավելանում է՝ գերազանցելով 500-ը: ՈԻԳԸ հիմնադրման 70-ամյակի տոնական միջոցառումների շրջանակներում

կառույցի հետ համագործակցող դասախոսների մասնագիտական և աշխատանքային փորձի, հմտությունների և հիշողությունների վերհանմանն էր ուղղված «Հետադարձ հայացք» ծրագիրը, որի ընթացքում ՈԻԳԸ-ն հյուրընկալել և հարցազրույցներ էր ունեցել ՈԻԳԸ նախկին նախագահներ Կ. Ավագյանի, Ա. Ալեքսանյանի, Ե. Միրզոյանի, Կ. Խաչատրյանի, Մ. Մալխասյանի և Ռ. Մարկոսյանի հետ: Հաշվետու ուսումնական տարում տեղի է ունեցել ՈԻԳԸ նախագահի փոփոխություն, ՈԻԳԸ նախագահ է ընտրվել Արևելագիտության ֆակուլտետի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանող Վանատուր Շերենցը:

* * *

ԵՊՀ «Վարդանանք» ռազմահայրենասիրական կամավորական ակումբը ինչպես նախորդ տարիներին, հաշվետու ժամանակաշրջանում ևս իրականացրել է արդեն ավանդական դարձած մի շարք ծրագրեր, մասնավորապես՝ «Անմահները հրամայում են», «Դասը վարում են համալսարանականները», «Երիտասարդությունն ընդդեմ ցեղասպանության», «Արդյունավետ մտածողության դասընթաց», «Ազգային ավանդույթներ, ծեսեր և սովորույթներ», «Հանրային ընթերցումներ», «Կամավորական աշխատանք ԵՊՀ-ում» և այլն, ինչպես նաև «Կրթությունը ՀՀ անվտանգության համատեքստում»՝ գիտապրակտիկ կոնֆերանս Բյուրականում: Միջոցառումներին հրավիրվել և մասնակցել են ինչպես զոհված ուսանող ազատամարտիկների, այնպես էլ 2016 թ. ապրիլյան քառօրյայի ժամանակ զոհված զինծառայողների ընտանիքների անդամները: Հիշարժան են նաև «Ժուռնալիստները ազատամարտիկների հիշատակին» մրցույթը, որը ակումբը կազմակերպել է «Նորայր Մարտության» հիմնադրամի և ժուռնալիստիկայի ֆակուլտետի հետ համատեղ, «Ազգ-բանակ-ընտանիք-հասարակություն», «Հայ և համաշխարհային մշակույթի գանձարան» ծրագրերի շրջանակում իրականացված տարբեր միջոցառումները:

Հաշվետու ուստարում համագործակցություն է ծավալվել Երևանում գործող մի շարք տուն-թանագարանների, թատրոնների, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի, ինչպես նաև այլ մշակութային կազմակերպությունների հետ: ԵՊՀ-ի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև շարունակվող համագործակցության

շրջանակում կազմակերպվել է Արցախին նվիրված «Ամառային դպրոց», այնուհետև իրականացվել է «Միացյալ Հայաստան» արշավ-ուխտագնացությունն Արցախ:

Վարդանանքցիները, համագործակցելով ՊՆ «ԴՕՍԱԱՖ»-ի և ՀՀ տարածքի գործառնության հետ, կազմակերպել են 1-ին բուժօգնության և կրակային պատրաստության դասընթացներ:

Ակումբի նոր նախաձեռնություններից էր ադրբեջաներենի անվճար դասընթացի կազմակերպումը, որն իրականացվել է ԵՊՀ ռեկտորի և արևելագիտության ֆակուլտետի աջակցությամբ: Կազմակերպվել են նաև «Հայոց ինքնության հարցեր» սեմինարների շարքը, «Սովորիր, սովորեցրու» դասընթացը և «Խոսքի մշակույթ» վարպետության դասերը: Հրատարակվել է «Վարդանանք» պարբերականը:

2. Մշակութային գործունեություն

Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ մշակույթի կենտրոնը ակտիվորեն շարունակել է իր մշակութային, կրթական և դաստիարակչական գործունեությունը՝ ուստարվա աշխատանքները սկսելով առաջին կուրսեցիների հետ ամենամյա հանդիպումներով:

Ինչպես յուրաքանչյուր տարի, հաշվետու շրջանում ևս առանձնահատուկ նշվեցին ավանդական միջոցառումները. «ԵՊՀ մեծարման և առաջին կուրսեցիների երդման հանդիսավոր արարողությունն» այս տարի նվիրված էր ՀՀ բանակի կազմավորման 25-ամյակին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի հետ համագործակցության արդյունքում արդեն 9-րդ տարին նշվեց Սբ Վարդանանց նահատակների հիշատակման օրը, Թատրոնի միջազգային օրվա կապակցությամբ թատրոն-ստուդիայի սաները Երևանի տարբեր կենտրոններում ֆլեշմոբային ձևաչափով ներկայացրին համաշխարհային թատերական ներկայացումներից հայտնի դրվագներ, այնուհետև այցելեցին Գրականության և արվեստի թանգարան և Կոմիտասի անվան պանթեոն: Ֆրանկոֆոնիային նվիրված միջոցառումների շրջանակներում Մշակույթի կենտրոնի սաները ելույթ ունեցան Երևանի Կենտրոն թաղապետարանի կազմակերպած «Ֆրանսիական աշուն» միջոցառման ժամանակ: Ազգային կինոկենտրոնի հետ համատեղ՝ Մշակույթի կենտրոնի դահլիճում ցուցադրվեցին ֆրանսիական նոր կարճամետրաժ ֆիլմեր:

Հաշվետու շրջանում Մշակույթի կենտրոնի «Համալսարանական» թատրոն-ստուդիան հանդիսատեսի դատին հանձնեց «Հայկական էսքիզներ» ներկայացումը՝ Վ. Պետրոսյանի համանուն ստեղծագործության հիման վրա: Ներկայացումը նվիրված էր Հայաստանի առաջին հանրապետության և Մայիսյան հերոսամարտերի 100-ամյակներին: Մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին էր նվիրված նաև «Հայոց պետականության վերածննդի 100 էջերը» գրքի շնորհանդեսը: Այս առիթով Մշակույթի կենտրոնի տնօրեն Կարինե Դավթյանը և արվեստաբան, ԵՊՀ հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնի դասախոս Սաթենիկ Վարդանյանը հրավիրվել են Հանրային հեռուստատեսության «Առավոտ լուս» ծրագրի տոնական եթերին՝ գրուցելու Առաջին հանրապետության մշակութային կյանքի շուրջ:

Հոբելյանական միջոցառումների թվում էին նաև «Հարմոնիա» ռուսական մշակույթի միջազգային կենտրոնի կողմից կազմակերպված՝ կոմպոզիտոր Ալեքսեյ Հեքիմյանի 90-ամյակին նվիրված հանրապետական փառատոնը, որին Մշակույթի կենտրոնը մասնակցեց հեքիմյանական 10 երգերի կատարումներով: «Գորիսը ԱՊՀ 2018 թ. մշակութային մայրաքաղաք» ճանաչելու առիթով ՀՀ մշակույթի նախարարության կողմից իրականացվող ծրագրի շրջանակում տեղի ունեցան Սաթյանների կոմպոզիտորական գերդաստանին նվիրված համերգներ Գորիս քաղաքի Վ. Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնում և Խնձորեսկի Ա. Սաթունցի անվան երաժշտական դպրոցում՝ «Երգ երգոց» հաղորդաշարի ստեղծագործական խմբի, ԵՊՀ մշակույթի կենտրոնի երգչախմբի ու անհատ կատարողների մասնակցությամբ: Ուշագրավ էին նաև Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների անկախության հռչակման 100-ամյակին նվիրված վրացական բանահյուսության քառյակի համերգը ԵՊՀ մեծ դահլիճում, հայ-հունական դիվանագիտական հարաբերությունների 25-ամյակին նվիրված «Սոկրատեսն այսօր» ներկայացման դիտում-քննարկումը Կոմիտասի անվան ինստիտուտ-թանգարանում: 2017 թ. ԵՊՀ ռուսանողական գիտական ընկերության 70-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի բացման և փակման հանդիսավոր արարողությունները, ինչպես նաև Արցախյան շարժման 30-ամյակին նվիրված՝ ԵՊՀ-ում «Արցախի տուն» կենտրոնի բացման արարողությունը նույնպես կազմակերպվել էին Մշակույթի կենտրոնի կողմից:

ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին ընդառաջ՝ Մշակույթի կենտրոնի կողմից ներկայացված ծրագրի միջոցառումների սկիզբն ազդարարվեց հաշվետու տարում: Մասնավորապես տեղի ունեցան հետևյալ միջոցառումները.

- «Ճանաչված ֆիլմերի սիրված երգեր» ռետրո համերգը (նախատեսված երեք համերգներից առաջինը),
- ԵՊՀ-ին նվիրված երիտասարդական երգի մրցույթը, որի հաղթողներ են ճանաչվել կոմպոզիտորներ Էդմոնդ Մակարյանը, Աննա Զաքարյանը և ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսանողուհի Գայանե Թադևոսյանը: Երեք տեղերի մրցանակակիրները ստացել են դրամական պարգևատրումներ (1-ին տեղ՝ 500.000, 2-րդ տեղ՝ 350.000 և 3-րդ տեղ՝ 200.000 ՀՀ դրամ): ԵՊՀ դասախոս Տիգրան Գրիգորյանը և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ուսանողուհի Արեգնազ Մարտիրոսյանը արժանացել են խրախուսական մրցանակների:
- «Ֆոկլոր» թիմի հետ համատեղ նախատեսված ինտելեկտուալ խաղի մեկնարկը տրվել է այս տարի. «IQ» թեստի միջոցով հաղթողներից ստեղծվել է խաղի հանձնախումբը:
- «Անվանի համալսարանականներ» ծրագրի շրջանակում Մշակույթի կենտրոնի դահլիճում իրականացված՝ լուսանկարչուհի Տաթևիկ Մելքոնյանի լուսանկարների «Գարուն, սեր, հավատ...» խորագիրը կրող ցուցահանդեսը՝ նվիրված ԵՊՀ դասախոս, քիմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Լիպարիտ Մելքոնյանին:

Առանձնահատուկ կարևորություն ունեցավ Մշակույթի կենտրոնի սաների մասնակցությունը 2017 թ. սեպտեմբերի 18-24-ը Եվրամիության կողմից կազմակերպված մշակութային ճամբարին (Connecting youth through art. EaP Summer camp 2017): Այն կայացել է Վրաստանի Բազալթի քաղաքում:

Հաշվետու ուստարում Մշակույթի կենտրոնը շարունակել է ակտիվորեն համագործակցել ֆակուլտետների հետ: ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի ու Մշակույթի կենտրոնի նախաձեռնությամբ կազմակերպվել է Սրբոց Թարգմանչաց տոնին նվիրված եռօրյա միջոցառումների շարք՝

- Բացման արարողություն՝ Մաշտոցին նվիրված թատերականացված համերգային ծրագրով,
- Վարպետաց դասեր Վրաստանի Թարգմանչական բյուրոյի մասնագետների կողմից,
- Այցելություն Օշական և թարգմանիչների երդման արարողություն Մաշտոցի գերեզմանի մոտ,
- Թարգմանության մրցույթ, որին մասնակցած ուսանողների դիպլոմների հանձման արարողությունը տեղի ունեցավ Գևորգյան հոգևոր ճեմարանի Կոմիտասի անվան սրահում՝ ճեմարանի երգչախմբի և վերատեսուչի մասնակցությամբ:

«Մշակութային դաստիարակություն» ծրագրի շրջանակներում կազմակերպվել են երաժշտության, կերպարվեստի, գրականության, թատրոնի և կինոյի, դիզայնի վերաբերյալ դասախոսություններ և վարպետության դասեր հայտնի մասնագետների հետ (Յուրի Հովսեփյան՝ «Ծավալային գոբելենի կիրառման տեխնիկաները», Աշոտ Համբարձումյան՝ «Հայկական տարազի առանձնահատկությունները», «Իբրև սկիզբ» ներկայացման դիտում-քննարկում Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում, այցելություն նկարիչներ Սերգեյ և Աբգար Խաչատրյանների, Արթինի (Հարություն Հարությունյան) արվեստանոցներ, ՀՀ նկարիչների միության հանրապետական ցուցահանդես, Հառիճավանք, որտեղ անցկացվում էր «Կոմիտաս» ամենամյա փառատոնը): Կազմակերպվել են գիտաճանաչողական այցեր 10-րդ դարի Վանեվանի վանական համալիր, Քարաշամբի պատմամշակութային հուշարձաններ՝ Բջնիի Սբ Աստվածածին եկեղեցի, Աշոտ երկաթի ամրոց, Ա. Բակունցի տուն-թանգարան:

ԵՊՀ մշակույթի կենտրոնի կինոակումբը և Հայաստանի ազգային կինոկենտրոնը հաշվետու ժամանակաշրջանում համալսարանականների համար կազմակերպել են «Եվա» ֆիլմի պրեմիերան ԵՊՀ-ում, ինչպես նաև ցուցադրել են հայկական և արտասահմանյան արտադրության նոր ֆիլմեր, որոնց դիտումից հետո տեղի են ունեցել քննարկումներ ֆիլմերի ստեղծագործական խմբի անդամների հետ:

Կենտրոնի սաները մասնակցել են ՀՀ պաշտպանության նախարարության և Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի կողմից կազմակերպված հանրապետական միջբուհական Ունիվերսիադային՝ պարային մրցույթում ԵՊՀ-ին բերելով

2-րդ մրցանակը, իսկ երգի մրցույթում՝ 3-րդը: Այս մրցույթի շրջանակներում մրցանակակիրները մասնակցել են Նոյեմբերյանի գորամասում կազմակերպված համերգին:

Հաշվետու ուստարում ևս Մշակույթի կենտրոնը ԵՊՀ բոլոր շրջանավարտներին տրամադրեց ավարտական հագուստ: Առաջին անգամ կազմակերպվեց դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողություն ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի շրջանավարտների համար: Վերջինիս համար իրադարձությունը վերածվեց համաքաղաքային տոնի:

3. Կարիերայի խթանում, աշխատանք շրջանավարտների հետ, ձեռներեցության զարգացում

2017/2018 ուսումնական տարում ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի գործունեության հիմքում ընկած միջոցառումները կարելի է ամբողջացնել ըստ ներքոնշյալ ուղղությունների՝

- պարբերական բնույթ ունեցող սեմինար-դասընթացներ,
- ձեռնարկությունների հետ համագործակցության շրջանակում ուսանողների կարիերայի զարգացմանը նպատող հանդիպումներ, այցելություններ,
- կամավորական աշխատանքների և ուսանողական պրակտիկայի (ինտերն-շիփ) կազմակերպում,
- աշխատանքային հնարավորությունների ընձեռում,
- գործընկեր ձեռնարկությունների հետ համատեղ ծրագրերի իրականացում,
- շրջանավարտների տվյալների բազայի համալրում:

Հաշվետու ուսումնական տարում կենտրոնի կողմից կազմակերպված սեմինար-դասընթացներին մասնակցել է 974 ուսանող և շրջանավարտ: Իրականացված դասընթացների թեմատիկ ընտրությունը կատարվել է հարցումների արդյունքների հիման վրա՝ ուսանողների և շրջանավարտների կարիքներին ու հետաքրքրությունների շրջանակին համապատասխան: Տարբեր դասընթացների ընթացքում մասնակիցները հիմնականում ծանոթացել են մարքեթինգին և նրա ամենաարդիական ճյուղերից մեկին՝ թվային մարքեթինգին: Շահառուները հնարավորություն են ստացել մասնակցել նաև ստարտափ թիմերի կարևորությանը, գործարար իմիջին ու բիզնես էթիկետին

վերաբերող դասընթացների: 2017/2018 ուսումնական տարում կենտրոնը հիմնական շեշտադրումը կատարել է շահառուների ու գործատուների ճիշտ կամրջմանը և այդ համատեքստում իրականացրել է աշխատանք փնտրող-գործատու համագործակցությանը վերաբերող դասընթացների շարք, որտեղ համագործակցությունը ներկայացվել է բոլոր հիմնական տեսանկյուններից:

2017/2018 ուսումնական տարում կենտրոնը շարունակել է ուսանողների կարիերայի զարգացմանը նպաստող հանդիպումների ու այցելությունների ձևաչափը: Հատկապես կարևորվել են բնագիտական ոլորտի շահառուների զբաղվածության խնդիրները: Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի և ոլորտի երկու հայտնի կազմակերպությունների՝ «Էֆ Էմ Դի Քեյ Էլ Եվրոպա» և «Էֆ-Դի-Էյ Լաբորատորիա» ՄՊԸ-ների համագործակցության շրջանակում ԵՊՀ ուսանողների ու շրջանավարտների համար կազմակերպվել են այցելություններ, որոնց ընթացքում նրանք ծանոթացել են ընկերությունների գործունեության հիմնական ուղղություններին և տեղեկատվություն ստացել ընկերությունում առկա հնարավորությունների վերաբերյալ: Կենտրոնը մեծ ուշադրություն է դարձրել նաև հեռահաղորդակցության ոլորտի խոշոր կազմակերպությունների հետ առկա համագործակցության ընդլայնմանը: Հանդիպումների և այցելությունների ձևաչափով միջոցառումներ են իրականացվել նաև այդ կազմակերպությունների հետ համատեղ: Այս ուղղությամբ իրականացված միջոցառումներից հարկ է առանձնացնել նաև «Աշխատանքային սթրեսի կառավարում» խորագրով հանդիպումը, որի շրջանակում ԵՊՀ-ում հյուրընկալվել էր Ամստերդամի Վրիջեի համալսարանի դոկտոր, միջազգային մարդկային ռեսուրսների կառավարման մասնագետ Քիլիան Վալուն: Ուսումնական տարվա ընթացքում կայացած հանդիպումներին և այցելություններին մասնակիցել է 362 հոգի:

Հաշվետու ժամանակահատվածում կամավորական աշխատանքների և ուսանողական պրակտիկայի (ինտերնշիփ) կազմակերպման շրջանակում կենտրոնը համագործակցել է 35 տեղական և միջազգային կազմակերպությունների հետ: Համագործակցության արդյունքում 156 համալսարանական ներգրավվել է ծրագրերում:

Կենտրոնի գործունեության շրջանակը ընդգրկում է նաև գործընկեր կազմակերպություններում առկա թափուր աշխատանքային հաստիքների վերաբերյալ տեղեկատվության փոխանցումը շրջանավարտներին: Հաշվետու շրջանում առկա թափուր

աշխատատեղերի համալրման նպատակով կենտրոնի գործընկեր կազմակերպությունների կողմից փոխանցվել է 340 դիմում-հայտ, որոնց արձագանքած 2410 համալսարանականներից աշխատանքի են ընդունվել 67-ը:

Գործընկեր «ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնադրամի հետ համագործակցության շրջանակում իրականացվել է «Աջակցություն ուսմանը՝ ապագայի ներդրում» կրթաթոշակային ծրագիրը: Ծրագրի ընթացքում Տնտեսագիտության և կառավարման ու Սոցիոլոգիայի ֆակուլտետների բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողները հնարավորություն են ստացել մասնակցել վերապատրաստման դասընթացների, ապա ներկայացրել են իրենց համայնքի զարգացման ծրագրեր: Տասը լավագույն ծրագրերի հեղինակները ստացել են մագիստրատուրայում ուսումնառության ամբողջական վարձի լրիվ փոխհատուցում: «Աջակցություն ուսմանը՝ ապագայի ներդրում» կրթաթոշակային ծրագրի շրջանակում համագործակցության հուշագիր է ստորագրվել ԵՊՀ-ի և «ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնադրամի միջև:

Հաշվետու ուսումնական տարում կենտրոնը «Վորլդ Վիժն Հայաստան» միջազգային բարեգործական կազմակերպության հետ համատեղ իրականացրել է «Տեղահանված հայ երիտասարդ մասնագետների աշխատանքի աջակցում» ծրագիրը: Այն հիմնականում նախատեսված է եղել հակամարտության գոտիներից, հատկապես Սիրիայից, ինչպես նաև Ջավախքից Հայաստան տեղափոխված այն երիտասարդների համար, որոնք ունեն բարձրագույն կրթություն, սակայն կարիք ունեն անհրաժեշտ մասնագիտացումների՝ հայկական աշխատաշուկայում ավելի մրցունակ դառնալու համար: Ծրագրի շրջանակում թիրախային խմբի համար իրականացվել են հմտությունների զարգացման դասընթացներ: Մասնակիցները հնարավորություն են ունեցել հանդիպելու Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի գործընկեր կազմակերպությունների մարդկային ռեսուրսների կառավարման մասնագետների հետ ու հենց նրանց միջոցով ծանոթանալու տվյալ կազմակերպություններում առկա առաջարկներին: Ծրագրի ընթացքում թիրախային խմբին ներկայացվել է համապատասխանող առաջարկների փաթեթ, ինչպես նաև մշտապես տրամադրվել է անհատական խորհրդատվություն: Ծրագրում ներգրավված է եղել 51 շահառու, որոնցից 35-ը ստացել է աշխատանքի, լրացուցիչ պրակտիկայի (ինտերնշիփ) կամ կամավորական աշ-

խատանքի առաջարկ: Ծրագիրն ամբողջությամբ ֆինանսավորվել է ԱՄՆ պետդեպարտամենտի բնակչության, փախստականների և միգրացիայի բյուրոյի կողմից:

«Տեղահանված հայ երիտասարդ մասնագետների աշխատանքի աջակցում» ծրագրի շրջանակում համագործակցության հուշագիր է ստորագրվել ԵՊՀ-ի և Վերլոյ Վիլմն Հայաստան» միջազգային բարեգործական կազմակերպության միջև:

Ուսումնական տարվա ընթացքում կենտրոնի և «Breedge» կազմակերպության համատեղ նախաձեռնությամբ ԵՊՀ-ում կազմակերպվել է «Internship Hunt. Որոնի՛ր և գտի՛ր քո հնարավորությունը» խորագրով տոնավաճառը, որի մասնակիցների թիվը 300-ից ավելի էր: Տոնավաճառի ընթացքում 18 գործընկեր կազմակերպություն հանդես է եկել ինտերնշիփի առաջարկով:

2017/2018 ուստարում Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը շարունակել է վերջին տարիներին ձևավորված ավանդույթը, ըստ որի՝ շրջանավարտների շրջաթերթերի գրանցումը և դիպլոմների հանձնումը իրականացվում են համատեղ: Կենտրոնը ձեռնարկել է նաև մի շարք միջոցառումներ, որոնք ապահովել են օրվա տոնականությունը:

* * *

Հաշվետու ուսումնական տարվա ընթացքում ԵՊՀ ձեռներեցության զարգացման կենտրոնը, համագործակցելով ոլորտի առաջատար մի շարք կազմակերպությունների հետ, իրականացրել է տարբեր ծրագրեր, կազմակերպվել են դասախոսություններ, սեմինարներ և այլ միջոցառումներ:

2017 թ. հոկտեմբերի 27-ին տեղի ունեցավ «Ռուսալ փառատոն#Գիտություն» խորագրով ինտերակտիվ գիտափառատոնը, որը կազմակերպվել էր աշխարհում այլումինի խոշորագույն արտադրողներից մեկը համարվող «Ռուսալ» ընկերության հետ համատեղ: Փառատոնի ընթացքում կենտրոնական մասնաշենքում գործում էին «Գյուտարարություն», «Գիտություն», «Տեխնոլոգիաներ», «Ռոբոտաշինություն», «Ալյումինի արտադրություն» բնագավառները ներկայացնող տաղավարներ: Ցուցահանդեսի աշխատանքներին զուգահեռ՝ ԵՊՀ մեծ դահլիճում ներկայացվել էին դասախոսություններ և «Գիտություն 2.0» («Hayka 2.0») հեռուստաալիքի գիտահանրամատչելի

Ֆիլմերի ցուցադրություններ: Փառատոնի շրջանակում հանրապետության տարբեր դպրոցների շուրջ 3000 աշակերտ է այցելել Մայր բուհ:

Կազմակերպվել են նաև մի շարք դասընթացներ, որոնցից հատուկ շեշտադրման կարիք ունի հատկապես «Զարգացրո՛ւ ստեղծարարությունդ և ստարտափ նախաձեռնությունդ» երկօրյա սեմինարը, որը իրականացվել է Գերմանիայի միջազգային համագործակցության գործակալության (GIZ)՝ Հայաստանում ՓՄՁ-ների զարգացման ծրագրի շրջանակներում: Դասախոսություններով և գործնական առաջադրանքներով հանդես են եկել Գերմանիայից ժամանած փորձագետներ:

Կենտրոնի նախաձեռնությամբ համալսարանականները առանձին հանդիպումներ են ունեցել «FAST» և «ԱՐՓԱ» հիմնադրամների ներկայացուցիչների հետ, ովքեր ներկայացրել են իրենց հիմնադրամների կողմից առաջարկվող կրթաթոշակները և դրամաշնորհային ծրագրերը: ԵՊՀ մի շարք ուսանողներ իրենց նորարարական գաղափարների շնորհիվ արժանացել են տարբեր դրամական պարգևների և մրցանակների: Հաշվետու ուստարվա ընթացքում Ձեռներեցության զարգացման կենտրոնը Մանրեաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոնի հետ համագործակցության շրջանակներում իրականացրել է «Մտքից մինչև իրականություն» (“From the idea to reality”) ծրագիրը, որի շրջանակներում հանդիպումներ են կազմակերպվել նորարարական ձեռներեցության ոլորտի մի շարք առաջատար ներկայացուցիչների հետ: Սեմինար-դասախոսություններին ընդհանուր առմամբ մասնակցել է ավելի քան 250 ուսանող:

* * *

Վերոհիշյալով հանդերձ՝ ուսանողների և շրջանավարտների հետ տարվող աշխատանքներում առկա են նաև թերացումներ ու բացթողումներ: Մասնավորապես՝

- Մի շարք ֆակուլտետների գիտական խորհուրդներում նկատվում է սովորող անդամների պասիվ մասնակցություն:
- ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության կողմից կազմակերպվող գիտաժողովների ընթացքում ներկայացվող գիտական աշխատանքների հրատարակման (գրախոսում, խմբագրում, սրբագրում, էջադրում) գործընթացը բավականին երկար է տևում:

- Շրջանավարտների և կարիերայի կենտրոնում նկատվում է աշխատողների մշտական արտահոսք: Մի շարք գործընկեր կազմակերպությունների հետ հետադարձ կապը, այդ թվում՝ աշխատուժի պահանջարկի մշտադիտարկումը, արդյունավետ չի իրականացվում:
- Ձեռներեցության կենտրոնը գտնվում է կայացման փուլում, և դեռևս չեն իրականացվում ընդգրկուն երկարաժամկետ ծրագրեր՝ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ ռեկտորատի ու արհեստակցական կազմակերպության համար ԵՊՀ աշխատողների սոցիալական վիճակի բարելավումը առաջնային խնդիրներից է: Այդ և սոցիալական գործընկերության մակարդակի բարձրացման նպատակով մի շարք աշխատանքներ են իրականացվել սոցիալական քաղաքականության ուղղությամբ՝ ուշադրության կենտրոնում պահելով համալսարանի աշխատողների հանգստի, առողջության պահպանման, սոցիալական այլևայլ խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրագործումը:

2017/2018 ուստարում ԵՊՀ արհեստակցական կազմակերպության ֆինանսական միջոցներից համալսարանի 316 աշխատողի հատկացվել է 13342000 (տասներեք միլիոն երեք հարյուր քառասուներկու հազար) ՀՀ դրամի օգնություն, համալսարանի աշխատողների՝ ԵՊՀ-ում սովորող 161 երեխայի համար կիրառվել է ուսման վարձի մինչև 80 % զեղչ՝ ԵՊՀ ֆինանսական միջոցներից հատկացնելով մոտ 56 մլն (հիսունվեց միլիոն) ՀՀ դրամ, իսկ խրախուսման և օգնության նպատակով 18 աշխատողի հատկացվել է 2800000 (երկու միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ:

ԵՊՀ աշխատողների 2200 երեխաների և թոռնիկների համար ամանորյա հեքիաթային մթնոլորտ ապահովելու նպատակով Արհեստակցական կազմակերպությունն իր ֆինանսական միջոցների հաշվին կազմակերպել է միջոցառումներ՝ ամանորյա ներկայացման տոմսերի և նվերների հատկացմամբ, իսկ հունիսամեկյան տոնական պայծառ տրամադրությունն էլ ավելի ամբողջացնելու նպատակով ձեռք է բերել մանկական երաժշտական ներկայացման 1600 տոմս:

Կանանց միջազգային օրվա՝ Մարտի 8-ի կապակցությամբ ֆակուլտետներում և ստորաբաժանումներում 1485 կին աշխատողների համար իրականացվել են միջոցառումներ՝ ԵՊՀ արհեստակցական կազմակերպության ֆինանսական միջոցներից ծախսելով 3790753 (երեք միլիոն յոթ հարյուր իննսուն հազար յոթ հարյուր հիսուներեք) ՀՀ դրամ գումար:

Համալսարանականներին քաղաքային մշակութային կյանքին մասնակից դարձնելու նպատակով հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ արհեստակցական կազ-

մակերպությունը ձեռք է բերել և կոլեկտիվի անդամներին անվճար հատկացրել է համերգային և թատերական տարբեր ներկայացումների 1028 տոմս:

Հաշվետու շրջանում Արհկազմակերպության կողմից հատկացված ուղեգրերով Ծաղկաձորի ուսումնաարտադրական բազայում իրենց հանգիստն են կազմակերպել համալսարանի 616 աշխատողներ, նրանց ընտանիքի անդամներ և ուսանողներ (2286 մարդ-օր): Սոցիալապես առավել անապահով աշխատողների համար կիրառվել է ուղեգրերի արժեքը 50 տոկոսով զեղչելու սկզբունքը:

Շարունակելով «Ծննդօգնություն համալսարանականներին» ծրագիրը՝ ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունը հաշվետու ժամանակահատվածում 65 աշխատողի ընդհանուր առմամբ հատկացրել է 4165000 (չորս միլիոն մեկ հարյուր վաթսուհինգ հազար) ՀՀ դրամ գումար (27 աշխատողի՝ առաջին երեխայի համար, 28-ին՝ երկրորդի, 7-ին՝ երրորդի, 1-ին՝ երրորդ զույգ երեխայի և 2-ին՝ չորրորդ երեխայի համար):

2017/2018 ուսումնական տարում ԵՊՀ արհեստակցական կազմակերպության աջակցությամբ որոշ ֆակուլտետների և ստորաբաժանումների 7 կոլեկտիվներ մեկօրյա և բազմօրյա արշավներ են կազմակերպել դեպի Հայաստանի և Արցախի տարբեր տեսարժան վայրեր:

ԵՊՀ 9 նորապսակ զույգ աշխատողների ԵՊՀ արհեստակցական կազմակերպության ֆինանսական միջոցների հաշվին հատկացվել է Ծաղկաձորի ուսումնաարտադրական բազայի անվճար հնգօրյա ուղեգիր:

ԵՊՀ 82 աշխատող Արհկազմակերպությունից ստացել է աշխատանքային, քաղաքացիաիրավական, ընտանեկան, վարչական և այլ իրավական խնդիրների վերաբերյալ անվճար իրավաբանական խորհրդատվություն: Կազմակերպությունը հաշվետու ուստարում փոխհատուցել է ԵՊՀ 162 աշխատողի՝ նրան և նրա ընտանիքի անդամներին պատկանող ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրական վճարը (125 աշխատողի՝ 10 %-ի չափով, 37 աշխատողի՝ 5 %-ի չափով):

ԵՊՀ արհեստակցական կազմակերպության առաջարկությամբ 2016 թ. հունվարի 1-ից իրականացվող ԵՊՀ հաշմանդամություն ունեցող աշխատողների համար սոցիալական ծրագրից ուստարվա ընթացքում օգտվել է 55 աշխատող, որոնց հատկացվել է 6800000 (վեց միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ հավելավճար: Ծրագրի

շրջանակներում ԵՊՀ հաշմանդամություն ունեցող բոլոր աշխատողները աշխատավարձի հավելավճար են ստանում ըստ հաշմանդամության խմբի (1-ին խմբի հաշմանդամություն ունեցող աշխատողները՝ 20000 ՀՀ դրամի չափով, 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցողները՝ 15000 ՀՀ դրամի չափով, 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցողները՝ 10000 ՀՀ դրամի չափով):

2016 թ. ապրիլին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում տեղի ունեցած ռազմական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողների ընտանիքների վիճակը բարելավելու նպատակով զոհված 24 զինծառայողի 56 անչափահաս երեխաներին մինչև նրանց չափահաս դառնալը ԵՊՀ-ն տրամադրում է ամենամսյա դրամական օգնություն: Յուրաքանչյուր զոհված զինծառայողի ընտանիքի մեկ անչափահաս երեխային ամսական վճարվող օգնության չափը 40 (քառասուն) հազար ՀՀ դրամ է, իսկ նույն ընտանիքի յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար՝ 20 (քսան) հազար ՀՀ դրամ:

ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունը պարբերաբար նախաձեռնում է այցելություններ տարբեր մանկատներ ու երեխաների խնամքի և աջակցության կենտրոններ: 2018 թ. «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոնի երեխաներին նվիրվել են քաղցրավենիք ու խաղալիքներ՝ նպատակ ունենալով այնպես անել, որ այդ երեխաները ևս իրենց զգան հասարակության լիարժեք անդամ:

Կարևորելով ԵՊՀ աշխատողների անվտանգության և առողջության պահպանմանն ուղղված աշխատանքները՝ ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունը 2018 թվականի մարտին առաջարկել է Կենսաբանության և Քիմիայի ֆակուլտետների լաբորատորիաների աշխատողներին տրամադրել (ըստ անհրաժեշտության) անհատական պաշտպանության միջոցներ՝ խալաթներ, պլաստմասե ակնոցներ և միանգամյա օգտագործման ձեռնոցներ: Արդյունքում՝ Կենսաբանության և Քիմիայի ֆակուլտետների աշխատողները ԵՊՀ-ից ստացել են համապատասխան անհատական պաշտպանության միջոցները:

ԵՊՀ-ն դեռևս նախորդ տարի իր հիմնական աշխատողների համար «Ռուսոգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ընկերությունից մրցութային կարգով ձեռք էր բերել բժշկական ապահովագրության փաթեթ: Արիկազմակերպության պահանջով

նախորդ տարվա փաթեթին ավելացել է նաև պլանային վիրահատություններ կատարելու հնարավորությունը:

2015 թվականի մայիսի 20-ին 3 տարի ժամանակով կնքված ԵՊՀ կոլեկտիվ պայմանագրի ժամկետը լրանալու կապակցությամբ, հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասը և ԵՊՀ կոլեկտիվ պայմանագրի 8.5 կետը, ԵՊՀ ռեկտորը և ԵՊՀ արհեստակցական կազմակերպության նախագահը համաձայնագիր են ստորագրել Կոլեկտիվ պայմանագրի գործողության ժամկետը մեկ տարով երկարաձգելու վերաբերյալ, քանի որ նախատեսվում են Աշխատանքային օրենսգրքի փոփոխություններ, և Աշխատանքային նոր օրենսգրքի նախագիծն այժմ հանրային քննարկման փուլում է: Ուստի նոր կոլեկտիվ պայմանագիրը կքննարկվի Աշխատանքային օրենսգրքի փոփոխություններից հետո:

ԵՊՀ ռեկտորի հրամանով 2018 թ. հուլիսին ԵՊՀ բյուջեի խնայողությունների հաշվին բոլոր հիմնական աշխատողներին վճարվեց նրանց աշխատավարձերի 50 տոկոսի չափով դրամական պարգևատրում, իսկ 2018/2019 թվականի ուսումնական տարեսկզբից՝ սեպտեմբերի 1-ից, ԵՊՀ աշխատողների ամսական աշխատավարձի չափը ավելացվեց 15 տոկոսով:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2017/2018 ուստարվա ընթացքում ԵՊՀ տնտեսական գործունեությունը բարելավվել է ծախսերի և եկամուտների նախահաշվով հատկացված միջոցների շնորհիվ: Ձեռք են բերվել շուրջ 74 մլն ՀՀ դրամ արժողության համակարգչային տեխնիկա և պարագաներ, համակարգչային պահեստամասեր, պատճենահանող և տպիչ սարքեր, իրականացվել է շուրջ 45 մլն ՀՀ դրամի տպագրական ծառայություն, ինչպես նաև գնվել են 33.8 մլն ՀՀ դրամի քիմիական նյութեր և լաբորատոր սարքավորումներ, 22 մլն ՀՀ դրամի կահույք, 1.3 մլն ՀՀ դրամի կենցաղային սարքավորումներ և էլեկտրատեխնիկա, 20 մլն ՀՀ դրամի գրենական պիտույքներ, 13.6 մլն ՀՀ դրամի ավտոմեքենայի վառելանյութ, 11.5 մլն ՀՀ դրամի տնտեսական ապրանքներ, սանհիգիենիկ միջոցներ ու շինանյութ, 7 մլն ՀՀ դրամի ավտոպահեստամասեր, 3 մլն ՀՀ դրամի տպագրական նյութեր:

Հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են մեծածավալ շինարարական և վերանորոգման աշխատանքներ (1,05 մլրդ ՀՀ դրամ), այդ թվում՝ ԵՊՀ ուսանողական հանրակացարանի (Ծարավ աղբյուրի 55ա) հիմնանորոգման և կաթսայատան կառուցման, ԵՊՀ ուսումնական մասնաշենքերում դահլիճների, աշխատասենյակների, լսարանների, լաբորատորիաների, միջանցքների, սանհանգույցների, տանիքների, ջեռուցման և օդափոխության համակարգերի վերանորոգման, ինչպես նաև շենքերի երեսապատման, նախամուտքերի և աստիճանավանդակների նորոգման կամ վերակառուցման, բակերի բարեկարգման աշխատանքներ:

ԵՊՀ ավտոպարկը իրականացրել է 314 ուղերթ, այդ թվում 117-ը՝ գիտաժողովների և հյուրերի սպասարկման համար, 106-ը՝ ռազմահայրենասիրական և մշակութային միջոցառումների համար, 91-ը՝ ուսումնաարտադրական պրակտիկայի և ճանաչողական էքսկուրսիաների համար:

2017/2018 ուսումնական տարվա ընթացքում պատշաճ ձևով կազմակերպվել են համալսարանի աշխատողների և ուսանողների հանգիստը, ինչպես նաև ուսանողների ուսումնաարտադրական պրակտիկայի հետ կապված աշխատանքները Ծաղկաձորի և Բյուրականի ուսումնաարտադրական բազաներում:

ԵՊՀ մասնաշենքերի հարակից կանաչ տարածքների ծաղկազարդման համար Տարածքի բարեկարգման և կանաչապատման բաժինը ձեռք է բերել տարբեր դեկորատիվ թփեր և ծաղիկներ, որոնք տնկվել են հարակից պուրակներում և խնամվում են բարեխղճորեն:

“Crystal Cleaning” ՍՊԸ-ն, որը պատշաճ մակարդակով ապահովում է ԵՊՀ-ի սահմիտարական մաքրությունը, “Karcher” ֆիրմային բարձր ճնշման սարքով իրականացրել է համալսարանի մասնաշենքերի ճակատային հատվածների ամբողջական լվացում:

Հակահրդեհային ծառայության կողմից հաշվետու ժամանակաշրջանում Ավանի ուսանողական հանրակացարանում տեղադրվել է հրդեհի ինքնաշխատ ազդարարման համակարգ (5,9 մլն ՀՀ դրամ), անցկացվել է հակահրդեհային ջրամատակարարման համակարգ, տեղադրվել են հրշեջ ծորակներ, փողրակներ: Հակահրդեհային պաշտպանության նպատակով տանիքների փայտյա կառուցատարրերը ներկվել են հրակայուն լուծույթով: Ալեք Մանուկյան 1 հասցեում գտնվող ԵՊՀ մասնաշենքերի համար լրացուցիչ ձեռք են բերվել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ՝ կրակմարիչներ (1,0 մլն ՀՀ դրամ):

Համալսարանի պահպանությունն ապահովող “Alfa-Delta” անվտանգության ծառայության կողմից Կենտրոնական և թիվ 7 մասնաշենքերի բոլոր հարկերը, բակային տարածքները համալրվել են անհրաժեշտ քանակի տեսախցիկներով, որի արդյունքում իրականացվել է պատշաճ և արդյունավետ հսկողություն: Տեղադրվել են ավտոմեքենաների մուտքը սահմանափակող մետաղյա նոր արգելափակոցներ (Աբովյան 52 հասցեում գտնվող ԵՊՀ թիվ 6 մասնաշենքի և Չարենցի փողոցի կողմից ԵՊՀ թիվ 5 մասնաշենքի մուտքերի դիմաց):

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղը կրթական և գիտամշակութային հաստատություն է, որն իր գործունեությամբ նաև նպաստում է սահմանամերձ Տավուշի մարզի տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքի զարգացմանը:

Մասնաճյուղի գործունեությունն իրականացվում է նրա 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի հիման վրա, որում կարևորվում է որակի ներքին ապահովման գործընթացների ներդրումը և նրա շարունակական բարելավումը: Հաշվետու ուստարում որակի ներքին ապահովման գործընթացների շրջանակներում իրականացվել է փաստաթղթային հիմքերի համալրում, վերանայում և ներդրում, պարբերաբար կազմակերպվել են հանդիպում-քննարկումներ կրթական ծրագրերի ղեկավարների և 9 աշխատանքային խմբերի, 11 ամբիոնների վարիչների, ֆակուլտետների 4 ղեկանների, ստորաբաժանումների ղեկավարների և ուսանողների հետ, նրանց տրվել են խորհրդատվություններ, կատարվել են ներքին և արտաքին շահակիցների կրթական կարիքների ուսումնասիրություններ, հավաքագրված տվյալների վերլուծության հիման վրա կազմվել են համապատասխան առաջարկությունների փաթեթներ, ապահովվել է մասնաճյուղի կայքէջի արդյունավետ գործունեությունը, ընդ որում՝ գործարկվել են նաև կայքի ռուսերեն և անգլերեն տարբերակները:

Ուրախությամբ պետք է փաստել, որ մասնագիտական կրթության կառավարման ինքնատիպ մոդելի՝ բակալավրի կրթական ծրագրի ղեկավարի «ինստիտուտի» ներդրման շնորհիվ մասնաճյուղում ստեղծվել է ինքնազարգացող մանկավարժական յուրահատուկ միջավայր: Համաձայն մասնաճյուղի 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական պլանի՝ կրթական ծրագրերի ղեկավարներն իրենց աշխատանքային խմբերով իրականացրել են կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում՝ ՀՀ որակավորումների ազգային շրջանակին և միջազգային առարկայական հենանիշերին համապատասխան, ծրագրի և նրա բաղկացուցիչ մասը կազմող դասընթացների կրթական վերջնարդյունքները համապատասխանեցվել են դասավանդման, ուսումնառության և հետազոտության փոխկապակցման տեսանկյունից: Ուսումնասիրությունների համաձայն՝ դասախոսներն իրենց գիտական գործունեու-

թյան արդյունքները ներառում են դասախոսություններում, դասընթացները կազմակերպում են բավարար մակարդակի հետազոտական տարրի ընդգրկմամբ՝ դրա միջոցով ուսումնառության ընթացքում ուսանողի մեջ ձևավորելով վերլուծական և քննադատական հմտություններ:

Մասնաճյուղը հպարտանում է տարածաշրջանի աշխատաշուկայում մրցունակ իր շրջանավարտներով, որոնց մասին են վկայում մասնաճյուղի շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների արտահայտած բարձր կարծիքները և նրանց տված գնահատականները: Ըստ տարածաշրջանի գործատուների՝ մասնաճյուղի շրջանավարտների գերակշիռ մասն օժտված է բարձրագույն կրթություն ունեցող երիտասարդ մասնագետի այնպիսի որակներով, որոնք ժամանակակից աշխատաշուկայում նրանց դարձնում են լիարժեք մրցունակ: Այդ կարծիքները միաժամանակ վկայում են, որ բուհի ղեկավարությունն ու համապատասխան կառույցներն իրապես կարևորում են բուհ-գործատու համագործակցությունը և ուսումնառության գործընթացի բարելավմանն ուղղված նրանց առաջարկները: Նշենք, որ 2017 թ. առկա ուսուցման 165 շրջանավարտներից 37-ը աշխատանքի են անցել հենց 1-ին տարում:

2017/2018 ուստարում միջազգային չափանիշներին համապատասխան երկլեզու (հայերեն և անգլերեն) հավելվածով դիպլոմներ են հանձնվել մասնաճյուղի 271 շրջանավարտի: Գերազանցության դիպլոմ է ստացել 22 շրջանավարտ (20-ը՝ առկա և 2-ը՝ հեռակա ուսուցման): Մասնաճյուղի ունեցած հեղինակության և մատուցած որակյալ կրթության մասին են վկայում շրջանավարտների երախտագիտության խոսքերը և նրանց տված գնահատականները: Մասնաճյուղի առկա ուսուցմամբ 138 շրջանավարտների 92 %-ը բավարարված է բուհում իր ստացած կրթությունից, 92,6 %-ը՝ պրոֆեսորադասախոսական կազմից: Շրջանավարտների 91 %-ը խորհուրդ է տալիս իր մերձավորներին և ընկերներին ընդունվել ԵՊՀ ԻՄ:

Մասնաճյուղն արձագանքում է աշխատաշուկայի պահանջներին՝ վերաբացելով կամ փոխարինելով մասնագիտություններն ավելի ժամանակակից մասնագիտություններով: 2017/2018 ուստարում արդարացված ներդրում եղավ առկա և հեռակա ուսուցմամբ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն», առկա ուսուցմամբ «Դիզայն» կրթական ծրագրերով ուսումնառության կազմակերպումը:

Հաշվետու ուստարում մասնաճյուղի բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցմամբ 10 մասնագիտությունների համար իրականացվող 11 կրթական ծրագրի գծով ընդունվել է 168 դիմորդ (նախորդ ուստարվա 196-ի փոխարեն), այդ թվում՝ 39-ը անվճար, 129-ը վճարովի, իսկ հեռակա ուսուցմամբ 8 մասնագիտությունների 8 կրթական ծրագրերի գծով՝ 170 դիմորդ (նախորդ ուստարվա 201-ի փոխարեն): Նախորդ ուստարվա համեմատ նկատվել է դիմորդների թվի նվազում առկա և հեռակա ուսուցման համակարգերում:

Մասնաճյուղի դիմորդների շուրջ 99 %-ը (195 դիմորդից 192-ը) Տավուշի մարզի դպրոցների շրջանավարտներն են: Ընդունելության համակազմի պահպանման և ընդլայնման համար մասնաճյուղը շարունակաբար ակտիվացնում է համագործակցությունը մարզի միջնակարգ և ավագ դպրոցների հետ, ապահովում մասնաճյուղի ակտիվ գովազդարշավը: Կրթօջախը, ունենալով պայմանագրեր մարզի 4 ավագ դպրոցների ու քոլեջների հետ, հստակ կազմված ժամանակացույցով կազմակերպել է հանդիպումներ մարզի 4 ավագ և 50 հիմնական դպրոցների, ինչպես նաև Իջևանի և Բերդի վարժարանների շուրջ 965 աշակերտների հետ: Պարբերաբար կազմակերպվել են նաև դպրոցների բարձր դասարանների աշակերտների ճանաչողական և գործնական այցեր մասնաճյուղ: Հաշվետու ուստարում համագործակցության շրջանակն ընդլայնվել է. Մասնագիտական կողմնորոշման և պրակտիկայի կազմակերպման (ՄԿՊԿ) բաժինը հանդիպումներ է կազմակերպել նաև Գեղարքունիքի մարզի Ճամբարակի տարածաշրջանի 5 դպրոցներում: Պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներն այցելել են մարզի դպրոցներ, ակնարկային դասախոսություններ կարդացել աշակերտների համար, տվել են անհրաժեշտ խորհրդատվություն:

2017/2018 ուստարում դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար 13 առարկաների գծով կազմակերպված օլիմպիադաներին մասնակցել են մարզի 4 ավագ, 25 միջնակարգ դպրոցների և 1 վարժարանի շուրջ 285 աշակերտներ, նրանցից 43-ը հաղթահարել են 1-ին փուլը և մասնակցել Երևանում կազմակերպված օլիմպիադայի 2-րդ փուլին: Տարբեր պարզևատրումներ են ստացել 22 աշակերտներ, որոնցից 3-ը՝ 1-ին, 3-ը՝ 2-րդ, 5-ը՝ 3-րդ կարգի դիպլոմներ, 11 աշակերտ ստացել է գովասանագիր:

ԵՊՀ ԻՄ-ն ակտիվորեն շարունակում է համագործակցությունը միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների հետ՝ նրանց բարձր առաջադիմությամբ շրջանավարտների կրթությունը մասնաճյուղում շարունակելու գործընթացի շրջանակներում: Հաշվետու ուստարում կրթությունը շարունակելու նպատակով քոլեջներից ներկայացվել է շուրջ 21 հայտ (նախորդ ուստարվա 18-ի փոխարեն) մասնաճյուղի 5 մասնագիտությունների գծով:

Գործող մասնագիտությունների վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունն ապահովելու նպատակով սպագրվել և դպրոցներին, հիմնական գործատուներին ու շահագրգիռ այլ կազմակերպություններին են տրամադրվել ԵՊՀ-ի հրատարակած «Դիմորդի ուղեցույցը», մասնաճյուղի գովազդային բուկլետները (300 օրինակ) և տեսաերիզները: Առաջին կուրսեցիների համար կազմվել և մասնաճյուղի կայքում տեղադրվել է «Առաջին կուրսի ուսանողի ուղեցույցը», որի նպատակն է առաջին կուրսեցիներին ծանոթացնել մասնաճյուղի կառուցվածքին, ուսումնառության կանոններին, ուսանողների իրավունքներին ու պարտականություններին, գիտամանկավարժական գործընթացի կազմակերպմանը և ներհամալսարանական կառույցներին ու նրանց գործունեությանը: Այս ուղեցույցն ունի ոչ միայն մեթոդական, այլև գովազդային կարևոր նշանակություն:

Մասնաճյուղի հարստությունն իր ուսանողներն են: 2017/2018 ուստարում մասնաճյուղն ունեցել է բակալավրի կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցման համակարգերում սովորող 1580 ուսանող, նրանցից 1425-ը՝ վճարովի համակարգում:

Պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցում է ստացել (ուսանողական նպաստի ձևով) 117 ուսանող (այդ թվում՝ 4-ը արտամրցութային): Պետական և ներբուհական կրթաթոշակներ են հատկացվել մասնաճյուղի 128 ուսանողի, որոնցից 9-ին՝ անվանական կրթաթոշակ: 2017/2018 ուստարում ուսման վարձի մասնակի փոխհատուցումից օգտվել է 260 ուսանող, այդ թվում՝ 101-ը առկա ուսուցման համակարգում:

Հաշվետու ուստարում ուսումնական գործընթացի բարելավման և արդյունավետ կազմակերպման համար մասնաճյուղում կատարվել են լսարանների, արվեստանոցների, լաբորատորիաների և այլ ուսումնական տարածքների վերանորոգման կամ

հիմնանորոգման աշխատանքներ, ուսումնական տարածքների տեխնիկական վերազինում, 2 լսարանի համար ձեռք է բերվել 36 նոր նստարան:

Հաշվետու ժամանակաշրջանում ուսումնական գործընթացը կազմակերպվել է տեսասարքով համալրված հետևյալ ռեսուրսներով՝ համակարգչային 4 սրահ, 1 մասնագիտական լաբորատորիա, 10 լսարան, ինտերակտիվ ուսուցման (On-line) 1 լսարան, լեզուների ուսուցման 2 մասնագիտական լսարան, 1 արվեստանոց: Առանձնահատուկ պետք է նշել ԵՊՀ-ի թանկարժեք նվերի՝ էլեկտրոնային տախտեմետրի կիրառության մասին. «Քարտեզագրություն և կադաստրային գործ» կրթական ծրագրի ուսումնառողները դրա միջոցով զարգացնում են իրենց մասնագիտական կարողությունները: Համապատասխան լսարանները և աշխատատեղերը հագեցված են եղել 53 տպոդ (որից 2-ը գունավոր) և պատճենահանող սարքերով, գործում է ինտերնետ կապ և ներքին համակարգչային ցանց, որը միավորում է շուրջ 180 համակարգիչ:

Հաշվետու ուստարվա երկրորդ կիսամյակում մասնաճյուղի աշխատակիցների (Ս. Առաքելյան, Է. Կյուրեղյան, Մ. Ճաղարյան) համահեղինակությամբ հրատարակվել է «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը հասարակական կարծիքի համապատկերում (գիտաուսումնական մտորումներ և փաստեր)» գիրքը: Աշխատանքում ներկայացված են վերջին 5 տարվա ընթացքում անցկացված՝ շահակիցների կարծիքների ուսումնասիրությունների արդյունքներն ու դրանց վերլուծությունը: Հեղինակների նպատակն է եղել բարելավել սովորողների և աշխատակիցների սոցիոլոգիական մշակույթը, դրանով իսկ մեծացնել հասարակական կարծիքի հավաստիությունը, ինչպես նաև մասնաճյուղի ղեկավարությանն օժանդակել կրթօջախի ուսումնակազմակերպչական խնդիրների բացահայտման, դրանց լուծման տարբերակների առաջադրման և մասնագիտական կրթության պատշաճ որակի ապահովման հարցերում:

Համալրվել և վերլուծվել են մասնաճյուղի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշները (ԳԱՑ 2012-2017), կազմվել է համապատասխան հաշվետվություն:

Մասնաճյուղի կարևորագույն ներուժը և հաջողության հիմնական գրավակները նրա բարձրակարգ գիտամանկավարժական կազմն է: Հաշվետու ուստարում մասնաճյուղում դասավանդել են հիմնական և համատեղությամբ 118 դասախոս, այդ թվում՝ 4 պրոֆեսոր (3,4 %), 35 դոցենտ (29,7 %), 48 ասիստենտ և 31 դասախոս (66,9 %), որոն-

ցից գիտական աստիճանով՝ 3 դոկտոր և 64 թեկնածու, ընդ որում՝ գիտական աստիճան ունեցող դասախոսների հաշվեկշիռը 56,8 % է: Մասնաճյուղի դասախոսների միջին տարիքը 48 է. մինչև 35 տարեկան դասախոսների թիվը 24 է (20,3 %), 36-65 տարեկան՝ 83 (70,3 %), 65-ից բարձր՝ 11 (9,3 %): Կանայք կազմում են հիմնական դասախոսական կազմի 46,6 %-ը: 2017/2018 ուստարում մասնաճյուղն ունեցել է 2 դոկտորանտ, 1 ասպիրանտ և 3 հայցորդ: Լրիվ հաստիքային համարժեքով ուսանող-դասախոս հարաբերակցությունը կազմել է 13,4:

Դասախոսների (հատկապես երիտասարդ) գիտամանկավարժական և մասնագիտական գործունեությունը գտնվում է մասնաճյուղի տնօրենության ուշադրության կենտրոնում, որն աջակցում ու խրախուսում է նրանց ինքնակրթության և ինքնազարգացման բոլոր դրսևորումները: Հաշվետու ուստարում մասնաճյուղի 4 դասախոս երաշխավորվել է դոցենտի գիտական կոչում ստանալու համար, 6 աշխատություն երաշխավորվել է հրատարակության:

Դասախոսների գիտական գործունեությանն աջակցում է նաև մասնաճյուղի «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուն, որտեղ տպագրվում են աշխատակիցների հոդվածները: Հաշվետու ուստարում «Ակունքում» հրատարակվել է մասնաճյուղի դասախոսների 24 հոդված, որից 6-ը՝ օտար լեզվով: Հրատարակվել են նաև մասնաճյուղի դասախոսների 3 մենագրություն, 1 ուսումնամեթոդական ձեռնարկ, 36 գիտական հոդված, զեկուցման 11 թեզիս: 2 դասախոս պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, 1 դասախոս ընդգրկված է ՀՀ ԳԿ 2 պետական դրամաշնորհային ծրագրերում: 10 դասախոս մասնակցել է 16 գիտաժողովի, որից 6-ը՝ ՀՀ-ում, 4-ը՝ արտասահմանում (որից 3-ը՝ ԱՊՀ երկրներում կայացած միջազգային գիտաժողովներ են): Կիրառական արվեստի ֆակուլտետի 6 դասախոս ուստարվա ընթացքում մասնակցել է հանրապետական տարբեր ցուցահանդեսների:

2018 թ. մայիսին մասնաճյուղում կազմակերպվել է Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրման 100-ամյակին նվիրված հանրապետական 2 գիտաժողով՝ հումանիտար ուղղվածությամբ, որին մասնակցել է հանրապետության գիտաուսումնական հաստատությունների ավելի քան 50 ներկայացուցիչ, և բնագիտական ուղղվածությամբ, որին մասնակցել են երկու տասնյակ դասախոսներ և ուսանողներ մասնաճյուղից ու Վանաձորի պետական համալսարանից:

ԵՊՀ ԻՄ-ի դասախոսական կազմի մասնագիտական կարողությունները, մանկավարժական հմտությունները, դասավանդման որակը և արդյունավետությունը պարբերաբար գնահատվում են ԵՊՀ-ի կողմից իրականացվող ուսանողական հարցումների միջոցով: Նշենք, որ 2017/2018 ուստարվա 1-ին կիսամյակի հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողներն ընդհանուր առմամբ գոհ են դասավանդողների մասնագիտական և մանկավարժական որակներից (ըստ բոլոր ամբիոնների՝ միջին թվաբանական միավորը կազմել է 4.64):

Կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման գրավականներից է պրակտիկաների ճիշտ և նպատակային կազմակերպումը: Ըստ մասնաճյուղի 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական պլանի՝ վերանայվել կամ կազմվել են ուսանողների գործնական հմտությունների, ինքնուրույն, ստեղծագործական և հետազոտական կարողությունների զարգացմանը միտված նպատակային պրակտիկաների ծրագրեր, որոնք իրենց բովանդակությամբ նպատակ ունեն աջակցելու ուսանողին կուրսային և ավարտական աշխատանքների իրականացման ժամանակ: Տարբեր կազմակերպությունների և հիմնական գործատուների հետ իրականացվել են փոխշահավետ համագործակցային հանդիպումներ: Արտադրական պրակտիկայի վայրերն ընտրելիս հաշվի են առնվել աշխատաշուկայի պահանջները, ուսանողների նախասիրությունները, նաև ուսանողների առաջարկները, որոնք հավաքագրվել են տարբեր ուսումնասիրությունների միջոցով: Հաշվետու ուստարում արտադրական և մանկավարժական պրակտիկա են անցել առկա ուսուցման 173 և հեռակա ուսուցման 222 ուսանողներ, որոնք իրենց պրակտիկան անցկացրել են ՀՀ բնական և պատմական հուշարձանների տարածքում, հնավայրերում և թանգարաններում, մարզի հյուրանոցներում և սպասարկման ոլորտի տարբեր օբյեկտներում, սոցիալական տարբեր ծառայություններում, Անշարժ գույքի կադաստրի Տավուշի մարզային ստորաբաժանումում, Իջևանի անտառտնտեսությունում և Դենդրոպարկում, «Քարարտ» փակ բաժնետիրական ընկերությունում, Իջևանի արվեստի դպրոցում, Տավուշի մարզի դպրոցներում և մանկապարտեզներում:

Հատուկ ուշադրություն է դարձվել ուսումնական (դաշտային) պրակտիկայի կազմակերպմանը, իսկ որոշ ֆակուլտետների մի շարք պրակտիկաներ կազմակերպվել են մեկօրյա կամ 2-4 օր տևողությամբ ավտոբուսային երթուղիների ձևով ՀՀ տա-

րածքում, ինչպես նաև քաղաքամերձ հետիոտն երթուղիներով: Ուսումնական պրակտիկա են անցել առկա ուսուցման 80 և հեռակա ուսուցման 135 ուսանողներ:

Պրակտիկաների վայրերում մասնաճյուղի իրականացրած ուսումնասիրությունները ցույց են տվել, որ արտաքին շահակիցները առանձնահատուկ նշում են մասնաճյուղի պրակտիկանտ-ուսանողների մասնագիտական բարձր պատասխանատվությունը, պարտաճանաչությունը, աշխատասիրությունը, նորին ու առավելագույնին ձգտելու ցանկությունը, տեղեկատվական տեխնոլոգիաներ կիրառելու հմտությունները, ճիշտ և հետաքրքիր հարցադրումներ կատարելու ունակությունները, ստեղծագործական կարողությունները և այլն: Հարցմանը մասնակցած արտաքին շահակիցների 84,9 %-ը գերազանց ու լավ են գնահատել մասնաճյուղի պրակտիկանտ-ուսանողների տեսական գիտելիքների իմացությունը, 87,9 %-ը՝ գործնական հմտությունները, 81,8 %-ը՝ մասնագիտական խոսքը, իսկ պրակտիկաների կազմակերպման գործընթացը նրանց 94 %-ը որակավորել է բարձր (4.72 միջին գնահատական):

Ակտիվացվում և ընդլայնվում է համագործակցությունը մասնաճյուղի հիմնական գործատու և նվիրատու կազմակերպությունների հետ: Մասնաճյուղի 16 ուսանող ընդգրկված է եղել ՀՕՖ-ի «Մաթևոսյան կրթավճար» ծրագրում:

ԵՊՀ ԻՄ-ն իր հեղինակության ամրապնդման, հասարակական վարկանիշի բարձրացման նպատակով վարում է տեղեկատվության տարածման, գովազդային-լրատվական, քարոզչական համապատասխան քաղաքականություն: Մասնաճյուղի բոլոր ստորաբաժանումների գործընթացների, իրադարձությունների, կազմակերպված միջոցառումների, հարցազրույցների, անհրաժեշտ հայտարարությունների, ուսանողական կյանքին և միջավայրին վերաբերող նորությունների լուսաբանումը, տեղեկատվության մատչելիությունն ապահովվում է մասնաճյուղի պաշտոնական կայքի (<http://ijevan.yso.am/>) միջոցով (եռալեզու տարբերակի իրականացումն ընթացքի մեջ է), «Facebook» սոցիալական ցանցում գործող ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի էջի, ինչպես նաև մասնաճյուղի տարբեր ստորաբաժանումների և ուսանողական կառույցների էջերի միջոցով:

Մասնաճյուղի գործունեության թափանցիկության, աշխատակիցների և ուսանողների իրազեկվածության ապահովման, գործունեության և ուսման մեջ տեղեկության փոխանակման տեսանկյունից մեծ է կայքի՝ որպես աշխատանքի արդյունավետու-

թյան գերժամանակակից գործոնի դերը: 2018 թ. մայիսին անցկացված հարցմանը մասնակցած մասնաճյուղի առկա ուսուցման 330 ուսանողներից 182-ը (55,2 %) պատասխանել է, որ կայքից օգտվում է «շատ հաճախ» ու «հաճախ»: Նրանք փաստել են, որ բավարարված են կայքի կառուցվածքից, նորությունների լուսաբանումից, տեղեկատվության ստացման հարմարավետությունից և լիարժեքությունից:

ԵՊՀ ԻՄ-ի պաշտոնական կայքը 2018 թ. օգոստոսի դրությամբ ունի 214 էջ (նախորդ տարվա 204-ի փոխարեն), տեղադրված է 2280 նյութ, 10211 ֆայլ (նախորդ տարվա 7936 ֆայլի փոխարեն): Կայքի «ԶԼՄ-ները մեր մասին» էջում տեղադրված են մասնաճյուղի վերաբերյալ տարբեր ԶԼՄ-ների կողմից հրապարակված հոդվածներ ու տեսանյութեր: Հաշվետու ուստարում հեռուստատեսությամբ, “YouTube”-ով, տարբեր կայքերով լուսաբանվել է շուրջ 7 իրադարձություն (նորություն):

Մասնաճյուղում տարեցտարի բարձրացվում է ներքին և արտաքին տեղեկատվական ռեսուրսների մատչելիությունը, որին աջակցում են անվճար ինտերնետ կայք, էլեկտրոնային ընթերցասրահը, էլեկտրոնային հարուստ պաշարները: 2017 թ. դեկտեմբերից գործարկվել է մասնաճյուղի «Էլեկտրոնային գրադարան» կայքէջը, որը 2018 թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ դիտվել է 671404 անգամ և ունեցել է 68261 այցելու: Մասնաճյուղի գրադարանային ֆոնդը հաշվետու ուստարում համալրվել է շուրջ 1349 միավոր գրականությամբ և ներառում է 18062 գիրք, որից 7684-ը դասագիրք է, 4635-ը՝ ծրագրային գեղարվեստական, 5671-ը՝ ուսումնամեթոդական և ուսումնաօժանդակ գրքեր: Գրադարանը համալրված է 2687 էլեկտրոնային-տեղեկատվական և 641 այլ նյութերով՝ գիտական տեղեկագրեր ու հանդեսներ, քարտեզներ և այլն: Մեծաքանակ ուսումնագիտական և մասնագիտական գրքեր է հատկացրել Մայր բուհը:

Կազմակերպվում և հաջողությամբ լուծվում են Երևանից ժամանող դասախոսների հանգստի և գիշերելու հարցերը: Ուսումնական մասնաշենքերից ոչ հեռու կառուցված մասնաճյուղի հյուրանոցային համալիրն ապահովում է ավելի քան 65 դասախոսի կենցաղային խնդիրները, հանգստի ու հարմարավետ աշխատանքի պայմանները: Համալիրն ապահովված է ինտերնետ կապով, կոմունալ բոլոր հարմարություններով:

Մասնաճյուղի ուսանողական և ուսումնագիտական միջավայրի ձևավորման գործում իրենց անփոխարինելի տեղն ունեն ուսանողական համապատասխան կա-

ռույցները: Հաշվետու ուստարում Ուսանողական խորհրդի (ՈԻԽ) կողմից կազմակերպվել են տարբեր տոների, հիշատակների նվիրված մշակութային և մարզական շուրջ 53 միջոցառումներ, մրցույթներ, հանդիպումներ, կինոդիտումներ, քննարկումներ, բաց դասեր և դասընթացներ: ՈԻԽ-ն ակտիվ համագործակցում է տարբեր կազմակերպությունների հետ: 2017 թվականի ընթացքում ծավալված գործունեության համար մասնաճյուղի ուսանողական խորհուրդը «Լավագույն մարզային ուսանողական ինքնակառավարման մարմին» անվանակարգում արժանացել է «Հայկյան-2017» մրցանակին:

Ուսանողական գիտական ընկերությունը (ՈԻԳԸ) հաշվետու ուստարում կազմակերպել է 42 գիտական, կրթական ու մշակութային ծրագրեր և միջոցառումներ (գիտաժողովներ, ինտելեկտուալ խաղեր, գիտական և գիտահանրամատչելի զեկուցումներ և սեմինարներ, կինոդիտումներ, ճանաչողական այցեր, ցուցահանդեսներ և այլն): ՈԻԳԸ-ն աջակցել է բուհում Առաջին հանրապետության հիմնադրման 100-ամյակին նվիրված հանրապետական երկու գիտաժողովների կազմակերպման աշխատանքներին:

Ուրախացում են նաև մասնաճյուղի ուսանողների հետաքրքրվածությունն ու ակտիվ մասնակցությունը միջազգային տարբեր ծրագրերի: 2017 թ. սեպտեմբերին մասնաճյուղի երկու ուսանող մասնակցել է Հայաստանում կայացած Եվրոպական երիտասարդական պառլամենտի 4-րդ միջազգային ֆորումին, հոկտեմբերին երկու ուսանող՝ ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության 70-ամյակին նվիրված միջազգային 4-րդ գիտաժողովին, նոյեմբերին երեք ուսանող՝ Գյումրիի տեխնոլոգիական կենտրոնում անցկացված «Մարզերի հզորացումը բարձր տեխնոլոգիաների խթանմամբ» խորագրով հանրապետական համաժողովին, 2018 թ. ապրիլին հինգ ուսանող՝ Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրման 100-ամյակին նվիրված ԵՊՀ ՈԻԳԸ 5-րդ միջազգային ուսանողական գիտաժողովին, 2018 թ. հունիսին մեկ ուսանող և մասնաճյուղի երեք շրջանավարտ՝ «Հայաստանի և Ռուսաստանի թվային նախաձեռնությունները ԵԱՏՄ թվային օրակարգի իրականացման շրջանակում» խորագրով հայ-ռուսական միջտարածաշրջանային 7-րդ համաժողովին և այլն:

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գործունեությունը ինչպես միշտ, 2017/2018 ուստարում ևս գտնվել է ԵՊՀ ուշադրության կենտրոնում:

Ամփոփելով սույն զեկույցում ներկայացվածը՝ վերստին նշենք, որ Երևանի պետական համալսարանի 2017/2018 ուսումնական տարվա գործունեությունը կազմակերպվել և իրականացվել է ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլանին համապատասխան և բոլոր ուղղություններով միտված է եղել ԵՊՀ զարգացմանը, ներպետական և միջազգային գիտակրթական ասպարեզում նրա դերի և հեղինակության բարձրացմանը: Ձեռքբերումները և հաջողությունները զգալի են բոլոր բնագավառներում: Այդուհանդերձ, առկա են նաև թերացումներ և բացթողումներ, որոնք անհրաժեշտ է և հնարավոր է շտկել: Յուրաքանչյուր համալսարանական պետք է առաջնորդվի այն գիտակցումով, որ գործի հանդեպ իր վերաբերմունքից են կախված համալսարանի հաջողությունները, առաջընթացը, վարկանիշը: Համալսարանականների՝ իբրև երկրի քաղաքացիների և հասարակության մտավոր ներուժի առաջամարտիկների հիմնական նպատակը պետք է լինի անհատական և համատեղ աշխատանքով հայրենիքին զորակցելը, նրա բարօրությանը նպաստելը, ԵՊՀ-ն համայն հայության համար մշտապես Մայր բուհ պահելը:

**ԵՊՀ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ
2015-2018 ԹԹ. ՀԱՄԱԼԻՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ**

**ԵՊՀ հակակոռուպցիոն ծրագիրը ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և
ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի համատեքստում, ծրագրի
ընդհանուր նկարագրությունը և աշխատանքների շրջանակը**

ՀՀ կրթական համակարգում առկա կոռուպցիոն երևույթների դեմ տարվող պայքարը վերջին 15 տարիների ընթացքում համարվել է կարևորագույն խնդիր, և կրթության ոլորտում կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված միջոցառումները, ի թիվս այլ հանրային ոլորտների, համարվել են առաջնային նշանակություն ունեցող: Մասնավորապես՝ 2003 թ. ընդունված ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը ընդգծել է բուհական և հետբուհական համակարգերում կոռուպցիոն երևույթների բավականին մեծ տարածվածությունը և նախանշել մի շարք գործողություններ¹: 2015 թ. հաստատված ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագիրը կրկին կրթության ոլորտը առանձնացրել է որպես հակակոռուպցիոն ծրագրերի առաջնահերթ իրականացման ոլորտ², իսկ 2018 թ. հունվարի 18-ին ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշմամբ վերոհիշյալ ծրագրում կատարվել են լրացումներ, մասնավորապես ընդունվել է կրթության ոլորտում հայտնաբերված կոռուպցիոն ռիսկերի և դրանց չեզոքացմանը և (կամ) նվազեցմանն

¹ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության 06.11.2003թ. N 1522-Ն որոշում:

² ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության 25.09.2015թ. N 1141-Ն որոշում:

ուղղված միջոցառումների ծրագիրը: Վերջինս կրկին բուհական և հետբուհական համակարգերում առանձնացրել է մի շարք կոռուպցիոն ռիսկեր և սահմանել համապատասխան գործողություններ:

ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի «Ֆինանսական կայունություն, արդյունավետ կառավարում» խորագիրը կրող 8-րդ ռազմավարական նպատակն է. «Ապահովել Համալսարանի ֆինանսական կայուն և բազմազանեցված հոսքերը և բարձրացնել դրանց կառավարման արդյունավետությունը: Բարելավել Համալսարանի կառավարման համակարգը և նպաստել դրա արդյունավետության և թափանցիկության բարձրացմանը՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը»: Այս նպատակի համատեքստում սահմանված է Խնդիր 8.4-ը՝ «Ապահովել համալսարանական գործընթացների թափանցիկությունը՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը», որի շրջանակներում նախատեսված են մի շարք առանցքային գործողություններ:

ԵՊՀ կոռուպցիոն ռիսկերի և երևույթների դեմ պայքարի 2015-2018 թթ. միջոցառումների ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) հաստատվել է 2015 թ. փետրվարի 19-ին ԵՊՀ գիտական խորհրդի կողմից: Ծրագիրը, ըստ էության, շարունակել և ընդլայնել է 2010 թվականից ԵՊՀ-ում մեկնարկած հակակոռուպցիոն բնույթ ունեցող միջոցառումները, որոնք արտացոլված են եղել ինչպես ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի համապատասխան դրույթներում, այնպես էլ ԵՊՀ գիտական խորհրդի կողմից հաստատված 2011-2012 թթ. և 2013-2014 թթ. հակակոռուպցիոն ծրագրերում:

2015-2018 թթ. ծրագրի հիմնական թիրախը կոռուպցիոն ռիսկերն են, իսկ գործողությունների առումով շեշտադրվում են ինչպես իրազեկվածության մակարդակը բարձրացնող և մասնակցային գործընթացները խթանող, այնպես էլ տարբեր ռիսկեր և երևույթներ կանխարգելող ու չեզոքացնող, դրանց նկատմամբ հսկողությունը խստացնող միջոցառումները:

ԵՊՀ կոռուպցիոն ռիսկերի և երևույթների դեմ պայքարի 2015-2018 թթ. միջոցառումների ծրագրի խնդիրներն են.

- Աջակցել ԵՊՀ ֆակուլտետներին և առանձնացված ստորաբաժանումներին՝ հստակեցնելու հակակոռուպցիոն մշակույթը, կոռուպցիոն երևույթների նկատմամբ ձևավորել անհանդուրժողականության մթնոլորտ, մշակել համապատասխան էթիկայի կանոններ:

- Կատարելագործել ներքին իրավական ակտերը, կառավարման ու վերահսկման մեխանիզմները՝ ապահովելով տարբեր գործընթացների առավել կանոնակարգված, թափանցիկ և հրապարակային ընթացքն ու հնարավորինս բացառելով գործառույթային շահերի բախումը:
- Բարձրացնել ներհամալսարանական գործընթացների վերաբերյալ շահառուների իրազեկվածության մակարդակը, ապահովել համալսարանական լայն շրջանակների մասնակցությունը հակակոռուպցիոն միջոցառումների իրականացմանը, զարգացնել հետադարձ կապի մեխանիզմները:
- Բարձրացնել հակակոռուպցիոն միջոցառումների մոնիթորինգի արդյունավետությունն ու անկողմնակալությունը, ինչպես նաև իրականացվող աշխատանքների հրապարակայնությունն ու հաշվետվողականությունը:
- Վերհանել շահերի բախման դրսևորումները և իրականացնել միջոցառումներ դրանց չեզոքացման ուղղությամբ:
- Իրականացնել «կոռուպցիա» երևույթի և դրա կանխարգելմանն ուղղված գիտահետազոտական ուսումնասիրություններ, կրթական (այդ թվում՝ դասախոսների վերապատրաստման) ծրագրերում մշակել և ներդնել կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված դասընթացներ:

Ծրագրի մի շարք գործողություններ ըստ էության համահունչ են ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությանը և դրա իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագրով նախատեսված՝ կրթության ոլորտում հայտնաբերված կոռուպցիոն ռիսկերի և դրանց չեզոքացմանը և (կամ) նվազեցմանն ուղղված միջոցառումների ենթածրագրով սահմանված աշխատանքներին: Դրանցից են, մասնավորապես, հակակոռուպցիոն կրթության կազմակերպումը և էթիկայի կանոնների մշակումը, գրագողության կանխարգելումը, մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի կատարելագործումը, բուհերի գործունեության թափանցիկության և հաշվետվողականության բարձրացումը:

Ծրագրով նախատեսված աշխատանքները իրականացվում և համակարգվում են համալսարանի ռեկտորի հրամանով ձևավորված ԵՊՀ հակակոռուպցիոն միջոցառումները համակարգող հանձնաժողովի կողմից:

Հանձնաժողովի աշխատանքները ղեկավարում է ԵՊՀ ռեկտորը (հանձնաժողովի նախագահ), իսկ հանձնաժողովի կազմում ընդգրկված են ԵՊՀ պրոռեկտորները, ուսումնամեթոդական վարչության պետը, հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության պետը, որակի ապահովման կենտրոնի տնօրենը, արհեստակցական կազմակերպության նախագահը, գիտական քարտուղարը, որոշ ֆակուլտետների դեկաններ և այլ պաշտոնատար անձինք, ուսանողական կառույցների ներկայացուցիչներ:

2015-2018 թթ. ընթացքում իրականացված հիմնական միջոցառումների մասին համառոտ տեղեկատվություն

- Ուսումնական գործընթաց, գիտելիքների գնահատում, ամփոփիչ ատեստավորումներ, փոխատեղումներ և այլն

ԵՊՀ գիտական խորհրդի կողմից ընդունված մի շարք իրավական ակտերը (կարգեր, ձեռնարկներ) էականորեն նպաստել են ուսումնական գործընթացի և գիտելիքների գնահատման կազմակերպման արդյունավետությանը, դրանց թափանցիկության և հրապարակայնության ապահովմանն ու կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը: Մասնավորապես հարկ է առանձնացնել «Երևանի պետական համալսարանի մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» ղեկավար ձեռնարկը (հաստատվել է ԵՊՀ ԳԽ 2016 թ. հուլիսի 7-ի նիստում): Փոփոխություններ են կատարել «Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգում» (հաստատվել է ԵՊՀ ԳԽ 2017 թ. մայիսի 4-ի նիստում), որոնք հիմնականում վերաբերում են քննությունների և ստուգաթղթերի կազմակերպմանը, գիտելիքների ստուգմանը և գնահատմանը, դասերին ուսանողի մասնակցությանը, ակադեմիական պարտքերի մարմանը և այլն: Համաձայն կարգի՝ ստուգաթղթի/եզրափակիչ քննության տեղեկագրում ուսանողի անվան դիմաց յուրաքանչյուր նշում կատարվելու է միայն ուսանողի ներկայությամբ: Նոր կարգի համաձայն՝ փոխվել է նաև ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի կազմակերպումը՝ հանվել է մասնակցության համար նախկինում տրվող երկու միավորը:

Մշակվել են «ԵՊՀ-ում մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգը» (հաստատվել է ԵՊՀ ԳԽ 2017 թ. մարտի 2-ի նիստում) և «ԵՊՀ-ում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգը» (հաստատվել է ԵՊՀ ԳԽ 2017 թ. հոկտեմբերի 12-ի նիստում): Վերոնշյալ կարգերով հստակեցվել են թեզերի և ավարտական աշխատանքների պատրաստման և գնահատման գործընթացները, ներմուծվել են դրանց կատարման ընթացքի մոնիթորինգի մեխանիզմներ, գնահատման չափանիշներ և չափորոշիչներ: Երկու փաստաթղթով էլ նախատեսված են նաև գրագողությունը կանխելու միջոցառումներ: Ըստ վերոնշյալ կարգերի՝ թեզի և ավարտական աշխատանքի նախապաշտպանության ընթացքում գրագողության հայտնաբերման դեպքում աշխատանքը չի թույլատրվում պաշտպանության, իսկ պաշտպանության ժամանակ գրագողության հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է «անբավարար»:

Պարբերաբար վերանայվել են բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերն ու դրանց կառուցվածքը և բովանդակությունը. մագիստրոսի կրթական ծրագրերը վերանայվել են 2017/2018 ուսումնական տարում, իսկ բակալավրի կրթական ծրագրերը՝ 2018/2019 ուսումնական տարում: Մշակվել է «ԵՊՀ ֆակուլտետի մեթոդական խորհրդի կանոնակարգը» (հաստատվել է ԵՊՀ ԳԽ 2017 թ. մարտի 30-ի նիստում): Պրակտիկայի արդյունավետության բարձրացման և մի շարք այլ խնդիրների կանոնակարգման նպատակով մշակվել և ընդունվել է «ԵՊՀ ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգը» (հաստատվել է ԵՊՀ ԳԽ 2018 թ. մայիսի 3-ի նիստում):

Աշխատանքներ են տարվել ուսանողների փոխատեղման գործընթացը առավել թափանցիկ դարձնելու նպատակով: ԵՊՀ գիտական խորհրդի 2017 թ. հուլիսի 6-ի նիստում հաստատվել է «Երևանի պետական համալսարանի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կարգը»՝ փոփոխություններով և լրացումներով: Համաձայն կարգի՝ ԵՊՀ մանդատային հանձնաժողովի կողմից հաստատված ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունք ունեցող ուսանողների ցուցակները մեկօրյա ժամկետում պետք է ուղարկվեն ուսանողների էլեկտրոնային հասցեներին: Դիմում-բողոքները երեք աշխատանքային օրվա ընթացքում պետք է ներկայացվեն համալսարանի մանդատային հանձնաժողովին:

Անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների թեկնածությունները քննարկվել են ֆակուլտետների գիտական խորհուրդներում և հաստատվել են ԵՊՀ գիտական խորհրդի նիստում: Անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցանկը հրապարակվել է ԵՊՀ կայքում:

Կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նպատակով ուսանողների տեղափոխության (այլ բուհերից, միջին մասնագիտական հաստատություններից, ներքին տեղափոխություն, ուսուցման համակարգի փոփոխություն, երկրորդ մասնագիտությամբ ուսուցում) արդյունքում առաջացող առարկայական տարբերությունների հանձնումը իրականացվել է ԵՊՀ ռեկտորի հրամանով ձևավորած հանձնաժողովներով, իսկ տեղափոխություններին վերաբերող հարցերը քննարկվել են համապատասխան մանդատային հանձնաժողովներում:

Մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի վերահանձնման ընթացքում հնարավոր խախտումները կանխելու նպատակով սահմանված կարգով ձևավորվում են հանձնաժողովներ, որոնց կազմում ընդգրկվում են ամբիոնի վարիչը, դասընթացը վարող դասախոսը, դեկանը (դեկանի տեղակալը) և ուսումնամեթոդական վարչության ներկայացուցիչը՝ ըստ անհրաժեշտության:

Ամփոփիչ ատեստավորումների (ամփոփիչ քննություն, ավարտական աշխատանք, մագիստրոսական թեզի պաշտպանություն) թափանցիկության և հրապարակայնության ապահովման նպատակով շահագործվել են լսարաններում տեսաձայնագրող սարքերը, կատարելագործվել է տեսաձայնագրման որակը:

Մշտապես կատարելագործվել են մագիստրատուրայի առկա և հեռակա համակարգերի ընդունելության կարգերը:

Սովորողի փոխգործակցությունը համալսարանական տարբեր կրթական և կազմակերպական գործունեություն իրականացնող օղակների հետ ապահովելու նպատակով իրականացվել են «Ուսանող-համալսարան» վիրտուալ տիրույթի ստեղծման աշխատանքներ (համակարգի ստեղծման աշխատանքները շարունակվում են): Ապահովվել է նաև համալսարանական էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով ուսանողի մուտքը «Moodle» էլեկտրոնային ուսուցման համակարգի տիրույթ: ԵՊՀ ռեկտորի 2017 թ. հոկտեմբերի 25-ի 187Ֆ82 հրամանի համաձայն սահմանվել է, որ ԵՊՀ սովորողներին առնչվող հրամանները, դասացուցակները, ժամանակացույց-

ները, հայտարարությունները և այլ տեղեկատվություն ուղարկվելու է միայն համալսարանական փոստի միջոցով:

ԵՊՀ ուսումնամեթոդական վարչությունը հնարավոր խախտումները կանխելու և կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու նպատակով մշտապես իրականացրել է ստուգումներ ուսումնական գործընթացին առնչվող գործառույթների շրջանակներում:

- Կոռուպցիոն երևույթների նկատմամբ անհանդուրժողական մթնոլորտ, քարոզչական աշխատանքների իրականացում, տեղեկացվածության մակարդակի բարձրացում

Համալսարանական համակազմի իրավագիտակցության և իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով ակտիվորեն օգտագործվել են համալսարանի ինտերնետային ռեսուրսների հնարավորությունները:

Ուսանողների տեղեկացվածությունն ապահովելու նպատակով ԵՊՀ կայքում տեղադրվել են «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք» տեղեկատվական ձեռնարկները և՛ բակալավրիատի, և՛ մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգով սովորող ուսանողների համար (<http://ysu.am/education/hy>): Առաջին կուրսեցիների համար ստեղծվել և մշտապես թարմացվել է «Կրթություն հանուն ապագայի» առցանց ուղեցույցը (<http://1course.ysu.am/>):

Ստեղծվել և գործարկվել է ԵՊՀ պորտալի «Փաստաթղթեր» նոր կայքը (<http://doc.ysu.am>), որն ապահովում է ներհամալսարանական փաստաթղթերի հասանելիությունը: Մասնավորապես՝ առկա են տարբեր մակարդակների կառավարման մարմինների նիստերի արձանագրությունները, կանոնակարգերը, որոշումները, ստորաբաժանումների կանոնադրությունները, հաշվետվությունները, ռեկտորի հրամանները և մի շարք այլ փաստաթղթեր:

«Երևանի համալսարան» ամսաթերթում և պաշտոնական կայքում պարբերաբար հրապարակվել են կոռուպցիոն խնդիրների կանխարգելմանը, հակակոռուպցիոն ծրագրերի իրականացմանը վերաբերող նյութեր, ԵՊՀ ռեկտորատի ներկայացուցիչները պարբերաբար հանդիպումներ են ունեցել ուսանողների հետ և քննարկել վերոհիշյալ խնդիրները:

ԵՊՀ կայքի միջոցով իրականացվում է տեղեկատվության տրամադրման՝ առցանց հետադարձ կապի աշխատանք: Բոլոր անձինք ունեն առցանց հարց տալու հնարավորություն (կայքում գործում է «Հարց-պատասխան» բաժինը, որի միջոցով տարեկան ստացվել է միջինը շուրջ 1300 հարց-հաղորդագրություն, որոնց ԵՊՀ տարբեր ստորաբաժանումների օգնությամբ հնարավորինս սեղմ ժամկետներում տրվել են սպառիչ պատասխաններ): Հետադարձ կապ է ապահովվում նաև ԵՊՀ ֆեյսբուքյան էջի և էլեկտրոնային փոստի միջոցով:

Ուսումնասիրելով ԵԽ և ԵՄ աջակցությամբ իրականացված «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագրի համապատասխան արդյունքներն ու մեկնաբանությունները՝ ԵՊՀ-ում մշակվել է էթիկայի կանոնակարգի նախագիծ: Սակայն հաշվի առնելով կանոնակարգի ընդունման և կիրառության մեջ դնելու օրենսդրական հիմքերի ու իրավակարգավորումների անհրաժեշտությունը՝ էթիկայի կանոնակարգի ընդունումը հետաձգվել է մինչև «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ նոր օրենքի ընդունումը:

• *Ներքին իրավական ակտերի կատարելագործում*

2014 թ. «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը վերակազմակերպվեց հիմնադրամի, և հաստատվեց ԵՊՀ նոր կանոնադրությունը: Այս փոփոխությունները ենթադրում էին նաև ներքին մի շարք իրավական ակտերի վերանայում: Իրականացվել է ներքին իրավական ակտերի կիրառման արդյունավետության և բացահայտված թերությունների մոնիթորինգ, և մշակվել իրավական ակտերի վերանայման աշխատանքների ժամանակացույց:

ԵՊՀ գիտական խորհրդի 2015 թ. մարտի 26-ի նիստի որոշմամբ ընդունվել է «ԵՊՀ ներքին կարգապահական կանոնները» (նոր խմբագրությամբ), որով կանոնակարգվել են ԵՊՀ ներքին կարգապահությանն առնչվող մի շարք հարցեր: Նշված փաստաթղթի 63-րդ կետով խստացվել է ակադեմիական ազնվության վարքականոնների խախտման, մասնավորապես՝ քննությունների կամ ստուգարքների ընթացքում արտագրության դեպքում ուսանողների պատասխանատվությունը (ըստ հաստատված կանոնների՝ ուսանողը նման վարքագծի դեպքում հեռացվում է համալսարանից):

2015-2018 թթ. ընթացքում, համաձայն ժամանակացույցի, ԵՊՀ գիտական խորհրդի կողմից, ի թիվս սույն կատարողականում նշված ներքին իրավական ակտերի, հաստատվել են`

- ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը,
- ԵՊՀ-ի կողմից կազմակերպվող գիտաժողովներին դրամական աջակցություն սրամադրելու կարգը,
- Կրեդիտային համակարգով պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը,
- Երևանի պետական համալսարանում պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի կազմակերպման կանոնակարգը,
- ԵՊՀ ֆակուլտետի դեկանի ընտրության ընթացակարգը (նոր խմբագրությամբ),
- Երևանի պետական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգը (նոր խմբագրությամբ),
- Երևանի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման կարգում փոփոխություններ և լրացում կատարելու մասին որոշումը,
- ԵՊՀ վարչական պաշտոնների, ուսումնաօժանդակ և ինժեներատեխնիկական հաստիքների դասակարգման կանոնակարգը,
- ԵՊՀ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների կանոնակարգը (նոր խմբագրությամբ ընդունված փաստաթուղթ),
- ԵՊՀ աշխատողների օտարերկրյա գործուղումների ձևակերպման կանոնակարգը (նոր ընդունված փաստաթուղթ),
- ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ուսումնական բեռնվածության հաշվարկի նորմերը,
- ԵՊՀ մեթոդական խորհրդի կանոնակարգը (նոր խմբագրությամբ ընդունված փաստաթուղթ),

- ԵՊՀ ֆակուլտետի մեթոդական խորհրդի կանոնակարգը (նոր խմբագրությամբ ընդունված փաստաթուղթ),
- ԵՊՀ գիտական խորհրդի որակի ապահովման մշտական հանձնաժողովի աշխատակարգը (նոր խմբագրությամբ ընդունված փաստաթուղթ),
- ԵՊՀ ֆակուլտետի գիտական խորհրդի որակի ապահովման մշտական հանձնաժողովի աշխատակարգը (նոր խմբագրությամբ ընդունված փաստաթուղթ),
- Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ (նոր խմբագրությամբ ընդունված փաստաթուղթ),
- ԵՊՀ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը (նոր խմբագրությամբ ընդունված փաստաթուղթ),
- ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցման կարգը (նոր խմբագրությամբ ընդունված փաստաթուղթ),
- Համալսարանում կառավարման գործընթացի կատարելագործում

2016 թ. հաստատվել է ԵՊՀ վարչական պաշտոնների, ուսումնաօժանդակ և ինժեներատեխնիկական հաստիքների դասակարգման կանոնակարգը, որի նպատակն է ապահովել ԵՊՀ վարչական, ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական, արտադրական տարակարգերի աշխատողների կադրային ներուժի արդյունավետ կառավարումը: Կանոնակարգը սահմանում է ԵՊՀ վարչական պաշտոնների, ուսումնաօժանդակ և ինժեներատեխնիկական հաստիքների համակարգի ձևավորման սկզբունքները, վարչական պաշտոնների, ուսումնաօժանդակ և ինժեներատեխնիկական հաստիքների աստիճանակարգումը, վարչական պաշտոնների անձնագրերի և ուսումնաօժանդակ ու ինժեներատեխնիկական հաստիքների աշխատանքի նկարագրության հիմնական դրույթները, աշխատողների իրավասությունների շրջանակները, կանոնակարգում է սահմանված համակարգի կազմակերպման և բնականոն գործունեության ապահովման հետ առնչվող այլ գործընթացներ:

2017 թ. հունվարի 31-ին ռեկտորի հրամանով ստեղծվեց աշխատանքային խումբ՝ ԵՊՀ-ում մարդկային ռեսուրսների (ՄՌ) կառավարման հայեցակարգը մշակելու նպատակով: Այս խմբի աշխատանքների արդյունքում ԵՊՀ գիտխորհրդի 2017 թ. հուլիսի 6-ի նիստում հաստատվեց «ԵՊՀ մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի զարգացման հայեցակարգը»: Վերջինս սահմանում է ԵՊՀ-ում մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի բարեփոխումների տեսլականը, շեշտադրում է աշխատողների աշխատանքի ընդունման, խրախուսման ու կարգապահական տույժերի ենթարկելու, աշխատանքային պարտականությունները սահմանելու, աշխատանքի արդյունքները գնահատելու և ՄՌ կառավարման այլ խնդիրների վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները:

Համաձայն հաստատված հայեցակարգի՝ 2018 թ. ապրիլի 1-ից գործում է Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչությունը, որը կառուցվածքային ստորաբաժանումների հետ համատեղ մշակել է ԵՊՀ վարչական ստորաբաժանումների աշխատողների պաշտոնի անձնագրերը և ներկայացրել ԵՊՀ ռեկտորի հաստատմանը: Վարչական ստորաբաժանումների ավելի քան 90 տոկոսն ունեն հաստատված պաշտոնի անձնագրեր: Հաստատվել են նաև պրոֆեսորադասախոսական համակազմի (ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ, դասախոս), ուսումնաօժանդակ տարակարգի պաշտոնների (լաբորատորիայի վարիչ, ավագ լաբորանտ/լաբորանտ, ուսումնագիտական կաբինետի ավագ լաբորանտ/լաբորանտ, ամբիոնի գործավարության գծով ավագ լաբորանտ/լաբորանտ, ուսումնական վարպետ, դեկանատի օպերատոր, ամբիոնի պրեպարատոր) պաշտոնների անձնագրերը:

ԵՊՀ անձնակազմի խրախուսման և պարգևատրման գործընթացն առավել թափանցիկ դարձնելու նպատակով 2017/2018 ուսումնական տարվանից կիրառվում է «ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը»: Վերջինս ներառում է հստակ ձևակերպված և չափելի կետեր, որոնց համաձայն տրամադրվում են լրավճարներ՝ ծավալած համապատասխան գործունեության համար: Այս կարգը հստակ ուրվագծում է խրախուսման ենթակա աշխատանքների արդյունքները և նպաստում բոլորի համար թափանցիկ, կանխատեսելի և չափելի գործընթաց: Միաժամանակ, ամբողջապես շահագործվել է ԵՊՀ աշխատողների համացանցային ներքին տիրույթը (ինտրանետ համա-

կարգ), որի նպատակն է ավտոմատացնել և առավել արդյունավետ դարձնել ԵՊՀ տեղեկատվության փոխանակման հոսքերը, հաշվետվողականության գործընթացները, աջակցել ԵՊՀ միասնական տեղեկատվական համակարգի ձևավորմանը:

2016 թ. մայիսի 26-ին ԵՊՀ գիտական խորհուրդը հաստատել է ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի՝ կրեդիտային համակարգով որակավորման բարձրացման ծրագրի (2016-2021 թթ.) կազմակերպման կանոնակարգը: 2016 թ. սեպտեմբերի 29-ի ԵՊՀ գիտական խորհրդի նիստում ամփոփվել են ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական 5-ամյա ծրագրի (2011-2016 թթ.) արդյունքները: Այս ծրագրով որակավորման բարձրացում է անցել 867 դասախոս՝ կուտակելով 27.667 կրեդիտ:

ԵՊՀ ներքին իրավական ակտերի համաձայն իրականացվել են պաշտոնների տեղակալման կանոնակարգերով համապատասխան մրցույթների անցկացման, դրանցում սուբյեկտիվ գործոնների ազդեցության նվազեցման և մրցակցային գործընթացի խրախուսման աշխատանքներ: 2015-2018 թթ. ընթացքում հայտարարվել է դեկանների, պրոֆեսորադասախոսական և գիտական համակարգի պաշտոնների ավելի քան 520 մրցույթ: ԵՊՀ-ում թափուր աշխատատեղերի մրցույթի հայտարարությունները տարածվել են հնարավորինս լայն շրջանակներում՝ ԵՊՀ ինտերնետային պորտալում, հանրապետական մամուլում:

2015 թ. մայիսի 20-ին ԵՊՀ ռեկտորի և արհեստակցական կազմակերպության նախագահի կողմից ստորագրվել է ԵՊՀ նոր կոլեկտիվ պայմանագիրը: Գրեթե ամբողջովին վերանայվել է նախկին պայմանագիրը, մշակված նախագիծն ուղարկվել է ֆակուլտետներ և կառուցվածքային ստորաբաժանումներ՝ քննարկման: ԵՊՀ շուրջ 2.800 հիմնական աշխատողներից քննարկումներին մասնակցել են ավելի քան 2.000-ը, մասնակիցների ավելի քան 95 տոկոսը կողմ է քվեարկել պայմանագրի նախագծին:

Գնումների գործընթացը առավել արդյունավետ և կանոնակարգված դարձնելու նպատակով ստեղծվել է Գնումների, պլանավորման և պահեստավորման վարչություն: Հստակեցվել են օրենսդրությամբ սահմանված գնումների գործընթացին առնչվող նորմերի, համալսարանում գնումների իրականացման ընթացակարգի ու այդ համատեքստում ստորաբաժանումների կողմից պարտականությունների ճիշտ և ժամանակին կատարման պահանջները:

Ֆինանսական և նյութական ռեսուրսների կառավարման, ծրագրային ապահովման նպատակով արդիականացվել է «Հայկական ծրագրեր» ծրագրային փաթեթը, որը համատեղ շահագործվում է Հաշվապահության և Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչության կողմից: Համալսարանի ֆինանսական կառավարման հաշվետվողականությունն ու հրապարակայնությունը բարձրացնելու նպատակով բոլոր տարիների եկամուտների ու ծախսերի նախահաշիվն ու կատարողականները ներկայացվել են ԵՊՀ գիտխորհրդի քննարկմանը, ինչպես նաև ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի հաստատմանը: ԵՊՀ ֆինանսատնտեսական գործունեությունը յուրաքանչյուր տարի ենթարկվել է համապատասխան աուդիտի (բոլորը փաստաթղթերը հասանելի են ԵՊՀ պորտալի «Փաստաթղթեր» բաժնում):

2018 թ. հունիսից մեկնարկել են էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության «Mulberry» համակարգի ներդրման աշխատանքները: Համակարգի լիարժեք շահագործումը նախատեսված է 2019 թվականից:

- Աշխատողների աշխատավարձերի բարձրացում

2017/2018 ուստարվա սեպտեմբերի 1-ից ԵՊՀ պրոֆեսորադասախոսական համակազմի յուրաքանչյուր մեկ հաստիքի ամսական դրույքաչափը բարձրացվել է 10.000 ՀՀ դրամով: ԵՊՀ աշխատողների հիմնական ամսական աշխատավարձի չափը ևս 15 տոկոսով բարձրացվել է ընթացիկ ուստարվա սեպտեմբերի 1-ից:

ԵՊՀ-ն դեռևս 2017 թվականից շուրջ 2000 հիմնական աշխատողի համար ապահովագրական ընկերությունից մրցութային կարգով ձեռք էր բերել բժշկական ապահովագրության փաթեթ: 2018 թվականից ավելացվել է նաև պլանային վիրահատություններ կատարելու հնարավորությունը:

- Հակակոռուպցիոն միջոցառումներում ուսանողների մասնակցության իրականում

Ուսանողների ակտիվ մասնակցությունը հակակոռուպցիոն միջոցառումներին համարվում է առանցքային խնդիր ծրագրի արդյունավետության ապահովման համար:

Ուսանողական խորհրդի կողմից իրականացվող բազմաթիվ ծրագրերը («Ուսանողական հիմնախնդիրները ԵՊՀ-ում» սեմինար-դասընթացներ, «Ուսանողական ռեկտորատ», «ՈԻԽ զարգացման» դպրոց, «Ուսանողական ինքնակառավարում» համաժողով և այլն) միտված են բուհի գործունեության տարբեր հարցերի վերաբերյալ ուսանողների իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ու ներհամալսարանական կյանքին ուսանողների մասնակցության խթանմանը: Համալսարանի կառավարման գործընթացներում սովորողների մասնակցությունն ապահովվել է գործող կարգի (ՀՀ օրենսդրություն, ԵՊՀ կանոնադրություն, ներքին իրավական ակտեր) համաձայն՝ տարբեր մակարդակի կառավարման մարմիններում սովորողների ներկայացուցիչների ակտիվ ներգրավմամբ:

Ստեղծվել և շահագործվել է «Ուղիղ կապ ՈԻԽ-ի հետ» առցանց գործիքը (<http://ysu.am/studline/hy/home>):

Ուսանողական կազմակերպությունների (Ուսանողական խորհուրդ և Ուսանողական գիտական ընկերություն) կողմից պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ ռեկտորի և պրոռեկտորների հետ, որոնց ընթացքում պարզաբանվել են ուսանողներին հուզող մի շարք խնդիրներ:

- *Դասավանդում և ուսումնասիրություններ*

ԵՊՀ բոլոր ֆակուլտետներում բակալավրի կրթական ծրագրերում ներառված է «Իրավունքի հիմունքներ» պարտադիր դասընթացը: Դասընթացի նպատակն է սովորեցնել հասարակական կյանքի տարբեր ոլորտների իրավական-օրենսդրական կարգավորման հիմունքները, մշակել ստացած իրավական գիտելիքները գործնականում կիրառելու հմտություններ, ինչպես նաև ձևավորել իրավական աշխարհայացք ու մշակույթ: Դասընթացի հիմնական բաժիններից մեկը վերաբերում է կոռուպցիայի դեմ պայքարի իրավական հիմնահարցերին: Իրավագիտության ֆակուլտետում իրականացվող «Իրավունքի տեսություն, սահմանադրական իրավունք» մագիստրոսական կրթական ծրագրում ներառված է «Կոռուպցիայի դեմ պայքարի հիմնախնդիրները» կամընտրական դասընթացը:

Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի («Պետական ծառայության էթիկա», «Արտասահմանյան երկրների հակակոռուպցիոն քաղաքականության համեմատական վերլուծություն», «Հանրային կառավարման համակարգի ամբողջականություն (Public Integrity)»), ինչպես նաև Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մի շարք դասընթացներ («Հակակոռուպցիոն քաղաքականություն», «Հանրային ծառայություն և պետական կադրային քաղաքականություն») նախատեսված են դիտարկելու նաև կոռուպցիային վերաբերող խնդիրներ, ներկայացնելու հակակոռուպցիոն գործընթացների կազմակերպման և իրականացման մեխանիզմներ:

Իրավագիտության ֆակուլտետում իրականացվել են «կոռուպցիա» երևույթի և դրա կանխարգելմանն ուղղված ուսումնասիրություններ, կրթական ծրագրերում «Կրիմինալոգիա» և «Քրեական իրավունք» դասընթացների շրջանակում ներդրվել են կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված թեմատիկ քննարկումներ: Հաշվետու ժամանակաշրջանում այս փորձն ուսումնասիրվել է, և աշխատանքներ են տարվում այլ ֆակուլտետներում տարբեր կրթական ծրագրերի շրջանակում ներմուծելու կոռուպցիայի կանխարգելման խնդիրներին առնչվող թեմաներ:

- *Համագործակցություն տարբեր ծրագրերի շրջանակում*

ԵՊՀ ներկայացուցիչները հաշվետու ժամանակահատվածում պարբերաբար մասնակցել են հայաստանյան և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից կազմակերպված հակակոռուպցիոն սեմինար-քննարկումներին, ներկայացրել են ԵՊՀ-ում իրականացվող աշխատանքները:

2015 թ. մարտի 16-ին «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» և «Հանրային քաղաքականության ինստիտուտ» կազմակերպությունները Երևանի «Կոնգրես» հյուրանոցում ներկայացրել են իրենց կողմից իրականացված «ՀՀ 2015-2018 թթ. հակակոռուպցիոն ռազմավարության և միջոցառումների ծրագրերի» վերլուծությունը:

2015 թ. նոյեմբերի 27-ին Երևանի «Կոնգրես» հյուրանոցում տեղի է ունեցել «Կոռուպցիայի դեմ պայքարը և բարեվարքության արմատավորումը Հայաստանի կրթական ոլորտում» թեմայով համաժողով, որի նախաձեռնողները ՀՀ կրթության և գիտու-

թյան նախարարությունն ու «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» կազմակերպությունն էին: Համալսարանականները ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյանի գլխավորությամբ մասնակցել են համաժողովի պլենար նիստերին և խմբային աշխատանքներին:

Եվրոպայի խորհրդի, Եվրոպական միության և ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից իրականացվող «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդման և կոռուպցիայի դեմ պայքարի ծրագրի» շրջանակներում 2015 թ. նոյեմբերի 16-17-ը ԵՊՀ 5 ներկայացուցիչներ մասնակցել են Ծաղկաձորում կազմակերպված կոնֆերանսին: Ծրագրի շրջանակներում տեղի են ունեցել մի շարք հանդիպումներ, քննարկումներ, դասընթացներ, սեմինարներ, մասնավորապես՝

- «Էթիկայի կանոնագրքի մշակումը բուհերում. միջազգային փորձ և պրակտիկ հմտություններ» դասընթաց (2017 թ. մայիսի 10-11, Երևան),
- Ուսումնական ծրագրերի մշակման և ուսանողների գնահատման հաշվետվողականության և թափանցիկության գործիքակազմին նվիրված աշխատաժողով (2017 թ. հունիսի 19-20, Երևան),
- Առցանց հաշվետվությունների հարթակի իրականացմանը նվիրված սեմինար (2017 թ. սեպտեմբերի 27-28, Երևան),
- Բուհերի մարդկային ռեսուրսների կառավարման (ՄՌԿ) թափանցիկության և հաշվետվողականության խթանման աշխատաժողով (2017 թ. հոկտեմբերի 26-27, Երևան),
- «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագրի արդյունքների ամփոփիչ համաժողով (2017 թ. նոյեմբերի 30, Երևան):

«Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագրի հետ համագործակցության շրջանակներում 2017 թ. հունիսի 14-ին տեղի է ունեցել ԵՊՀ հակակոռուպցիոն միջոցառումները համակարգող հանձնաժողովի ընդլայնված նիստ, որի ընթացքում ծրագրի համակարգողների և փորձագետների մասնակցությամբ քննարկվել են բուհերում էթիկայի կանոնակարգերի ներդրման խնդիրները:

- Ուսանողների հետ հետադարձ կապի ապահովում


ԵՊՀ հակակոռուպցիոն ծրագրով նախատեսված են նաև ներհամալսարանական տարբեր գործընթացների մշտադիտարկում և կոռուպցիոն ռիսկերին առնչվող խնդիրների վերաբերյալ ուսանողների հետ հետադարձ կապի ապահովում:

Ուսումնական տարվա ընթացքում յուրաքանչյուր կիսամյակի ավարտին իրականացվել են ԵՊՀ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումներ (ուսուցմանն առնչվող տարբեր ասպեկտներից բավարարվածության գնահատում):


Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ իրականացվող ուսանողական հարցումների հարցաթերթի տեղեկատվական հատվածը պարունակել է կոռուպցիոն դրսևորումներին վերաբերող 2 հարց (դրամի դիմաց գնահատական ստանալու և հարկադրված մասնավոր պարապմունքների մասին): Հարցաթերթի տեղեկատվական հատվածի արդյունքներն ամփոփվել և տրամադրվել են ֆակուլտետներին՝ ամբիոններում քննարկելու համար: (Հավելվածի թիվ 1 ներդիրում ներկայացված են 2017/2018 ուստարվա 1-ին և 2-րդ կիսամյակների հարցումների արդյունքները):

Առկա ուսուցման համակարգում 2017/2018 ուստարվա 1-ին կիսամյակի վերաբերյալ հարցմանը մասնակցած ուսանողների 0.6 %-ը դրական է պատասխանել դրամի դիմաց գնահատական կամ ստուգարք ստանալու հարցին (2014/2015 ուստարվա 1-ին կիսամյակում նույն ցուցանիշը կազմել է 1.8 %), իսկ մասնավոր պարապմունքների համար հարկադրված վճարելու հարցին դրական է պատասխանել 1.36 %-ը (2014/2015 ուստարվա 1-ին կիսամյակում՝ 2.6 %-ը): 2-րդ կիսամյակի վերաբերյալ հարցմանը մասնակցած ուսանողներից վերոհիշյալ հարցերին դրական են պատասխանել համապատասխանաբար 0.63 %-ը և 1.58 %-ը (2014/2015 ուստարվա 2-րդ կիսամյակում՝ 2.2 %-ը և 2.8 %-ը): Ի դեպ, հարկ է նշել, որ տվյալ ցուցանիշները բակալավրիատի և մագիստրատուրայի համակարգերում արմատապես տարբերվում են: Այսպիսով, 2017/2018 ուստարվա 1-ին կիսամյակի վերաբերյալ հարցմանը մասնակցած բակալավրիատի ուսանողների շրջանում դրամի դիմաց գնահատական կամ ստուգարք ստանալու հարցին դրական է պատասխանել 0.7 %-ը, մասնավոր պար-

րապմունքների համար հարկադրված վճարելու հարցին՝ 1.76 %-ը, իսկ մագիստրատուրայում այս երկու հարցերին դրական պատասխան ոչ մի ուսանող չի տվել:




Գծապատկեր 1. «Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական» հարցի պատասխանը (ըստ կրթական ծրագրերի և ուստարիների կիսամյակների):




Գծապատկեր 2. «Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական ստանալու նպատակով» հարցի պատասխանը (ըստ կրթական ծրագրերի և ուստարիների կիսամյակների):

Միաժամանակ, յուրաքանչյուր տարի իրականացվել են նաև ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումներ: Այդ հարցումներն ընդգրկում են ողջ ուսումնառության ընթացքը (Հավելվածի թիվ 2 ներդիրում ներկայացված են 2017/2018 ուստարվա շրջանավարտների հարցումների արդյունքները):

Դրամի դիմաց գնահատական ստանալու մասին հարցին դրական են պատասխանել հարցմանը մասնակցած բակալավրիատի շրջանավարտների շուրջ 1.6 %-ը, իսկ մագիստրատուրայի՝ 1.54 %-ը (2014/2015 ուստարում՝ 2.9 % և 1.1 % համապատասխանաբար), հարկադրված մասնավոր պարապմունքների համար վճարելու մասին հարցին՝ բակալավրիատի շրջանավարտների 3.17 %-ը և մագիստրատուրայի՝ 1,34 %-ը (2014/2015 ուստարում՝ 4.3 % և 1.3 % համապատասխանաբար):



Գծապատկեր 3. «Արդյո՞ք ուսումնառության ընթացքում դրամի դիմաց ստացել էք գնահատական» հարցի շրջանավարտների պատասխանը (ըստ կրթական ծրագրերի և տարիների):



Գծապատկեր 4. «Արդյո՞ք ուսումնառության ընթացքում հարկադրված էք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական ստանալու նպատակով» հարցի շրջանավարտների պատասխանը (ըստ կրթական ծրագրերի և տարիների):

2015-2018 թթ. ընթացքում իրականացված հարցումների արդյունքների ընդհանուր դինամիկան ներկայացված է գծապատկեր 1-ում, 2-ում, 3-ում և 4-ում:

Սահմանված կարգի համաձայն՝ ուսանողների և շրջանավարտների հարցումների արդյունքները քննարկվել են ԵՊՀ գիտական խորհրդում և ֆակուլտետներում: Միաժամանակ հարկ է նշել, որ նպատակ ունենալով բարձրացնելու ուսանողական հարցումների արդյունավետությունը՝ մշակվել և ներդրվել է ուսանողական հարցումների իրականացման էլեկտրոնային (ինտերնետային) գործիք, որը, ապահովելով հարցումների անանուն լինելու հանգամանքը, միաժամանակ կարող է ավելի դյուրին դարձնել հարցմանը մասնակցելու և արդյունքները ամփոփելու բուն գործընթացը:

- Շրագրի իրականացման թերացումներն ու բացթողումները
- Էթիկայի կանոնակարգը և շահերի բախման երևույթի չեզոքացմանն ուղղված իրավական ակտերը դեռևս չեն ընդունվել, ինչպես նաև վերոհիշյալ խնդիրների վերաբերյալ դասախոսների վերապատրաստման ծրագրեր չեն իրականացվել: Գործընթացի ուշացումը պայմանավորված է անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններով:
- Գրագոհության դեմ պայքարի մեխանիզմները դեռևս արդյունավետ չեն գործում: Խնդիրը պայմանավորված է էթիկայի և այլ կանոնակարգերի և համապատասխան ծրագրային միջոցների ներդրմամբ:

Հավելվածի ներդիր 1.

**Երևանի պետական համալսարան
Ուսանողական հարցման «Տեղեկատվական հատված»-ի արդյունքներ
2017/2018 ուստարի, 1-ին կիսամյակ**

Առկա ուսուցում

Հարցմանը մասնակցել է 6788 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական	41	6305	6341
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական ստանալու նպատակով	86	6256	6342

Բակալավրիատ

Հարցմանը մասնակցել է 5650 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական	38	5194	5232
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական ստանալու նպատակով	83	5146	5239

Մագիստրատուրա

Հարցմանը մասնակցել է 1138 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական	3	1111	1114
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական ստանալու նպատակով	3	1110	1113

Բակալավրիատ

1-ին կուրս

Հարցմանը մասնակցել է 1413 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական	11	1303	1314
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական ստանալու նպատակով	27	1282	1309

2-րդ կուրս

Հարցմանը մասնակցել է 1445 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական	15	1273	1288
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական ստանալու նպատակով	27	1256	1283

3-րդ կուրս

Հարցմանը մասնակցել է 1415 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական	8	1305	1313
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական ստանալու նպատակով	18	1299	1317

4-րդ կուրս

Հարցմանը մասնակցել է 1377 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական	4	1313	1317
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական ստանալու նպատակով	11	1309	1320

Մագիստրատուրա

1-ին կուրս

Հարցմանը մասնակցել է 595 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական	1	583	584
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական ստանալու նպատակով	1	580	581

2-րդ կուրս

Հարցմանը մասնակցել է 543 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական	2	528	530
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական ստանալու նպատակով	2	530	532

2017/2018 ուստարի, 2-րդ կիսամյակ

Հարցմանը մասնակցել է 4788 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական	28	4409	4437
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական ստանալու նպատակով	70	4362	4432

Բակալավրիատ

Հարցմանը մասնակցել է 4317 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական	28	3950	3978
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական ստանալու նպատակով	70	3907	3977

Մագիստրատուրա

Հարցմանը մասնակցել է 471 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական	0	459	459
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական ստանալու նպատակով	0	455	455

Բակալավրիատ

1-ին կուրս

Հարցմանը մասնակցել է 1124 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական	14	1008	1022
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական ստանալու նպատակով	30	987	1017

2-րդ կուրս

Հարցմանը մասնակցել է 1072 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական	4	962	966
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական ստանալու նպատակով	16	951	967

3-րդ կուրս

Հարցմանը մասնակցել է 1047 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական	2	954	956
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական ստանալու նպատակով	14	940	954

4-րդ կուրս

Հարցմանը մասնակցել է 1074 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական	8	1026	1034
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական ստանալու նպատակով	10	1029	1039

Մագիստրատուրա

1-ին կուրս

Հարցմանը մասնակցել է 437 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական	0	426	426
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական ստանալու նպատակով	0	422	422

Հավելվածի ներդիր 2.

**Երևանի պետական համալսարան
Կոռուպցիայի դրսևորումների վերաբերյալ
շրջանավարտների հարցման արդյունքներ
2018 թ.**

Բակալավրիատ

Հարցմանը մասնակցել է 2680 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք ուսումնառության ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական	42	2561	2603
Արդյո՞ք ուսումնառության ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական ստանալու նպատակով	82	2507	2587

Մագիստրատուրա

Հարցմանը մասնակցել է 990 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք ուսումնառության ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական	15	956	971
Արդյո՞ք ուսումնառության ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական ստանալու նպատակով	13	954	967